


ԷՂԱՐԻԱԾԻՆ



ԺԲ
1999

ԾԵ ՏԱՐԻ

Է. ԶՄԻՒԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՄԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԱՐՈՂՈՅ

Ս. Է. ԶՄԻՒԾԻՆԻ

ԴԵԿԱՆԱՑԵՑ

1999

ՀՐԱՄԱՆ

S. S. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՂԻ

Վեհափոխ եւ սրբազնագույն
ԿԱԹՈԼԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ



19819-213

1998

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԽՏԸ ՄԱՀՏՈՅԻ ՇԻՐՄԻ,

Նոյեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի իր անդրանիկ ուխտազնացությունը կարարեց Օշական՝ Հայոց Մեծ ուսուցչապետ Ա. Մեսրոպ Մաշտոցի շիռմին:

Ս. Մեսրոպ Մաշկոց Եկեղեցու բակում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Արագածոտնին թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, բազմաթիվ օշականցիներ, զյուտի մանուկներն ու դպրոցականները, որոնք Եկեղեցին էին սպանալու Վեհափառ Հայրապետի օրինությունը:

Ողջունելով և իր օրինությունը բաշխելով զյուղի երեխաներին, Վեհափառ Հայրապետը պարզաբնաց նրանց սրբորեն պահպանել մաշվոցյան լեզուն, առաջնորդվել դեպի հարավնություն գրանոր մաշվոցյան ողովու մեծ ուսուցիչ պարզեած «հոգու և մոքի աչքերով»:

Վեհափառ հայրապետն այցելեց նաև Եկեղեցուն կից Ս. Մեսրոպ Մաշ-
փող դպրագմուն, որպես գրառումների մաքյանում թողեց հայրապետական
իր մատթանքը. «Թող մաշփոցյան օրինության առագարքուխ առբյուր լինի
մեր ժողովրդի համար այս դպրագմունը»:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԿԹՈՒԻ

ՀՈԳԵՆԱԳԱՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԻ ՄԱԴՎԱՆ ՔԱՌԱՋՈՒՆՔԻ ԱՌԻԹՈՎ

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախազահությամբ դեկտեմբերի 5-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մակուցվեց Ս. Պատարագ, հավարար որի կարարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ հոգեպետքերի 27-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում գլուխ ունեցած ոճագրքության ժամանակ զոհված պետական այրերի մահվան բառասունքի առիթով:



Մայր Տաճարում հոգեհանգստյան արարողության ընթացքում

«Նրանք մեզ հետ չեն: Նրանք չկան, բայց թողեցին մեզ մի երազ՝ շեն, քարգավաճ, հզոր հայրենիք կերպելու: Նրանք մեզ հետ չեն, բայց

Առաջնահամար պատճենաբանությունը կազմակերպվել է ՀՀ Կառավարության կողմէ



թողեցին պարզամ. մահ իմացյա՝ անմահություն։ Արդ, սիրելի բարեկամներ, եկեք սիրով միաբան, անդավաճան նահապակների հիշապակին, համախմբվենք նրանց թողած երազների ու պարզամների շուրջ՝ կերպելու մեր ժողովրդի երազների հայրենիքը, ապահովելու մեր հայոց երկրին խաղաղ, անվրդով երկինք, երջանիկ ու ապահով կյանք»,-
Ս. Հոգու միսիթարությունը հայցելով զոհվածների ընթանիքներին ու բարեկամներին, ասաց Վեհափառ Հայրապետը:

Օրվա պարարագիչն ու բարողիչն եք Գերշ. Տ. Շահե արքևսկ. Աճեմյանը:
Սրբազն արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռուբեն Քոչարյանը,
վարչապետ Վրամ Սարգսյանը, ԱԺ նախագահ Արմեն Խաչադրյանը,
Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Նարությունյանը, կա-
ռավարության անդամներ, գոկվածների հարազարդներ:

ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹ-ՈՒԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԻՐ ՀԱՐԳԱՎԱՐԻ ՏՈՒՐՔԸ ՄԱՏՈՒՅԵՅ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՒԵՐԻ ԴԻՇԱՏԱԿԻՆ

Դեկտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդամների այցը Սպիտակ և Գյումրի հարգանքի վորք էր 1988 թ. աղեղայի երկրաշարժի հազարավոր զոհերի հիշապակին:

Վաղ առավորյան Վեհափառ Հայրապետը, Կանադայի թեմի առաջնորդ Տ. Խովնան արքեպոս. Տերքերյանի և Արարարյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպոս. Կճյանի ուղեկցությամբ, ուղենորվեց Սպիտակ: Այսիդո էր նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչագրյանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ԱԺ նախագահը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Մելքոնի եպոս. Չուջյանի և Լոռու մարզական Ներքին Քոչինյանի ուղեկցությամբ, առաջնորդվեցին Սպիտակի Ա. Հարություն նորակառույց եկեղեցի: Ա. Հարությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նվերն է աղեղայի սպիտակցիներին, որ կառուցվել է երկրաշարժից հետո՝ խորհրդային գարիներին հիմնովին ավելաված Ա. Ասպամածին եկեղեցու գեղում: Նորակառույց եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ գեղի ունեցակ հոգեհանգարյան արարողություն: «Որպես նորընդիմ Կաթողիկոս եկել ենք Մեր հարգանքի վորքը մարուցելու զոհվածների հիշապակին և աղոթք բարձրացնելու առ Ասրբած, որպեսզի Տերը իր ողորմածությամբ խնայի մեր ժողովրդին և ապեսեցի խաղաղ ու արեղծազործ կյանքով», - իր օրինությունը բաշխելով սպիտակցիներին, ասաց Նորին Սրբությունը: Ապա Վեհափառ Հայրապետն ու ԱԺ նախագահը ծաղկեասակներ գերեղեցին անմեղ զոհերի հուշարձանին: Սպիտակում Վեհափառ Հայրապետն իր հարգանքի վորքը մարուցեց նաև Սպիտակի նախկին քաղաքապետ նորոց հանգույցալ Սուրեն Ավելիսի հիշապակին՝ այցելելով երա շիրմին և հոգեհանգստյան կարգ կարարելով:

Սպիտակից Վեհափառ Հայրապետն ուղեկցվեց Գյումրի՝ այս անգամ իր գորակցությունն ու օրինության խոսքը հայրնելու աղեղայի գյումրեցիներին:

Վեհափառ Հայրապետին ու Գյումրի այցելած ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ղիմավորեցին Շիրակի մարզպետ Ֆեկիս Փիրումյանը, քաղաքային իշխանության բարձրաստիճան պաշտոնյաներ, Շիրակի թեմի հոգևորականաց դասը՝ S. Փառեն ծ. Վրդ. Ավետիքյանի գլխավորությամբ:

Գյումրիի Շիրակ գերեզմանաբանը, որ հանջում են երկրաշարժից զոհված զյումրեցիները, Վեհափառ Հայրապետին ու ՀՀ նախագահը ծաղկե-



Գյումրիի գերեզմանաբանը

պատկեր դրեցին խաչքար-հուշարձանին: Ապա Վեհափառ Հայրապետին ու հոգևոր դասը հոգեհանգստյան աղոթք ասացին զոհերի հիշարտակին: Գերեզմանաբանից Նորին Սրբությունն ու Հանրապետության նախագահն ուղևորվեցին դեպի U. Աստվածածին /Յոթ Վերք/ Եկեղեցի, որ մարուցվում էր U. Պատրարքաց՝ նվիրված երկրաշարժի զոհերի հիշարտակին:

Հավարս սրբազն արարողության Ամսնայն Հայոց Կաթողիկոսը հավարով զորանալու և միաբանվելու հորդորով դիմեց ներկա հավաքացյալներին:

«Տասնմեկ փարիներ են անցել: Սակայն ամոքված չեն ձեր հոգու վերքերը և պիտի շարունակեն ցավ պաֆառել դրանք, քանի դեռ վերացված չեն հետքանքները ահավոր երկրաշարժի: Մենք հավաքում ենք. մեր ապավինությունը Ասրբած է, մեր հայրենի պետությունը և մեր ժողովուրդը, որոնք միասնական ջանքերի շնորհիվ պիտի կարողանան շենացնել երկիրը մեր, զորացնել հայրենի գունը, պիտի կարողանան ուրախությունը և բերկրանքը վերաբին վերադարձնել զյումբեցուն և աղեփի գոլու ողջ բնակչությանը, քանզի մենք ունենք ավելարանական պարզամք, թե՝ «Միայն հավաքա և կեցցես»:

Մենք պետք ենք գիրակցենք, որ այս դրունը կառուցողը, շենացնողն ու զորացնողը մենք ենք՝ որպես ազգ, որպես Եկեղեցի և որպես պետություն: Ուրեմն, սիրելիներ, այդ գիրակցությամբ միաբանվենք, այդ գիրակցությամբ դառնանք մեկ ողի, մեկ կամք, մեկ բռունք՝ մեր ժողովուրդին առաջնորդելու հաղթանակից հաղթանակ, դեպի պայծառ ապագա», -ասաց Վեհափառ Հայրապետը:

Վերադարձին Վեհափառ Հայրապետն այցելեց Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի, ծանոթացավ վերանորոգման աշխարհանքներին:

ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹ-ՈՒԻ

ՀՀ ՆԱԽԱԳԱԾՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ Ս. ԷՇՄԻԱԾԻՆ

Դեկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էշմիածին այցելեց ՀՀ նախագահ Ողբերդ Քոչարյանը: Հանրապետության նախագահը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր ափսոսանքը հայրնեց հոկտեմբերի 27-ի ողբերգական դեպքերի պարճառով փոքր-ինչ ուշացած այցի համար:

Հանդիպման նպատակն էր՝ Վեհափառ Հայրապետի հետ քննարկել Եկեղեցի-պետություն հարաբերություններին առնչվող հարցեր, որոնք կարևոր են ունեն երկրում բազմաթիվ ներքին խնդիրների լուծման, ինչպես նաև Հայրենիք-Սվյուտք հարաբերությունների սերպացման գործում:

Վեհափառ Հայրապետն իր մրահոգությունը հայրնեց հիշյալ դեպքերից հետո ներքաղաքական լյանքում առկա որոշ անհանգստությունների առնչությամբ՝ հայցելով Տիրոջ օգնականությունը երկիրը խաղաղության մեջ պահելու համար: Միաժամանակ՝ Վեհափառ Հայրապետը հաջողություն մաղթեց հանրապետության նախագահին՝ հայրենի երկրի կայունության պահպանման ու վարկի բարձրացմանն ուղղված ջանքերում: Նորին Սրբությունը վերաբին իր գորակցությունը հայրնեց հանրապետության նախագահին ու պետությանը:

Իր հերթին այն, Քոչարյանը շեշտեց Եկեղեցու կարևոր դերն ու նրա ակտիվիվ մասնակցությունը երկրում բարոյա-հոգեբանական առողջ մթնոլորդի ձևավորման ասպարեզում:

Ապա Ամենայն Հայոց կաթողիկոսն ու ՀՀ նախագահն ունեցան առանձնապրոյց:

ՀՅ ՎԱՐՉԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ- Ա. ԷՇԽԻԱԾԻՆ

Դեկտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Արմեն Սարգսյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ վարչապետը
քննարկեցին Եկեղեցի-պետրություն հարաբերություններին առնվազող հարցեր:

Հանրապետության վարչապետին ուղեկցում էին ՌԱ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Շահեն Կարամանուկյանը և ՌԱ Կրոնի գործերի պետքան խորհրդի նախագահի պաշտոնակարգար Լևոն Մկրտչյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՇՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՅ ՍԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՎԱ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էշմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին ԲԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Սահմանադրական դատարանի անդամներին՝ դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ:

Ծնորհավորելով Վեհափառ Հայրապետին, պր. Հարությունյանը համոզվածություն հայդնեց, որ Նորին Սրբության ընքրությամբ Հայ Առաքելական Եկեղեցին կշարունակի կարարել իր սրբազն առաքելությունը: Նա միաժամանակ հավասարեց Սահմանադրական դատարանի՝ որպես օրենքի մարմնի աջակցությունը Վեհափառ Հայրապետին ու Եկեղեցուն:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց Հայ Եկեղեցու առջև ծառացած ներկայիս խնդիրներն ու հրամայականները: «Եկեղեցին վերադարձնել հայ գուն, հայ օջախ, հայ հոգուց ներս.- սա է մեր Եկեղեցու ներկայիս առաքելությունը», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ վստահությամբ, որ այդ առաքելության մեջ Մայր Աթոռն ունենալու է Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր նվիրապերական Աթոռների աջակցությունն ու զորակցությունը:

ՄԱՅՐ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՆՇՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ Ս. ԷՇՄԻՎԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում դեղի ոնեցավ Հայաստանի ու Արցախի թեմակալ առաջնորդների և ՀՀ քարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանի գլխավորությամբ Մայր Աթոռ այցելած Հայաստանի մարզպետների համույթում:

Ողջունելով բոլոր հրավիրյալներին, Վեհափառ Հայրապետը կարևորեց հասարակական կյանքի կազմակերպման ու զանազան սոցիալական խնդիրների լուծման ասպարեզում Եկեղեցի-պետություն համագործակցությունը, որի լավագույն գրավականը, հանդիպման մասնակիցների համոզմամբ, կարող է դառնալ հոգևոր և աշխարհիկ այրերի համարեղ աշխարանքը:

Մորենում է հորեւյանական 2000 թվականը և, որպես համագործակցության առաջին քայլ, որոշվեց մշակել համարեղ ծրագրեր՝ Ամանորն ու Քրիստոն Սուրբ Ծնունդը Հայաստանում մեծ շոբով դիմավորելու համար: Այս կապակցությամբ քրվեցին հանձնարարականներ մարզպետներին և թեմակալ առաջնորդներին, որոնք իրենց միասնական ծրագրերը կներկայացնեն գաղաքար օր անց՝ հաջորդ ժողովի հասպարմանը:

Հանդիպման ընթացքում առաջնորդներն անդրադասն նաև Հայաստանում աղանդների քարածման խնդրին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի համոզմամբ Եկեղեցու գորացումն ու մասուկ սերնդի հայեցի դաստիարակությունը ինքնին պայքար է աղանդավորության դեմ: Կիսելով հոգևոր այրերի մրահողությունները, մարզպետները պարտասպասամություն հայրենիցին գորակից լինել Եկեղեցուն կրթադաստիարակչական գործունեության մեջ:



ՎԵՆԿՈՎԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՆԴՐՈՒՐՄԻՑ ՀԵՏՈ
ՎԵՆԿՈՎԱՆ ՄՈՒՏՏՔԻՆ

Խոսրով Հարությունյանը չափազանց կարևոր համարեց այս հանդիպում՝ նշելով, որ այն նոր լիցք է հաղորդում Եկեղեցի-պետություն համագործակցությանը: Նրա կարծիքով, առաջին անգամ կազմակերպված այս հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ կուրակված բազմաթիվ խնդիրներ իրավես համարեղ լուծման կարիք ունեն:

Իրենց գոհունակությունը հայրնելով հանդիպման արդյունքներից, մասնակիցները ցանկություն հայրնեցին նմանադիպ հանդիպումները դարձնել պարբերական՝ առավել ընդարձակ ծրագրերի բնարկումներով:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայրնեց մարզպետներին՝ իրավերին արձագանքելու և Հայ Եկեղեցու նկարմամբ նախանձախնդիր լինելու համար:



Դեկտեմբերի 14-ին Մայր Այրո Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ վարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանի մասնակցությամբ, փեղի ունեցավ Հայաստանի թեմակալ առաջնորդների և Հայաստանի մարզպետների երկրորդ հանդիպումը:

Դեկտեմբերի սկզբին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, այս անգամ Հայաստանի հոգևոր և պետական այրերը Վեհափառ Հայրապետի և պր. Հարությունյանի ուշադրությանը ներկայացրին Ամանորի ու Ս. Շննդյան գոնակապարությունների համարեղ մշակված իրենց ծրագրերը:

Տոնական օրերին հայաստանյան թեմների և մարզային իշխանությունների միասնական ջանքերով մշակութային հանդեսներ ու գոնախամբություններ կկազմակերպվեն Հայաստանի մեծ և փոքր բազմաթիվ բնակավայրերում, ամանորյա նվերներ և հոգևոր գրականություն կարանան հազարավոր մասուկներ: Ուշադրության կենրունում կիխնեն նաև գինվորական հոսպիտալները, հիվանդանոցները, ծերանոցներն ու մանկապարտեզները:

Ամանորյա հանդիսաւթյուններն ամբողջանալով, իրենց բարձրակետին կհասնեն հունվարի 5-ին և 6-ին, եթե Հայ Առաքելական Եկեղեցին և հայոց ուղղությունը է Ս. Ծինուն ու Վասրուածահայությունը:

Հավանություն փայլվ ներկայացված ծրագրերին, Վեհափառ Հայրապետությունը ու Խոսրով Հարությունյանը նշնչին, որ գոռնական ծրագրերի համար իրազործումը Եկեղեցի-պետքանիշան լավագույն վկայականը կարող է հանդիսանալ:

ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹ-ՈՒՒԻ

ՀՈԳԵՇԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՆԱՓԱՌԻ ՆՈՐ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ԱՌՋԵՎ

Հոկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարդ առավորյան ժամերգության, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապարհիվ Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանի նախագահությամբ և Երուսաղեմի ու Թուրքիո Հայոց Պատրիարքներ Ամենապարհիվ Տ. Թորգոն արքեպոս. Մանուկյանի և Ամենապարհիվ Տ. Մեսրոպ արքեպոս. Մութաֆյանի ընթերակայությամբ, գեղի ունեցավ հոգեհանգարյան մասնավոր պաշտոն Ամենայն Հայոց երջանկահիշարժակ Գարեգին Ա Կաթողիկոսի նոր գեղադրված դասպանաբարի առջև։

«Եր թող այս շիրմաքարը դառնա ուխտագեղի հավաքավոր հայ ժողովրդի համար», - դիմելով թոլոր ներկաներին ասաց Տեղապահ Սրբազնը։

Սայիդակ մարմարյա դասպանաքարի վրա փորագրված են հանգույցալ Վեհափառ Հայրապետի անունը, ծննդյան ու մահվան թվականները և Վեհափառ Հայրապետի սիրած խոսքերից՝ «Մարդ է որ գործէ զերկիր»։

Արարողությանը ներկա էին Սրբազն և Հոգեշնորհ Հայրեր, բազմաթիվ հավաքացյալներ։

ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱՅՈՂԻԿՈՍԻ
ՇԽՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՒԹԸ
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐՄԱՆ ՍԱՐԳԻՍԻՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը շնորհավորական հեռագիր է հղել ՀՀ նորանշանակ վարչապետ Արամ Սարգսյանին:

Հեռագրում մասնավորապես ասվում է. «Դավատում ենք, որ Աստծու օգնականությամբ և մեր ժողովրդի զորակցությամբ Դայաստանի Դանրապետության կառավարությունը կարծանագրի որոշիչ և անբեկանելի ծեռքբերումներ հայրենական մեր կյանքի բոլոր բնագավառներում»:

Θινη Σήτηνος ορθονομερία, έργονα σε πολλές γλώσσες, ήταν το μεγάλο αποτέλεσμα της επαναστατικής περιόδου.

Ապօպերատ և հայոցագով ունի պատճենաբար պարզութեա բարերար և առհմանական մասնակի ու նույնական ՄԱՍԱՆ ԿԻՎԱՆ ՄԱՅՐ ԱՌՈՈՒ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՒՄ
ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՇԱԳԻՐԸ ՄԵՐԳԵՅ ԲԱԴԱՅԱՆԻ
ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական հեռագիր է հղել Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր, կոմունիստական կուսակցության ղեկավար Սերգեյ Բադալյանի անսպասելի և անժամանակ մահվան առիթով՝ իր Վշտակցությունը հայտնելով հանգուցյալի սգակիր հարազատներին ու մերձավորներին:

Նեռագրում մասնավորապես ասվում է. «Կարճատև իր կյանքը Սերգեյ Բաղալյանն ապրեց որպես ազնիվ մտավորական՝ մտահոգ իր Դայրենիցից ու ժողովրդի ներկա հոգսերով, որպես կորովաշատ գործիչ՝ հանուն Դայաստանի բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության ու ապահով գալիքի»:



**ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ
ՀԱՅ ԱՌԱՐԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՋԵՄԵՐՈՒԽՄ ԵՎ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՇՄԻԱԾՆՈՒՄ**

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին ԲԱՅԵՆԱՅԻ Քայլոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ, որի ընթացքում Նորին Սրբությունը հրապարակեց հայրապետական տնօրինությունները Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարված փոփոխությունների և նոր նշանակումների մասին:

Հայրապետական բարձր տնօրինությամբ.

1. Գերշ. Տ. Աթոռես արքեպոս. Պողապայյամը նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական մարմնի պատասխանատու՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետի պարտականություններից:

2. Գերշ. Տ. Եղիշիկ եպս. Պետրոսյանը նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու՝ ազատվելով Հարավային Ուլսաստանի թեմի առաջնորդի պարտականություններից:

3. Գերշ. Տ. Խավասարդ եպս. Կճոյանը նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ՝ ազատվելով Արագածոտնի թեմի առաջնորդի պարտականություններից:

4. Հոգշ. Տ. Փառեն ծ. Վրդ. Ավետիքյանը նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների պատասխանատու՝ ազատվելով Շիրակի թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնից:

5. Դոգ. Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր նախկին պարտականություններից:

6. Դոգ. Տ. Վազգեն վրդ. Միրզախսանյանը նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի վարիչ-տնօրինի պաշտոնից:

7. Դոգչ. Տ. Մովսես Վրդ. Մովսիսյանը նշանակվել է Հարավային Ուստաստանի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Ս. Յիհվակի մանրի մանահող պարտականություններից:

Հայրապետական մեկ այլ հրամանով Արարատյան Հայրապետական թեմի Սևանի Կազգենյան դպրանոցը և Երևանում գործող Հայորդյաց տներն անցնում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորության և Ենթակայության տակ: Հայորդյաց տների հոգևոր տեսուչ է Աշանակվել Հոգէ. S. Թորգոմ աբեղա Տոնիկյանը: Վազգենյան դպրանոցի տեսչի պաշտոնը Կշառունակի Վարել Արժանապատիվ S. Սինաս թիմ. Մարտիրոսյանը:

Նոյն կերպ դեկտեմբերի 10-ից Մայր Արոռ Ս. Եջմիածնի քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի վարիչ-տնօրին է նշանակվել Տ. Մակար Վորդ. Դոփիաննիսյանը:

Վեհափառ Հայրապետի մեկ այլ հրամանով S. Արշեն արեղա Սանոսյանը դեկտեմբերի 10-ից նշանակվել է ՀՀ քանակի հոգևոր խորհրդական: S. Վորամես վրդ. Աբրահամյանը, ազատվելով քանակի խորհրդականի պաշտոնից, նշանակվել է Ս. Յոհվանիմե վանքի վանահայր:

ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹ-ԱՌԻ

միայն է բախտական պահանջանք ույ և յառավ չ ըրբ է
Ա սույ ուստ եւելուս նախարար Անդարդուսաւ յիշե
ուն մասնաւութեանուած Եւելուս ու նունաւուց

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՈՒ ՔԱՀԱՍԱՆԵՐ ԿԱՐԳԱԼՈՒՅՉ ՀՈՎԱԿՎԵՑԻՆ

Ս.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր
տնօրինությամբ Հայ Առաքելական Եկեղեցու Երկու քահանաներ՝ S.
Հակոբ քհն. Պետրոսյանը և S. Գրիգոր քհն. Ավետիսյանը, դեկտեմբերի
1-ից կարգալույժ են հոչակված:

Հայուապետական Վճիռը կայացվել է նկատի առնելով, որ
Վերոհիշյալ Երկու քահանաները լքել են իրենց վստահված հոտը և,
հակառակ եղած հորդորների ու թելադրանքների, շարունակում են
իրենց բողոքի ցույցը՝ դրսեորելով անհնազանդության ոգի և հայ
հոգևորականին անհարիր վարք: Նկատի է առնված նաև սույն
թվականի հոկտեմբերի 22-ի Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված
նիստի որոշումը՝ S. Հակոբ քհն. Պետրոսյանին և S. Գրիգոր քհն.
Ավետիսյանին կարգալույժ անելու մասին: Կարգալույժ արված
քահանաներն այլևս դասվում են աշխարհականների շարքը և կկոչվեն
իրենց աշխարհիկ անուններով՝ Աշոտ Պետրոսյան և Արծրուն
Ավետիսյան:

ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹ-ՈՈՒ

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՐԾԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴՐԱՎԵՐ ՈՂՋԱՄՏՈՒԹՅԱՆ

«Արա այսր միտանել» /Ղուկ. ԺԴ 23/:

Երեք բառեր, որոնք առաջին հայացքից կարծես ոչինչ չեն ասում, սակայն իրենց արտաքերման, իրենց բովանդակային նշանակության մեջ լիապես ներառնում են մի բարկություն, մի վլողովմոնք, որը պարզ չէ՝ արդյոք արդար է, թե շինծու, արդյոք հոգու ներքին արդար զգացումներից է մղված, թե՞ չար շարժառիթներից ձևավորված:

Սեզանից շատերը հաճախ վրդովմոնք և արդար բարկություն են ունենում: Վրդովմոնք են ապրում, երբ սառնություն են տեսնում իրենց նկատմամբ, բարեկամաբար պարզված իրենց ձեռքի դիմաց տեսնում են արհամարտանք և անարգանք: Սեզանից շատերը վրդովվում են, երբ բարյացակամությամբ, բարեկամական տրամադրությամբ մոտենում են իրենց եղբորը ազնիվ, անկեղծ ծառայություն մատուցելու, սակայն հանդիպում են մի սառը պատճեշի, որ վանում է իրենց և արդար վրդովմոնք առաջ բերում իրենց մեջ: Թեև ամեն մի վրդովմոնք, ամեն մի բարկություն չէ, որ արդար է, և ամեն մի նման զգացում չէ, որ ծշնարիտ շարժառիթներից է ձևավորվում մեր մեջ, սակայն այս անգամ ուրիշ է, ուրիշ է պարագան Ղուկասու Ավետարանի 14-րդ գլխում ներկայացված առակի մեջ:

Առակի բովանդակութունը հետևյալն է. Երբ Ղուկաս Ավետարանիչը այն հանձնում է ապագա քրիստոնյաների ուշադրությանը, այսպես է սկսում իր պատումը: Մի մարդ, որը ըստ երևույթին շատ հարուստ էր, որովհետև ուներ ծառաներ և այնքան հնարավորություն, որ կարող էր ուրիշներին հյուրասիրության հրավիրել, ընթրիք կազմակերպել և այդ ընթրիքին բազմաթիվ մարդիկ կանչել, ահա այս մարդը ընթրիք է պատրաստում և իր ծառաներին առաքում է մարդիկ հրավիրել,

որպեսզի իր բարեհաճությունը, իր մարդկային վերաբերմունքը ցույց տա նրանց նկատմամբ: Եվ ահա երբ ամեն ինչ արդեն պատրաստ էր, սուրբանդակները մեկնում են տարբեր վայրեր հրավիրյալներին կոչմատիրոց տուն հրավիրելու:

Մարդկանցից մեկը, սակայն, պատճառաբանում է, թե չի կարող նախակցել խնջույքին, որովհետև նոր արտ է գնել և պետք է գնա, տարածքը ուսումնասիրի, հավանաբար նրա բերքատվության աստիճանը որոշելու, և կամ վարուցանքի հետագա նախագծերը մշակելու համար, և այսպիսով հրաժարվում է գնալ խնջույքին մասնակցելու: Երկրորդը նույնպես հրաժարվում է՝ պատճառաբանելով, թե ինձ լծկան եզներ է գնել և պետք է գնա վարուցանքի մեջ այդ եզներին, այդ լծկաններին փորձելու: Մյուսը պատճառաբանում է, թե նոր է ամուսնացել և բնականաբար ընտանեկան հանգամանքների բերումով չի կարող մասնակցել խնջույքին: Եվ այսպիսով ենթադրելի է չորրորդը, իինգերորդը, վեցերորդը և այսպես շարունակ:

Մարդիկ, ովքեր նախապես խոստացել են ներկա գտնվելու այդ կոչումքին, վերջնականապես հրաժարվում են մասնակցել խնջույքին: Եվ կոչումքի տերը ստիպված է լինում իր ծառաներին առաքել նորանոր մարդկանց փնտրելու, և նրա ծառաները գնում տարբեր կողմերից, տարբեր անկյուններից խեղանդամներ, հաշմանդամներ, մուրացկաններ գտնում և բերում են խրախճանքին մասնակցելու: Եվ երբ տակավին դատարկ տեղեր են մնացել խնջույքի սեղանների շուրջ, մարդը պարտադրում է իր ծառաներին, այս անգամ արդեն արդար բարկությանը ասելով, թե՝ գնացեք և ում որ գտնեք, բերեք, բոլ մասնակցեն իմ ընթրիքին, միայն թե այն անձինք, ովքեր նախապես հրավիրված են, նրանցից որևէ մեկը չի կարող տեղ գտնել իմ խնջույքի սեղանների շուրջ: Ահա այպիսի հանգամանքների մեջ, այսպիսի պարագաների մեջ է, որ հնչում է այս մարդու վրդովմունքով, արդար բարկությանը արտաքերված խոսքը, թե՝ գնա բոլոր այն մարդկանց, ում կհանդիպես, բեր, մասնակից դարձրու իմ խնջույքի սեղաններին, բայց ոչ նրանց, ովքեր նախապես հրավիրված են:

Խորամուխ լինելով առակի ներքին, խորքային բովանդակության մեջ, պետք է ինքնարերաբար հարց տալ՝ ինչո՞ւ արդյոք մարդիկ հրաժարվեցին իրենց նկատմամբ նման մեծապատիվ վերաբերմունքից: Ինչո՞ւ արդյոք մերժեցին մասնակցել մի խնջույքի, որտեղ կածես թե իրենց որևէ պարտականություն չէր մնում կատարելու, բայց միայն

ճաշակելու այն բարիքները, որոնք իրենց համար նախապատրաստել եր այդ ընթրիքի տերը: Սակայն ակնհայտ է երկու պատճառ, որոնք թույլ չեն տալիս նրանց մասնակցելու ընթրիքին: Նախ առաջինը, որ իրենք անտարբեր գտնվեցին, անտարբերությամբ նայեցին կոչնատիրոջ հրավերին և չուզեցին ընդառաջել նրա բարեկանարար մեկնված ծեղզին և իրենց ծեղզն էլ սեղմել նրա ափի մեջ, որովհետև կարծում էին, թե այդ պատվի ընծայումը ենթադրում է նաև փոխադարձ պատվի ընծայում այդ կոչնատիրոջը, այսինքն՝ վախեցան պարտքի գիտակցությունից, թե միզուցե նա շահադիտական նպատակներով է իրենց հրավիրում խնջույքի, ինչ-որ ակնկալիքներ ունենալով:

Երկրորդ պատճառն այն էր, որ նրանք մտածում էին, թե իրենց առօրյա գործերը առավել կարևոր են և չարժե ընդամենը մեկ կոչունքի համար կտրվել գործնական կյանքից՝ նույնիսկ եթե հրավերի ընդունումով կոչնատիրոջը հոգեկան բավականություն պատճառած լինեին: Այսինքն՝ իրենք իրենց առօրեական հոգսերը վեր դասեցին այդ մարդուն ինչ-որ ձևով միշտարելու, այդ մարդու ուրախությանը մասնակցելու, այդ մարդու հրավերին ընդառաջելու անհրաժեշտությունից: Ահա այս երկու պատճառներով նրանք հրաժարվեցին մասնակցել այդ խնջույքին: Այս պատումը առակավոր եղանակով մեզ թրիստոսի թերանից փոխանցում է Աստուծո կոչը՝ ուղղված ամենքին, Աստուծո կոչը տվյալ ժամանակաշրջանում՝ ուղղված հրեաներին, փարիսեցիներին և դպիրներին, ովքեր սովորաբար Աստուծու և մարդկանց հարաբերության մեջ շատ ժամանակ անտեսում էին Աստուծո կոչը, ողջանտության հրավերը և նախընտրում էին շարունակել իրենց գործնական ընթացքը:

Դամաշխարհային գրականության մեջ եթե այս պատումի հրավերը մերժած անձանց մկարագի հետ գուգահեռներ փնտրենք, կարող ենք գտնել սքանչելի գրողի ծեղզի տակից դուրս եկած մի կերպար: Դա Գորսեկի կերպարն է, մի մարդ, որն իր ամբողջ կյանքում դրամ էր կուտակել, նվիրվել էր իր գործնական կյանքին, նվիրվել էր իր հոգսերին՝ մշտապես անտեսելով իր անխղճությունից տուժած մարդկանց լացն ու վիշտը, ցավը: Նույն կերպով առակի կերպարներն են համառորեն շարունակում իրենց ընթացքը. մեկը գնացել էր իր այգին տեսնելու, մյուսը՝ լծկաններին փորձելու, մեկ ուրիշը՝ ամուսնացել էր և բնականարար ընտանեկան հոգսեր ուներ և Աստուծո կոչը անպատասխան էր մնում նրանց կողմից:

Եվ այդ կոչը, ինչպես 2000 տարիներ առաջ, այսօր ևս շարունակում է հնչել ամենուր, շարունակում է հնչել այն բոլոր անձանց ունկերին և արձագանք տալ այն բոլոր մարդկանց հոգիներում, ովքեր հոգու սրբություն ունեն լսելու համար այդ կոչը, կոչը՝ ողջամտության հրավերը: Եվ այս կոչը ես տեսնում եմ, որ այսօր նույնպես ինչում է մեզանից յուրաքանչյուրի ականջներին: Դինգ հրավեր կա այսօր, որ կանչում է մեզ դեպի առավել և ևս առավել պատասխանատվության: Դինգ հրավեր:

Առաջինը Աստուծոն Ազն է, որ իջել է և կախված է երկնքից և մեզ կանչում է ողջամտության, զինվորին կոչում է ողջամտության պաշտպանելու իր հայրենիքը, մարտնչելու իր ազգային սրբությունների, իր ընտանեկան ավանդությունների համար՝ առանց դափնիների ակնկալիք ունենալու: Աստված հայ մորը կոչում է մշտապես սրբությամբ սնուցել իր զավակին իր կրծքի վրա, անգամ դժվարին պայմաններում, և ազգի, Եկեղեցու համար հասցնել ազնիվ, անկեղծ հոգով դաստիարակված մի զավակ: Աստուծոն կոչը մեզ ամենքիս կոչում է լինել իրական քրիստոնյա: Ոչ ոք չի կարող ծեռքը դնել մասին և ետ դառնալ իր հետև նայել: Եթե որևէ մեկը իրեն է կարծում մածկալ, չի կարող թերանալ իր մածկալության մեջ: Թե մեկը իրեն կարծում է քրիստոնյա, չի կարող թերանալ իր քրիստոնեության մեջ, թե մեկը իրեն կարծում է զինվոր, չի կարող թերանալ և չկատարել այն պարտականությունները, ինչը որ պարտադրում է իրեն իր զինվոր լինելը:

Երկրորդ ծեռքը, որ ուղղված է մեզ և կոչում է ողջամտության, դա Եկեղեցու ծեռքն է, որ Աստուծոն իրական և վավերական դեսպանատունն է այս երկրի վրա: Եվ ահա Եկեղեցու ծեռքը մեկնված է ամենքիս և կոչում է դեպի փրկության կայան, ամենքին կոչում է պարտաճանաչ լինել իրենց պատասխանատվությունների մեջ, ամենքիս կոչում է սրբությամբ և նվիրվածությամբ ծառայել մեր կոչմանը, որովհետև չենք կարող ծեռքներս դնել մասին և դրանից հետո թեքվել և ետ նայել:

Երրորդ ծեռքը, որ ուղղված է մեզ, մեր հայրենիքի ծեռքն է, ծեռք, որ մեզ կոչում է սրափության, ողջամտության, հայրենաշինության ու հայրենասիրության:

Չորրորդ ծեռքը, որ ես գգում եմ, արձագանքում է, շարժվում է հինավուրց տաճարների պատերի մեջ, մեր սրբազն նախահայրերի ծեռքն է, մեր սրբազն նախահայրերի ծայնն է, մեր նախահայրերի

աչքն է, որ այդ սրբազան պատերի միջից մեզ է նայում և մեզ մղում, առաջնորդում է ընթանալ իրենց շավիղներով:

Հինգերորդ հրավերը մեր ապագա սերնդի հրավերն է, որ Արագածի գագաթից Հայոց Եկեղեցու և հայ ժողովրդի անցյալն ու ապագան լուսարձակող մշտավառ կանթեղի միջից մեզ է ուղղված, և մեզ կոչում է սերունդներին ավանդ թողնել, իրենց ժառանգություն թողնել մեր այսօրվա տքնանքով, մեր ազնիվ աշխատանքով կերտված ամուր Եկեղեցի, ամուր հայրենիք և ավանդությունների անաղարտ պահպանում:

Եվ, ով մարդ Աստուծո, այս հինգ ձեռքերը, այս հինգ ձայները, ողջախոհության այս հինգ հրավերները ձեզ և մեզ են ուղղված, և ամենք խղճի մտոք, մեր պարտքի գերագույն գիտակցությամբ պարտավոր ենք ընդառաջելու այս հրավերներին, անպատասխան չքողնելու Աստուծո, մեր ժողովրդի, մեր հայրենիքի, մեր ապագա սերնդի, մեր նախահայրերի և մեր Եկեղեցու բարեկամաբար մեզ պարզված ձեռքը: Մենք պարտավոր ենք ամեն րոպե, ամեն ժամ մտատանջվել և ձեռքներս, որ մի պահ դրել ենք մածին, մշտապես առանց վարանելու, կատարյալ նվիրվածությամբ այդ մածը առաջ տանենք, մինչև մեր կյանքի վախճանը, որպեսզի մենք և այս կյանքում երջանկություն վաստակենք, և հանդերձյալում փառք ի պատիվ Ամենասուրբ Երրորդությանը՝ «Յօրն Ամենակալի, Որդուն Միածնի և Սրբոյ Յոգևոյն և ի նորոգումն հոգւոյ և մարմնոյ մերազնեա հաւատացելոց ամէն»:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԵՎ ՎՐԹԱՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՄՆԵՐԸ

ՏԵԹԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՉԱՐԻ

ԿԵՌՄԱՆՆԵՐՈՒՄ

Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի արգասավոր գործունեության ընթացքում Յայաստանը ոտք դրեց քրիստոնեական քաղաքակարգության շրջափուլ: Յայ Առաքելական Եկեղեցին լուսավորեց Երկրի բոլոր հորիզոնները՝ ժողովրդական ոգին և աշխարհազգացողությունը տոգորելով միասնական գիտակցությամբ: Յայաստանը շարունակեց հաղորդակցվել քրիստոնեացված հունա-հռոմեական աշխարհի գիտության և մշակույթի հետ: Սակայն դեռևս լիովին չհաղթահարվեց դիցական ժամանակների ոգին ու կենսակերպը: Այն իրեն զգալ էր տալիս հատկապես Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի մահվանից հետո:

Ամբողջ 4-րդ դարի ընթացքում շարունակվեց քրիստոնեության և հեթանոսության միջև ընթացող պայքարը, որը, չնայած Յայոց Եկեղեցու ներդրած ջանքերին, չգտավ իր վերջնական հանգուցալուժումը: Յայ նախարարների զգալի մասը կառչած էր մնում հնօրյա հավատքին, որին հաճախ զոհաբերվում էին Երկրի քաղաքական շահերը: Յեթանոսական հավատն իր կենսունակությունը պահպանեց նաև ժողովրդի ընդերքում: Տրդատ Մեծին հաջորդած Յայոց թագավորները հեթանոսության դեմ մղվող պայքարում ոչ միշտ էին զորավիգում Եկեղեցուն: Նրանց վերաբերմունքը պայմանավորված էր հեթանոսական Պարսկաստանի հարևանությամբ, Սասանյան արքաների կողմից հեթանոսամետ հայ նախարարների հանդեպ ունեցած դրական դիրքավորմամբ,

որը երկրում ծնում էր տարամերժ միտումներ՝ պարարտ հող ստեղծելով քաղաքական հակոտնյա հոսանքների առաջացման համար:

Երկրի քաղաքական, հոգևոր կեցությանը համակած բացասամետ երևոյթներին հակազդող գործոնը Եկեղեցին էր: Ուստի հեթանոսության դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր բարձրացնել Եկեղեցու վարկը, շարունակել և զարգացնել Գրիգոր Լուսավորչի օրոք սրբազնագործված ավանդները: Տրդատ Մեծը ժամանակին քաղաքական մեծ իմաստություն ցուցաբերեց՝ Լուսավորչի տաճ հեղինակությունն ըստ ամենայնի մեծացնելու, կաթողիկոսական իշխանությունն նրա ժառանգական մենաշնորհը դարձնելու համար: Թագավորի նախաձեռնությամբ Գրիգոր Լուսավորչի որդիները՝ Վրթանեսն ու Արիստակեսը, Կեսարիայից տեղափոխվեցին Հայաստան: Տրդատ Մեծը նրանց ներկայությունը Հայաստանում համարում էր Հայոց Եկեղեցու հիմքերն ամրապնդելու գրավականը: Ուշագրավ է, որ նա այդ գործի կազմակերպումը վստահեց սպարապետ Արտավազդ Մանդակունուն և նրա գլխավորած պատվիրակությանը¹:

Գրիգոր Լուսավորիչն իբրև հաջորդ ընտրեց կրտսեր որդուն՝ Արիստակեսին, քանի որ ավագը՝ Վրթանեսը, արդեն հասցրել էր ամուսնանալ, մինչդեռ Արիստակեսը շարունակում էր սրբակենցաղ ու միայնասեր կյանքը: Գրիգորն Արիստակեսի մեջ տեսնում էր իր գործի շարունակողին, քիչտոնեական հավատի նվիրյալին, որին ավելի էր վստահում, քան որևէ այլ Եկեղեցական այրի: Նրա այդ խոհերը լիովին կիսում էր Տրդատ արքան, որի հավանությամբ Գրիգորը եպիսկոպոս ձեռնադրեց Արիստակեսին՝ դարձնելով իր տեղապահը և իրավահաջորդը²: Դրանով իսկ դրվեցին կաթողիկոսական իշխանությունը Լուսավորչի տաճ ժառանգական մենաշնորհը դարձնելու հիմքերը: Թագավորը դա համարում էր Եկեղեցին ամրապնդելու, պետության կայուն հենարանը դարձնելու առհավատչյան: Միայն դրանից հետո Գրիգորն իր ուսերից թոթափեց քահանայապետի ժանրալուժ գործառնությունը: Նա վաղուց էր, ինչ հեռացել էր որդիներից, ի դեմս որոնց նա այժմ

¹ Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Ակրտչեանի և Ստ. Կամաեանցի, Տիգիս, 1909, ճիզ, էջ 451:

² Ազարանգեղոս, ճիզ, էջ 452-453. Սովուն Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Ս. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տիգիս, 1913, Երկրորդ գիրք, էջ 242:

տեսավ իր գործի շարունակողներին ու հանգիստ խղճով հեռացավ լեռները՝ տրվելով ճգնասուն կյանքի:

Տակավին Գրիգորի հովապետության վերջին տարիներին Արիստակեսը դրսևորեց իր խորագիտությունը քարոզական ասպարեզում՝ երբեմն գերազանցելով հորը: Ազաթանգեղոսի վկայությամբ նա «առաւել ևս քան զիայրն վերագոյն երևեցուցաներ գիւր վարդապետութիւնն» և հորից հետո «նստաւ յաթոր կաթողիկոսութեան Յայոց Մեծաց³»:

Վրթանեսն ու Արիստակեսը, ամենայն հավանականությամբ, Կեսարիայից Յայաստան են տեղափոխվել 312 թ., երբ Հռոմի Մաքսիմիանոս կայսրը պատերազմ սկսեց Յայաստանի դեմ՝ ջանալով այնտեղից արմատախիլ անել քրիստոնեությունը, սակայն նրա զորագները չարաչար պարտություն կրեցին Յայոց գորքերից⁴: Նման իրավիճակում Գրիգոր Լուսավորչի որդիները, հալածանքներից խուսափելու բնական մղումով, պետք է ջանային ապաստան գտնել Յայաստանում, որտեղ քրիստոնեության լույսն էր տարածում իրենց հայրը, որը կարուտակեզ սրտով սպասում էր նրանց գալստյանը: Նա որդիներին անձամբ նամակներ ուղարկեց՝ թախանձելով գալ իր մոտ՝ Յայաստան⁵: Յավանաբար Գրիգորի գուգակից Մարիամը շարունակել է մնալ մենաստանում, որտեղ նա մտել էր տակավին ամուսնու՝ Յայաստան մեկնելուց առաջ⁶: Վարդան Արևելցու հավաստմամբ, Մարիամն Արանագինես վկայի քույրն էր և մտել էր վանք՝ կրոնավորելու (որդու՝ Վրթանեսի հետ)⁷, թերևս հետևելով եղրոր կրուսակենցաղ վարքին: ճգնակյացի կյանքով էր ապրում նաև Մարիամի կրտսեր որդին՝ Արիստակեսը, որի վրա մեծ էր մոր ազդեցությունը:

Յայաստան ժամանելով, Արիստակեսը հոր գլխավորությամբ լծվեց Յայ Առաքելական Եկեղեցու առջև ծառացած իրատապ խնդիրների լուծմանը՝ թերևսացնելով հոր ծանր հոգսերը: 325 թ. կայացավ Նիկիայի առաջին տիեզերաժողովը: Յայոց Եկեղեցին, իրու անկախ և ինքնուրույն կազմակերպություն, այդ տիեզերաժողովում ներկայացվեց Արիս-

³ Ազաթանգեղոս, ճի՞՞ էջ 453:

⁴ Էւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 688:

⁵ G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Vaticano, 1946, p. 114.

⁶ Յովհան Սամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ա, Արքահամամի, Երևան, 1941, էջ 72:

⁷ Յաւրումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, ժ. էջ 37, ԺՈ, էջ 39:

տակեսի կողմից⁸: Այս փաստն ինքնին վկայում է, որ Տրդատ Մեծն ու Գրիգոր Լուսավորիչն արդեն Արիստակեսին համարում էին հոր հայրապետական Աթոռի ժառանգորդ: Ուստի իմանազուրկ է այն կարծիքը, որ իբր Գրիգոր Լուսավորչին հաջորդել է ոչ թե Արիստակեսը, այլ Մերուժան Եպիսկոպոսը⁹, որը սակայն Յայաստանի Եպիսկոպոս է հիշվում Գրիգորից շատ առաջ, 3-րդ դ. կեսերին¹⁰: Յայ մատենագիր-ները վկայում են, որ Գրիգոր Լուսավորչին հաջորդել է Արիստակեսը, և բնավ չեն հիշում Մերուժանին որպես նրա հաջորդ: Նկատենք, որ Մերուժանին Գրիգոր Լուսավորչից հետո դնելու փաստն ինքնին ժխտում է կարողիկոսական իշխանությունը Լուսավորչի տոհմի ժառանգական մենաշնորհը դառնալու իրողությունը:

Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը սպասում էին Արիստակեսի վերադարձին, որը Յայաստան պետք է հասցներ առաջին տիեզերաժողովի կանոնական որոշումները, զիներ Յայ Առաքելական Եկեղեցին նոր խոսքով, բացեր քրիստոնեական կրոնի նոր հորիզոններ: Շուտով վերադարձավ Արիստակեսը և համաշխարհային այդ Եկեղեցաժողովի որոշումները ներկայացրեց թագավորին ու Գրիգոր Լուսավորչին¹¹: Արիստակեսը հորը բերեց նաև նրան ձեռնադրող Ղևոնդ մետրոպոլիտի ողջույնը, որին նա հանդիպել էր Կեսարիայում և հետո մեկնել Նիկիա¹²: Արիստակեսը, որը ավելի քան 13 տարի վարել էր Եպիսկոպոսի պաշտոնը, ստանձնեց Յայոց կարողիկոսությունը: Դա վկայված է նաև Մովսես Խորենացու մոտ, ըստ որի Նիկիայի տիեզերաժողովից Արիստակեսի վերադառնալուց հետո Գրիգոր Լուսավորիչն այլևս չերևաց, և կարողիկոսի իշխանությունը ժառանգեց Արիստակեսը՝ աթոռակալելով յոթ տարի¹³: Ըստ այսմ, վերջինս Յայոց Եկեղեցու Յայրապետ է եղել 325-333 թվականներին: Ուստի մերժելի է Արիստակեսի կարողիկոսությունը 298-338-ով թվագրելը¹⁴: Բոլորովին իմանազուրկ է նաև այն կարծիքը, որ իբր Արիստակեսը Գրիգոր

8 J. Mansi, *Sacrorum conciliorum nova et amplissima collectio*, vol. 7, Graz-Austria, 1960, p. 699.

9 Ն. Ակիմեան, Սուլը Գրիգոր Լուսավորիչ («Հանդէս Ամսօթեայ», 1949, էջ 27): Տե՛ս նաև Ռիմենսիոն Ալեքսանդրացի, Թուղը վասն ապաշխարութեան առ Մերուժան Եպիսկոպոս Յայոց, հրատ. Ակիմեան («Հանդէս Ամսօթեայ», 1949, էջ 66-67):

10 Եւսեբիոս Կեսարացի, *Պատմութիւն Եկեղեցւոյ*, էջ 517:

11 Ազարանգելոս, ճիշտ, էջ 465-466:

12 Մովսես Խորենացի, II, Ղ, էջ 240:

13 Նույն տեղում, ՂԱ, էջ 243:

14 Ն. Ակիմեան, Սուլը Գրիգոր Լուսավորիչ, էջ 27:

Լուսավորչից ավելի վաղ է վախճանվել և վարել է սոսկ կաթողիկոսական փոխանորդի պաշտոնը 320-327 թվականներին¹⁵:

Նիկիայի առաջին տիեզերաժողովին Արիստակեսի մասնակցությունը բնականաբար նրան հայտնի դարձրեց քրիստոնեական աշխարհում, որն ի դեմք նրա տեսավ հոր Աքոռի արժանի ժառանգորդին: Դա չէին կարող անտես առնել նաև Տրդատ թագավորն ու Գրիգոր Լուսավորիչը, որն արդեն ծեր էր, հոգնած ու տկար. անհրաժեշտ էր կաթողիկոսական իշխանությանը նոր լիցք հաղորդել, ամրապնդել Յայ Առաքելական Եկեղեցու հիմքերը: Դա կարևորվում էր ոչ միայն Յայ, այլև քրիստոնեական մյուս Եկեղեցիների համար, որոնք Յայոց Եկեղեցին դիտում էին որպես Արևելքում քրիստոնեական հավատքի զորավոր պատվար:

Արիստակեսը թեև ծեռնադրվեց Կեսարիայում, սակայն դա ուներ միայն ծխական նշանակություն, քանի որ Յայ Եկեղեցին Յօնմեական կայսրությունից, հետևաբար նաև Կեսարիայի մետրոպոլիտության իրավասությունից դուրս էր, և վերջինս բնականաբար նվիրապետորեն չէր կարող (և նման հավակնություն չուներ) գերիշխել Յայոց Եկեղեցուն: Ավելին, տվյալ պահին, եթե Յօնմեական կայսրությունում տակավին քրիստոնեությունը չէր հօչակվել պետական կրոն, այլ սոսկ հանդրժվում էր, Կեսարիայի Աքոռն ինքը կարիքն ուներ անկախ Յայաստանի Առաքելական Եկեղեցու զորակցության: Այն փաստը, որ քրիստոնեական աշխարհը տակավին մնում էր միասնական, հաստատում հող էր ստեղծում Յայոց Եկեղեցու և Կեսարիայի մետրոպոլիտության միջև դավանա-ծխական միությունը պահպանելու համար: Արևմուտքի քրիստոնեական աշխարհի հետ Յայ Եկեղեցու առնընակցվելու, չմեկուսանալու գրավականն այդպիսով նախ և առաջ Կեսարիայի Աքոռի հետ հաղորդակցության պահպանումն էր:

Յայոց կաթողիկոսական պաշտոնն ստանձնելուց հետո Արիստակեսը շարունակեց քարոզչական գործունեությունը և առանձնակի ուշադրություն դարձրեց Յայոց Եկեղեցու նվիրապետական համակարգի կատարելագործմանը: Այդ նպատակով հարկ էր, որ նա ծեռնադրեր նոր եպիսկոպոսների և հոգևոր այլ պաշտոնյաների: Ենթադրվում է, որ Արիստակեսի հովվապետության ժամանակ Յայաստանի եպիսկոպոս-

¹⁵ Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ծեռնադրութեան թուականը և պարագաները, «Բազմավէպ», 1960, էջ 107:

ների թիվը հասնում էր վեցի¹⁶: Սակայն այս թիվը նվազեցված է և չի ապացուցվում պատմադրյուրների ընձեռած տվյալներով: Գրիգոր Լուսավորչի օրոք Եպիսկոպոսների թիվը 12-ի էր հասնում: Արիստակեսի օրոք նրանց թիվը հարկ է, որ աճեր, քանի որ Յայաստանի տարբեր կողմներում Եկեղեցական իշխանությունն իրականացնելու համար անհրաժեշտ էին հոգևոր առաջնորդներ: Դա թելադրվում էր նաև հեթանոսության ահագնացող տարերքի դեմ արդյունավետ պայքար մղելու անհրաժեշտությամբ: Եկեղեցու համար տեղերում հենարան ստեղծելու նպատակադրումով Արիստակեսը հիմնեց նաև վանքեր ու Եկեղեցիներ՝ կամենալով քրիստոնեության լուսավետ գաղափարները հասցել երկրի հեռավոր հորիզոնները:

Արիստակեսը, ինչպես հաղորդում են հայ մատենագիրները, հորից ժառանգեց նաև անողոք պայքարը հեթանոսության դեմ: Այդ պայքարն ուներ ցայտուն արտահայտված քաղաքական հնչեղություն, քանի որ Սասանյան դուռը շարունակում էր օժանդակել Յայաստանի հեթանոսամետ ուժերին, որոնք այդպիսով ավելի էին զորանում՝ դառնալով Յայոց պետության և Եկեղեցու հիմքերը խարիսլող զորեղ գործոն: Յարմարադեալ պահի նրանք կարող էին երկրի քաղաքականության սլաքը թեքել դեպի Սասանյանները՝ ջանալով առ ոչնչի հանգեցնել Տրդատ Մեծի, Գրիգոր Լուսավորչի և նրանց հետևողների ջանքերով Յայաստանում սերմանված քրիստոնեական քաղաքակրթության նվաճումները: Յայոց Եկեղեցու դեմ հեթանոսության պայքարը վտանգավոր ձևեր ընդունեց Սասանյան Շապուհ Բ արքայի (309-379) քրիստոնեահալած քաղաքականության ընթացքում: 6-րդ դարի ասորի մատենագիր Մշիխա Զեխան վկայում է, որ Շապուհ Բ-ն անագորույն մի հրամանով իր ստորադրյալներից պահանջեց անխնա ոչնչացնել քրիստոնյաներին¹⁷: Յայաստանում հեթանոսության աշխուժացումը պայմանավորված էր նաև նրանով, որ Տրդատ թագավորն արդեն բոլորել էր իր ությունամյա տարիքը և, ըստ երևույթին հետևելով Գրիգոր Լուսավորչին, դարձել ճգնակենցաղ՝ մեկուսանալով երկիրն ալեկոծող հոգևոր և քաղաքական խնորումներից: Նեթանոսությունն, անշուշտ, պահը ծիշտ էր ընտրել: Յայաստանում (հատկապես նրա ծայրագավառներում) քրիստոնեությունը դեռևս խոր արմատներ չէր ձգել

¹⁶ J. Markwart, Die Entstehung der armenischen Bistümer, Roma, 1932, S. 197.

¹⁷ Տե՛ս Ասորական աղբյուրներ, II, առաջարան, բարգմ. և ծանոթագր. Յ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 97:

ժողովրդի ընդերքում, ուստի հեթանոսաբարո խավերը որոշակի հենարան ունեին երկրում և կարող էին հուզել քրիստոնեամերժ տրամադրություններ: Տրդատ թագավորի նկատմամբ հակոտնյա դիրքորոշումը գնալով ավելի էր ուժեղանում այդ խավերում, որոնց աչքին Տրդատ Մեծն անձնավորում էր քրիստոնեության հաղթանակը: Ուստի նրանք, փարբելով նախնյաց հավատքը վերականգնելու հույսին, դավեր նյութեցին թագավորի ու կաթողիկոսի դեմ: Մոլեկրոն հեթանոսների վերածնվող այդ հույսի գոհը դարձավ նաև Արիստակեսը, որի հանդեպ, ինչպես հավաստում է Մովսես Խորենացին, սուր թշնամանք էին տածում «անիրաւ ու աղտեղագործ» մարդիկ: Վերջիններիս չարագույժ մտահղացման գործադրող եղավ Ծոփքի Արքեղայոս Իշխանը, որի անունը հուշում է, որ նա տարազգի, ըստ Երևույթին՝ «հունախառն էր»¹⁸: Արիստակեսը Ծոփքում կառուցել էր հոյաշեն Եկեղեցի, որտեղ հաճախակի այցելություններ էր կատարում և, չհանդուրժելով Արքեղայոսի հեթանոսաբարո արարքները, հորդորում, անգամ դատափետում էր նրան: Որպես Յայոց Հովվապետ, Արիստակեսը պետք է սանձեր հայրենիքի, Յայոց պետության ու Եկեղեցու հանդեպ այդ նախարարի ոճրաշավիղ մղումները: Սակայն Յայրապետի ողջախոհության կոչերը մնացին անարդյունք: Ավելին, չհանդուրժելով Արիստակեսի հանդիմանությունները, Արքեղայոսը սրախողիսող արեց նրան և, հատուցումից խոսափելու համար, ճողոպրեց Կիլիկիա¹⁹ (որը թերևս նրա հայրենիքն էր): Այդպիսով մի արյունոտ է ևս գրվեց Յայոց Եկեղեցու պատմության մեջ: Փավստոս Բուզանդը Արիստակեսի Եղերական մահը համարում է մարտիրոսական («խոստովանական»)²⁰ անշուշտ նկատի առնելով քրիստոնեական հավատի համար հեթանոսների ծեռքով նրա նահատակվելու փաստը:

Սակայն հեթանոսությունը չէր նահանջում և մահաշունչ կոչերով նոր զոհեր էր պահանջում: Վրիժածարավ այդ կոչերը բնակչության որոշ մասի մեջ գտան իրենց մահագույժ արձագանքները: Յեթանոսները բացորոշ կերպով մարտահրավերներ էին նետում Յայոց Եկեղեցուն, հոգեւոր դասին, հավատացյալ ժողովրդին: Անիրաժեշտ էր մարել հոգեւոր իրդեհը: Այդ ուղղությամբ հետևողական ու անհաշտ պայքար ծավալեց Գրիգոր Լուսավորիչ անդրանիկ որդին՝ Վրթանեսը, որը

¹⁸ Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենաց Յայոց, Ա. Վենետիկ, 1869, էջ 370:

¹⁹ Մովսես Խորենացի, II, ՊԱ, էջ 243-244:

²⁰ Փավստոս Բուզանդ, III, Բ, էջ 6:

եղբորից հետո ժառանգեց կաթողիկոսական գահը: Տակավին Գրիգոր Լուսավորիչը նրան մղեց հոգևոր գրադմունքի, հավանաբար նաև ծեռնադրեց Եպիսկոպոս, որով իսկ ի դերև հանվեց ծեռնադրվելու նպատակով Կեսարիա Վրթանեսի մեկնելու անհրաժեշտությունը: Այդ փաստը վկայում է Կեսարիայի մետրոպոլիտական Աթոռից Յայ Առաքելական Եկեղեցու կախվածության բացակայության մասին: Ամենայն հավանականությամբ Վրթանեսը հոր կողմից ծեռնադրվել է 325 թ., Նիկիայի առաջին տիեզերաժողովի հրավիրման տարում, որպեսզի համաշխարհային այդ Եկեղեցաժողովում Յայոց Եկեղեցին ներկայացվի իբրև տեղում ծեռնադրվող Եպիսկոպոսներ ունեցող նվիրապետական համակարգ, ինքնուրույն հոգևոր հաստատություն և այդ կերպ ավելի մեծացվի նրա հեղինակությունը քրիստոնեական աշխարհում, օրինապատշաճ համարվի Յայաստանում Եկեղեցու հոգևոր առաջնորդներ ծեռնադրելու կարգը և կաթողիկոսական գահի ժառանգականությունը: Ըստ Մովսես Խորենացու, Վրթանեսը Եպիսկոպոսության պաշտոնը վարել է 15 տարի և վախճանվել Յայոց թագավոր Տիրանի գահակալության երրորդ տարում²¹, ինձ՝ 340 թվականին: Ինչպես տեսնում ենք, այս վկայությամբ հավաստվում է 325 թ. նրա ծեռնադրվելու փաստը:

Գրիգոր Լուսավորիչ կողմից որդիների ծեռնադրումը հետամտում էր ոչ միայն իր տան հոգևոր հարստության (ոդինաստիայի) օրինականացման, այլև Երկրի պետա-իրավական ոլորտներում Յայոց Եկեղեցու առաջնորդի հեղինակությունը մեծացնելու նպատակներ: Այդպիսով կարողիկոսական իշխանությունը, ի գուգակշիռ թագավորականի, օժտվում էր պետական իշխանությանը բնորոշ ժառանգական, հարստենիկ (ոդինաստիական) հատկանիշներով: Յայ մատենագիրների մոտ Յայ Եկեղեցու առաջնորդի իշխանությունը ներառում է ոչ միայն հոգևոր Եկեղեցական, այլև դատական ու քաղաքական (դիվանագիտական) գործառություներ: Ըստ այդմ կաթողիկոսի իշխանության կարևոր հատկանիշը նրա պետա-իրավական գերակայության փաստն էր: Նման իրավագորությունն էականորեն ամրապնդում էր Եկեղեցու հիմքերը՝ հաստատուն կրվաներ ստեղծելով հեթանոսության դեմ արդյունավետ ու կազմակերպված պայքարի համար: Վրթանեսի հովվապետության ընթացքում (333-341) այդ պայքարը չնարեց, այլ շարունակվեց

²¹ Մովսես Խորենացի, III, ԺԱ, էջ 269:

նորանոր բռնկումներով, որոնք ապացույց էին այդ չարազոր երևույթի խորն արմատների մասին: Դեթանոսությունը չէր նահանջում կարողի-կոսի եռանդուն ջանքերի, նրա հիրավի ստեղծագործ կորովի առջև, նույնիսկ մարտահրավեր էր նետում նրան: Եթե Տրդատ թագավորը հարաժամյա հովանավորությամբ սատարում էր հեթանոսության դեմ Եկեղեցու պայքարին, ապա նրան հաջորդած Խոսրով Դ Կոտակն ու Տիրանը չունեին իրենց նախորդի պետական ու հոգևոր ավյունը: Նրանց օրոք հեթանոսական տարերքը նոր ուժով զգալ տվեց իրեն՝ սպառնալով պետության ու Եկեղեցուն, ալեկոծելով երկրի բոլոր հորիզոնները: Մովսես Խորենացին հաղորդում է, որ հայրենասեր ուժերը համախմբվեցին Վրթանեսի շուրջը և Յաշտյանքի ու Ծոփքի մյուս գավառների իշխաններին առաքեցին Յոռմի Կոստանդ կայսեր մոտ, որպեսզի նրա համաձայնությամբ Յայաստանում թագավորեցնեն Խոսրով Դ Կոտակին²²: Կայսրը Վրթանեսին հղած պատասխան թղթով իրազեկեց, որ Յայաստան է ուղարկել օգնական զորք և հրաման՝ Խոսրով Կոտակին թագավոր կարգելու վերաբերյալ²³:

Վրթանես Կաթողիկոսը նպատակասլաց ջանքերով շարունակեց ժողովորի մեջ վառել հեթանոսության չարագույժ հորձանքի դեմ պայքարի հուրը: Նա հաճախակի քարոզչական առաքելություններ էր կատարում Յայաստանի տարբեր գավառներ: Վրթանեսի Գրիգորիս որդին Փայտակարանի իշխանների խնդրանքով մեկնեց Աղվանից աշխարհ՝ քրիստոնեություն տարածելու, սակայն Եղերամահ արվեց մոլեկրոն հեթանոսների՝ մասքթաց ցեղերի կողմից²⁴: Մովսես Կաղան-կատվացին հաղորդում է, որ Գրիգորիսը քարոզչական առաքելություն է կատարել ոչ միայն Աղվանքում, այլև Վրաց աշխարհում²⁵: Բայց Գրիգորիսը Վրաստանում չի քարոզել: Պատմագիրն օգտվել է Փավստոս Բուղանդից, որը թեև նշում է, թե Գրիգորիսը Եղել է Աղվանից և Վրաց կողմերի եպիսկոպոս, բայց ավելացնում է նաև, որ վերջին-

²² Նույն տեղում, III, Ե, էջ 260-261:

²³ Նույն տեղում, III, Ե, էջ 261:

²⁴ Մովսես Խորենացին Գրիգորիսի նահատակությունը դմունք է Տրդատ Սեծի ժամանակ (տե՛ս 335 թ.): Սակայն Գրիգորիսը նահատակվել է Խոսրով Կոտակի օրոք:

²⁵ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1983, I, ԺԴ, էջ 36-37:

ներիս տակ նկատի ունի սուկ Մասքքաց Արշակունիների թագավորությունը,²⁶ որն, ինչպես հայտնի է, ընդգրկում էր միայն Արլվանքը:

Գրիգորիսի նահատակությունը նոր լիքը հաղորդեց հեթանոսությանը: Մասքութենքը չսահմանափակվեցին միայն դրանով: Իրանական այդ ցեղերը, խրախուսվելով՝ Պարսից տիրակալի կողմից, իրենց թագավոր Սանեսան Արշակունու գլխավորությամբ հարձակվեցին Յայաստանի վրա: Այդ արշավանքը կատարվեց Գրիգորիսի նահատակության տարում²⁷: Անշուշտ, մասքութենքը միայն իրենց զորուժով չէին համարձակվի պատերազմել Յայաստանի դեմ: Սանեսանը, գրում է Խորենացին, Գրիգորիսին սպանել տալուց հետո մտահղացավ գրավել Յայաստանը՝ «գօրութեամբ օտար ազգաց»²⁸, որոնց հավանորեն Շապուհ Բ-ն էր իրահրել: Դա հստակվում է պատմիչի հետագա շարադրանքում, ուր ասվում է, որ մասքութենքը Յայաստան արշավեցին Շապուհ Բ-ի գաղտնի իրամանով²⁹: Վերջինս, ինչպես հայտնի է, շարունակում էր անլուր դաժանությունները քրիստոնյաների նկատմամբ³⁰:

Սասանյան արքայի օժանդակությամբ զորացած մասքութենքը կարողացան գրավել Յայաստանի զգալի մասը, այդ թվում նաև՝ Վաղարշապատը, շահատակելով նաև կաթողիկոսարանը: Մի պահ հեթանոսությունը Յայստանում վերասլացք ապրեց: Մասքութենքին պատշաճ դիմադրություն ցույց չտրվեց, քանի որ Վաչե Մամիկոնյանը՝ Յայոց զորքի սպառապետը, մեկնել էր Յոռմեական կայսրություն: Խոսրով Դ արքան ստիպված հեռացավ Դարույնք ամրոց և Վրթանեսի հետ ամրացավ այնտեղ: Գրեթե մեկ տարի Յայաստանը, նրա եկեղեցիները ենթարկվեցին դժնաբարք հրոսակների շահատակությանը: Այդ դաժան ժամանակամիջոցում քրիստոնեական կենարար հավատն իր թևերն արծվի պես պահում էր Յայոց աշխարհի վրա, որի շնորհիվ ժողովուրդը չընկրկեց անսքող այդ վայրագությունների առջև:

26 Փավստոս Բուղանդ, III, Ե, էջ 10:

27 J. Markwart, Die Entstehung der armenischen Bistümer, S.214.

28 Սովետական Խորենացի, III, Գ, էջ 260:

29 Խոյն տեղում, III, Թ, էջ 266:

30 Հմտ. G. Wiessner, Zur Martyrüberlieferung aus der christenverfolgung Schapurs II Gottingen, 1967, S. 157-158.

336 թ. վերադարձավ Վաչե սպարապետը և փայլուն հաղթանակ տարավ թշնամու դեմ³¹:

Դեմքնության դեմ ընթացող պայքարի պայմաններում Հայաստանն ալեկոծվեց նաև միջիշխանական ընդհարումների պատճառով։ Երկրի միասնությունը խարարող այդ բախումները մարելու համար որոշակի ժիգեր գործադրեց Վրթանես Կաթողիկոսը։ Խոսրով Դ թագավորը Վրթանեսի հետ (որի ազդեցությունն օգալի էր նրա վրա) գորավոր միջոցների դիմեցին երկրի երկու գավառատեր նախարարների՝ Մանավազյանների և Որդունինների միջև փոխադարձ բնաջնջան արյունոտ ընդհարումներին վերջ տալու համար։ «Մեծ Եպիսկոպոսապետն Վրթանես», գրում է պատմագիրը, թագավորի հետ միասին Աղրիանոս Եպիսկոպոսին ուղարկեցին այդ իշխանների մոտ՝ նրանց հաշտեցնելու առաջելությամբ։ Հավանաբար նրանք նկատի առան այն հանգամանքը, որ Աղրիանոսը հողատիրույթներ ուներ Հարք գավառում³², որը հաճարվում էր Մանավազյանների հայրենակալվածքը։ Սակայն Աղրիանոսին չհաջողվեց հաշտեցնել կրվազան նախարարներին, որոնք անարգալից խոսքերով պարսավեցին նրան ու շարունակեցին բնաջնջել միմյանց³³։

Նշված նախարարների միջև ծայր առաջ ընդարումներն ամենայն հավանականությամբ նույպես հրահրված էին Շապուհ Բ.-ի կողմից, որը կամենում էր այդպիսով Հայաստանում ստեղծել խառնաշփոթ իրավիճակ, հեղինակագրկել Հայոց Արշակունի թագավորին և առաջ մղել իր կողմնակից հերանոսաբարո հայ նախարարներին։ Այդ ընհարումներն արգասիք էին խոսրով Կոտակի թագավորական իշխանության թուլության³⁴ անշուշտ, նաև Էականորեն պայմանավորեցին այն։ Ստեղծված պայմաններում հատկապես կարևորվում էր Եկեղեցու և կաթողիկոսի խաղացած դերը երկրի պետական-քաղաքական հարաբերություններում։ Ընդսմին Շապուհ Բ.-ի վարած քաղաքականության սուր սլաքն ուղղված էր նաև Հայոց Եկեղեցու դեմ։

Սասանյան թօնակալը հետևողականորեն շարունակում էր դավադիր ծեռնարկումները Հայաստանի դեմ։ Նրա հրահրմանք 337 թ. Աղձնիքի թեղշխ Բակուրն ապստամբեց խոսրով Դ արքայի դեմ։

31 Փավստոս Բուզանդ, III, I, էջ 14-15։

32 Նույն տեղում, V, Իթ, էջ 190, VI, Բ, էջ 223։

33 Նույն տեղում, III, Ղ, էջ 9։

34 Յ. Սամանդյան, Երկեր, Բ, Երևան, 1978, էջ 145։

Շապուի Բ-Ը զորքով լայն աջակցություն ցույց տվեց խռովարար բղեշիմ: Ավելին, Պարսից զորքն օժանդակեց նաև այդ նույն տարում Հայոց թագավորի դեմ ապստամբած Քզնունիք գավառի տիրոջը՝ Դատարբեն իշխանին: Այդ բախտորոշ պահին թագավորն ու կաթողիկոսը միասին խռովարկու ուժերի դեմ ձեռնարկեցին կանխարգելող միջոցներ: Նրանց հաջողվեց միաբանել թագավորին ու Եկեղեցուն հավատարիմ մնացած ուժերին և պարտության մատնել Աղջնյաց և Քզնունյաց տերերին: Բայց դրանից հետո ևս շարունակվեցին Սասանյան տիրակալի դավադիր ձեռնարկումները Հայաստանի նկատմամբ, որի նախարարներն արդեն թշնամու դեմ գործում էին համադաշն ծերունազարդ Վաչե սպարապետի գլխավորությամբ հակահարված տալով անարգ ոսխին: Նրանք «ոչ տային անխատիր արշաւել աւերել գերկիրն Հայոց», գործ է պատմագիրը³⁵: Այդպիսով թագավորի ու կաթողիկոսի ջանքերը տվեցին սպասված արդյունքները:

Նշված իրադարձությունների ժամանակ երկիրն ալեկոծող Ծերքին ու արտաքին ուժերի դեմ մղվող պայքարում Եկեղեցին ու պետությունը դրսնորեցին իրենց միասնությունն ու շահերի ընդհանրությունը: Դա Հայաստանի վերին իշխանության երկու գորավոր հենասյունների բնական դաշինքն էր, որն առավել հասուն երանգներ ընդունեց բախտորոշ այդ պահին, քանի որ Հայոց պետության սրտին ուղղված ամեն մի հարված միաժամանակ խոցում էր նաև Եկեղեցուն՝ սպառնալիքի տակ դնելով նրա գոյությունը: Այս իրողության հետնախորքի վրա հասկանալի է դաշնում խոսրով կոտակի և Վրթանեսի սերտ համագործակցությունը, վերջինիս հասարակական-քաղաքական հավատամքը, որի ցույցունը, վերջինիս հասարակական-քաղաքական հավատամքը, որի նպատակն էր Հայաստանի, նրա պետության գորացումը, Ծերքին ու արտաքին անդորր ընձեռելը: Երկրի համար օրիհասական պահերին մեծակորով Հայրապետը ռազմի խրախուսներ էր տալիս զորքին ու ժողովրդին և, ի գործ դնելով իր իշխանությունն ու հեղինակությունը, անձնական օրինակով ու մարտասնույց քարոզներով ոգեանդում նրանց: Վրթանեսի օրոք ամենայն ուժով դրսնորվեցին Հայ Առաքելական Եկեղեցու պահպանող ոգին, հայրենաշունչ ավանդները: Զորքի մարտական կորովը բարձրացնելու նպատակով Վրթանեսը հատուկ կոնդակով սահմանեց, որ ամեն տարի պատարագաժամին անհրա-

ժեշտ է հիշել հայրենիքի պաշտպանության զոհասեղանին իրենց կյանքը նվիրաբերած հայ մարտիկների անունները³⁶:

Հայոց գործի մարտունակությունը բարձրացնելու նպատակ էր հետապնդում նաև Վրթանեսի միջամտությունը՝ Պարսից գործերի դեմ 338 թ. մնված մարտում զոհված Կաչե Մամիկոնյանի դեռահաս որդուն՝ Արտավազդին, իոր պատիվն ու բարձը շնորհելու համար: Ըստ Փավստոս Բուզանդի, «հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս հանդերձ բազաւորաւն», որպեսզի Արտավազդը «կացցէ ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ»³⁷:

Վրթանեսի գործունեությամբ աճեց Հայոց Եկեղեցու հեղինակությունը քրիստոնեական աշխարհում՝ շնորհիվ հեթանոսության դեմ նրա հետևողական ու անզիջում դիրքորոշման: Հայ Եկեղեցին ինքնուրույն կերպով լուծում էր իր ներքին ծիսական ու պաշտամունքային խնդիրները: Հատկանշական փաստ է, որ այդ բնագավառում կանոնական բարեկարգություններ ծեռնարկելիս Վրթանեսը բնավ չապավինեց Կեսարիայի մետրոպոլիտի խորհուրդներին, այլ գերադասեց դիմել Երուսաղեմի Պատրիարք Սակար Ա-ին, որը հարգալիր պատասխանով արձագանքեց Հայոց Կաթողիկոսին՝ նրան ուղարկելով նաև Եկեղեցու ծիսակարգի վերաբերյալ ինը կանոններ³⁸: Ածուշտ հիմնավորված չէ այն կարծիքը, որ նշված կանոնները Հայաստան է ուղարկել ոչ թե Սակար Ա-ը, այլ Երուսաղեմի Սակար Բ Պատրիարքը, և այն էլ ոչ թե Վրթանես Կաթողիկոսին, այլ Սյունիքի Վրթանես Եպիսկոպոսին, որը գահակալել է շատ ավելի ուշ՝ Զ դարում³⁹: Ժամանակին այս տեսակետը իրավացի կերպով վիճարկվեց⁴⁰:

Նկատենք, որ Խնդրահարույց կանոնները կրում են «Կանոնք Սակարայ առաջնոյ» վերտառությունը և հղված են «առ քրիստոսասէր և երկիւղած եպիսկոպոսապետ Վրթանես և առ համարէն եպիսկոպոս և քահանայս Հայոց»⁴¹: Դժվար չէ հետևեցնել, որ կանոններն ուղարկվել են Հայաստանի բոլոր հոգևորականներին ու նրանց

36 Նույն տեղում, III, ԺԱ, էջ 24:

37 Տե՛ս նույն տեղում, էջ 24-25:

38 Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 407-412:

39 Ն. Ակիննան, Թուղը Սակարայ Բ Երուսաղեմի հայութեան առ Վրթանես Եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղաք կարգաց Եկեղեցու, Վիեննա, 1930, էջ 22-25:

40 Տե՛ս Վ. Քացունի, Առ Վրթանես թղթին հեղինակը Սակար Առաջինն է, ոչ Երկրորդը, «Բազմավեպ», 1931, էջ 70-71:

41 Կանոնագիրք Հայոց, Բ. աշխ. Վ. Քակոբյանի, Երևան, 1971, էջ 219-221:

առաջնորդին և ոչ թե սուկ Սյունյաց Եպիսկոպոսին, որը, բնականարար, չէր անվանվի «Եպիսկոպոսապետ»: Խնդրո առարկա կանոնները կիհառվելու էին Յայաստանի բոլոր Եկեղեցական վիճակներում, այդ թվում, անշուշտ, նաև Սյունիքում: Մակար Ա-ի կամոնական այդ թղթում հանձնարարվելու էր «զամենայն կանոնադրութիւնս սրբոյ ժողովոյն որ վասն հերձուածողացն Եղեւ՝ միաժամանակ նշելով, որ «չէ պարտ ծուլալ և դանդաղել Եպիսկոպոսացն և Երիցանցն ի մկրտել զայնոսիկ, որք կամին մերձենալ ի բարեպաշտութիւն աստուածապաշտութեան... խրատել և ուսուցանել բանիւ և վարդապետութեամբ, մերժել ի սատանայտ և ընծայեցուցանել Աստուծոյ սրբոյ աւագանին լուսաւորութեամբ...»⁴²: Երուսաղեմի Յայրապետը շեշտը դնում էր նաև «առաքելոց աւանդութեան» սկզբունքներով առաջնորդվելու վրա՝ նկատի առնելով, անշուշտ, Յայոց Եկեղեցու առաքելական արմատները: Զ կանոնը պատվիրում էր «ուղիղ դաւանել խոստովանութեամբ՝ ուրոյն ի հերձուածողացն փորձիչ խորհրդոց. զի մի արիանոսացն մերձ լինելով...»⁴³: Ինչպես տեսնում ենք, Մակար Ա-ն շեշտում էր քրիստոնեությանը խորք տարրերին դարձի բերելու անհրաժեշտությունը՝ նկատի առնելով ոչ միայն հերձվածողներին, այլև հեթանոսության հետևորդներին:

Հեթանոսության դեմ մղվող պայքարում Յայոց Եկեղեցու համար հույժ կարևոր նշանակություն ուներ քրիստոնեական աշխարհի հետ միաբանության պահպանումը: Մակար Ա Պատրիարքին Վրթանեսի կողմից հղված դիմումը նպատակ էր հետապնդում մյուս Եկեղեցիների հետ ծիսական-պաշտամունքային միասնության պահպանումը: Յայոց Եկեղեցին և քրիստոնեական մյուս Եկեղեցիները ծիսա-դավանական առումներով առաջնորդվում էին Նիկիայի տիեզերաժողովի գծած շավդով: Մակար Վերջինիս ընդունած կանոնական որոշումների կիրառումը երբեմն խաթարվում էր Յայաստանում, ուստի զգացվում էր դրանց լրացուցիչ լուսաբանության անհրաժեշտությունը, հատկապես այդ կանոնների սահմանած ծիսական, պաշտամունքային դրույթների վերաբերյալ: Վրթանեսը կարողացավ (անշուշտ, Երուսաղեմի Պատրիարքի խորհուրդները հաշվի առնելով) վերացնել կանոնական թյուր-

42 Նույն տեղում, էջ 218, 220, 227:

43 Նույն տեղում, էջ 227:

ըմբռնումները և դրանցից բխող ծիսական խոչընդոտները: Ասվածին հարկ է ավելացնել նաև, որ Մակար Ա-ն պատասխան թղթում բնավ չեր արծարծում Յայ Եկեղեցու ինքնագո հիմքերը շոշափող խնդիրներ, քանի որ Երուսաղեմի Աթոռը նվիրապետորեն գերակայություն չուներ Յայոց Եկեղեցու նկատմամբ և հիմնվել էր ավելի ուշ՝ 325 թ. Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ:

Վրթանեսը հեթանոսության դեմ հետևողական պայքարը շարունակեց նաև Խոսրով Կոտակի հաջորդ Տիրան թագավորի օրոք՝ լայն գործունեություն ծավալելով նաև պետական-դիվանագիտական ասպարեզում: Ըստ Սովուս Խորենացու, Խոսրով Կոտակի մահից հետո Վրթանեսը գումարել է Յայոց ավագ նախարարների, զորապետների ժողով, որտեղ որոշվել է Յայաստանի ժամանակավոր կառավարիչ նշանակել Արշավիր Կամսարականին: Այնուհետև Կաթողիկոսը Տիրանին տարել է հռոմեական կայսր Կոստանդի մոտ և կարգել տվել Յայոց թագավոր⁴⁴:

Վրթանեսի կենդանության ժամանակ Տիրանը դրսերեց հռոմեամետ ուղեգիծ, որը թերևս արդյունք էր նաև թագավորի վրա նրա ունեցած ազդեցության: Կաթողիկոսը, Ելենով Յայաստանում խմորված կացությունից, ջանում էր Երկրի արտաքին քաղաքական սլաքն ուղղել դեպի Արևոտք՝ Հռոմեական կայսրություն, հավատակից այն Երկիրը, որի օգնությամբ նա հույս էր ակնկալում ետ վանել Սասանյանների կողմից հովանավորվող գրադաշտության օրավոր աճող չարագույժ հորձանքը, որը հոյի էր քաղաքական վտանգավոր հետևանքներով՝ Յայոց թագավորության և բուն իսկ Եկեղեցու հետագա գոյության համար: Սակայն Տիրան թագավորը (թերևս հեթանոսամետ հայ նախարարների ազդեցությամբ) հակվեց հեթանոսության կողմը, թեև, ինչպես հավաստում է պատմագիրը, նրա այդ վարքագիծը դեռևս բացորոշ դրսերումներ չուներ, քանի որ Տիրանը երկյուղում էր «ի մեծեն Վրթանիս»⁴⁵: Յայոց Յայրապետի շուրջ պարուրված ոճրաբույր մթնոլորտում նրա դեմ դավ նյութվեց: Ավանդական պատմությունը հավաստում է, որ Սիմ Լեռան հեթանոսաբարո բնակիչներն էին Վրթանեսի դեմ դավադրության կազմակերպողները: Կաթողիկոսը միշտ հանդիմանել էր նրանց մոլորաշավիր վարքի, «չարադես արարքների համար»⁴⁶: Փափսու

44 Սովուս Խորենացի, III, Ժ, էջ 268:

45 Խումբ տեղում, III, ԺԱ, էջ 269:

46 Տե՛ս Սովերը Յայկականը, Ժ, Վենետիկ, 1854, էջ 52:

Բուզանդի վկայությամբ, Վրթանեսի դեմ ուղղված դավին մասնակից էր նաև Յայոց թագուհին, որի հրամանով էին գործում դավադիրները: Նրանք իրենց դժինեմ մտահղացումը փորձեցին իրագործել դեպի Յայստան Շապուհ Բ-ի կատարած արշավանքի ժամանակ, երբ Վրթանեսը Պատարագ էր մատուցում Աշտիշատի եկեղեցում: Սակայն դավադրությունն ի ռերս հանվեց, ապա կաթողիկոսը ժամանեց Յայոց գործի մեջ ու իր հայրենացունչ քարոզներով ոգեանդեց նրան⁴⁷:

Անշուշտ դավադրության ձախողումը վկայում է, որ Վրթանեսը լայն հենարան ուներ ժողովրդի մեջ և բնավ էլ դյուրին որս չեր դիցամոլ ամբոխի ու նրան սատար կանգնողների համար:

Արիստակեսի ու Վրթանեսի օրոք Յայ Առաքելական Եկեղեցին, չնայած կրոնական ու քաղաքական ալեհույզ կացությանը, ավելի ամրապնդեց իր հիմքերը: Փոթորկաշունչ իրավիճակը կոփեց Նրան, փորձությունների բովում բյուրեղացավ Յայոց առաքելադրոշմ հավատքը, որպես բնական արգասիք Լուսավորչի փառասուն զավակների՝ ազգի հոգևոր կորովը մարմնավորող ուխտանվեր այրերի բեղուն գործունեության: Նրանց ցանած սերմերը հետագայում ևս տվեցին իրենց կենսունակ ծիլերը: Վրթանեսի որդին՝ Յուսիկ Կարողիկոսը, և Լուսավորչի տան մյուս ներկայացուցիչները ցկյանս հավատարիմ մնացին այդ կոչմանը՝ քրիստոնեական հավատի երկնասփյուր լույսը վառ պահելով Յայոց լեռնաշխարհում:

⁴⁷ Φωματονού Βοιωτίανη, III, 9, τρ 7, συ, τρ 23:

ՍԱՍՈՒՆԻԿ ՎԻՐԱԲԵՅՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ՇՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

(15-րդ - 18-րդ դդ.)

Եջմիածնի վանքի հողատիրության և տնտեսության վերականգնումն ու զարգացումը սկզբնավորվում է Մովսես Տաթևացի Կաթողիկոսի գահակալության տարիներին (1629-1632): Մաքրվում է վանքի շուրջբոլորը, պարսպապատվում է այն, կառուցվում են տներ՝ հոգևորականների և հյուրերի համար, միաբանների խցեր, սեղանատուն, փուռ, տնտեսատուն, ցորենի և այլ նյութերի աճբարանոց: «Այս բոլոր շինվածքներից միայն պարհապն է հողից շինված, գրում է Դավիթեցին, իսկ մնացած բոլոր շինվեցին տաշած քարով, բրծված առյուտով, կրով ու գաջով, գեղեցիկ ու վայելուչ հորինվածքով»¹: Մովսես Տաթևացին Օհանավանքում բացում է դպրոց, կարողանում է վանքն ազատել տարեկան 100 բուման տուգանքից, որը շահական դավթարներում գրանցված էր Եջմիածնի վրա:

Եջմիածնի վանքի հողային սեփականությունն սկսում է ավելանալ ու ընդարձակվել Փիլիպպոս Աղբակեցի Կաթողիկոսի աթոռակալության տարիներին (1633-1655): Երբ նա 1645 թ. Վաղարշապատ գյուղում փորձում է փոքր-ինչ հող մշակել, Երևանի Մուհամմադկուլի խանը նրանից բահրա է պահանջում: Կաթողիկոսը դիմում է Շահ Աքբաս Բ-ին (1642-1666)՝ խնդրելով վանքն ազատել հարկերից: Այդ դիմումում Կաթողիկոսը գրել է, որ «այժմ աղքատության պատճառով մեկ գութանի վարելու տեղ հազիվ ենք կարողանում սերմ գցել հողի մեջ»: Ապա Կաթողիկոսը շահին խնդրում է, որ կրկին հաստատվի Եջմիածնի վանքի մուլքադարական իրավունքը Վաղարշապատ գյուղի նկատմամբ: Նա գրում է. «այս գեօղիս մուլքն ի բնէ անտի սրբոյ Աթոռոյս է լեալ.

¹ Միմեռն Կաթողիկոս Երևանցի. Զամբո, Գիրը որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնակից որպիսութեանց Արքոյ Աթոռոյս և իւրո շոշակայից վանօրէցն. Վաղարշապատ, 1873, էջ 104 (այսուհետև՝ «Զամբո»):

այժմ խաներն և այս այն զարթեալ ուտեն, և Արոռոյն ոչ գոյ ապրուստ»:
Այսուհետև Աղքակեցին շահին հիշեցնում է, որ «զայսքան դրամ խար-
ճեալ յԱպարանու ջուր բերի ի յօգուտ երկրիս»: «Զամքոյ» հեղինակը
տեղեկացնում է, որ «Շահն ռադամ (շնորհագիր - Ս. Վ.) գրէ, թէ ետու
զվեց դանկ մուլքն գեղջո եջմիածնի Արոռոյն, այսուհետև մի ոք
իշխեսցէ ձեռնամխիլ»: Թեև վաճճն ուներ մի քանի զորեղ փաստա-
թոթեր, այդուհանդերձ ամեն նոր շահի գահ բարձրանալիս Կաթողի-
կոսները «արզա» (խնդիրք, աղերսագիր) էին ներկայացնում նրան և
խնդրում, որ Վաղարշապատի մուլքն իրենց շնորհեն նախկին շահերի
օղինակով:

Փիլիպոս Աղբակեցին վաճքի միջոցներով 1640-1645 թ. մի քանի անգամ թեկերից մաս-մաս գնել է Օշական գյուղի 5 դունգ մուլքը, իսկ 1650 թ. Խոչա Սուրբիասից՝ Ղարաղոյունու գյուղի լոիվ՝ 6 դանգ մուլքը: Իր գահակալության վերջին տարրում՝ 1655 թ. նա գնում է նաև ֆրանկանց և Բաթռինց գյուղերի մուլքերը²: Աղբակեցին երբ նորոգում է Մուլդի գյուղի Սուրբ Գևորգի վաճքը, վերջինիս է նվիրում այդ գյուղի էջմիածնապատկան 6 դանգ մուլքը³:

Եջմիածնի վանքի հողային սեփականությունն է՝ ապելի և ընդարձակվում Հակոբ Զուլայեցի Կարողիկոսի արռօակալության տարիներին (1655-1680): Սա գնում և վանքի սեփականությունն է դարձնում Ամիր, Յայջի, Մուլքի, Մելիքօգուդ, Մանկանց (Օշական), Քեշիշքենդ, Նորք, Դիպաքլու, Բյուրական, Ծոպանիս, Կյատուր, Քասաղ և Սևավերգութերի 6-ական դանգ մուլքերը⁴: Բացի այդ, շարիաթական վակֆնա-

² Ղարանդոյունլու գյուղը, մեր կարծիքով, տեղորոշվում է Արարատյան դաշտում: 19-րդ դարի սկզբներին լրված ու անձնադրանակ եր:

³ Ֆրանկամոցը նախկին Եջմիածնի շոքանի Ամբերդ գյուղու է, իսկ Բաթումը (Փաթում)՝ նախկին Աշտարակի շոքանի Ուկեհատ գյուղը:

4 Սուլքի գյուղը վարչատարածքային կարգով Ենթարկվում է Ապարանի քաղաքապետարանին: Ամիրի, Յայշի և Մելիքբյուր գյուղերը դարձյալ տեղորոշվում են Արարատյան դաշտում, լրված ու ամճարդաբնակ են: Քեշիշենոց տեղորոշվում է Էջմիածնի մոտակայքում՝ նույնպես անճարդաբնակ: Դիպաքլուն Արայի լեռան հյուսիսային կողմում էր, 19-րդ դարի 1-ին քառորդի վերջին լրվել ու աճայացել է, իսկ ծովանիսը տեղորոշվում է Բյուրականի մոտ, 1826-1828 թթ. ոռոս-պարսկական պատերազմից հետո անճարդաբնակ էր: Կյասուրը, մեր կարծիքով, նախկին ոռոս-պարսկական պատերազմից հետո անճարդաբնակ էր: Կյասուրը, մեր կարծիքով, նախկին

մեներով էջմիածնի վանքին էին տրված Մաստարա, Նորագեղ, Եղվարդ և Բոխենիս գյուղերի մուլքերը: Դրանք վանքին վակֆ էին արել հայ բարեգործները:

Այսպիսով, 1680 թ. էջմիածնապատկան էին 23 գյուղերի մուլքերը, որոնցից 7-ը վակֆային էին, իսկ 16-ը՝ գանձագին: Այս 23 գյուղերի վանքին պատկանող ընդհանուր մշակելի հողատարածությունը (վարելահող) կազմում էր շուրջ 3000 սոնարատեղ⁵:

Բացի վակֆային և մլքատու գյուղերից, էջմիածնի վանքն ուներ նաև սեփական հողեր ու այլ կալվածքներ, որոնց մեծ մասը գտնվում էր Վաղարշապատ գյուղում: Դրանք նույնպես վանքը տիրում էր վակֆային իրավունքով: 1644 թ. պարսից Շահ Աբրաս Բ-ի հրովարտակի համաձայն էջմիածնապատկան այդ հողերը նույնպես ազատվել են պետական հարկերից:

Այդ հողահանդակները հետևյալներն են.

1. Շորաքարի հողերը (250 սոնարատեղ)
2. Վանքի ներքին կողմի հողակտորը (20 խալվարատեղ)
3. Ջերանենքի կամ Քյուլքափայի հողերը (350 սոնարատեղ)
4. «Բազիրգան յոլի» («Վաճառականների ճանապարհ») հողամասը (90 սոնարատեղ)
5. Սաղակուի հողակտորը, որի միջով երկու առու առու էր անցնում (100 սոնարատեղ)
6. Իլանլուում գտնվող հողակտորը, որը կոչվում էր Ներքին Քյոնդալան
7. Իլանլուի վերին մասի հողակտորը, որը կոչվում էր Շահարիս (50 սոնարատեղ)
8. Ջաջիլարի հողակտորը (120 սոնարատեղ)
9. Քարաքի հողակտորը (220 սոնարատեղ)
10. «Երեք բահ ջրի» և այլ հողամասեր⁶:

Խենքի (Սամսոն Տեր-Պողոսյան) ծննդավայրը: Նորագեղը Երևան քաղաքի կազմում է, իսկ Բոխենիսը տեղորոշվում է նախկին Էջմիածնի շրջանում, 19-րդ դարի սկզբին լքված ու անմարդաբնակ էր: Մուղնին Աշտարակ քաղաքի կազմում է, իսկ Զիրավլուն նախկին Նահրիի շրջանի Բուժական գյուղի նոտերքում էր, այժմ լքված ու անմարդաբնակ:

⁵ Սոնար - հացահատիկների չափ: Մեկ սոնարը 256 կգ գարի, 288 կգ ցորեն: Տարածության սոնարում ցանկվում է մեկ սոնար հացահատիկ: Եթե նկատի ունենաք, որ սոնարը Յայսատանի տարրեր նահանգներում փոքր-ինչ տարրեր չափ ուներ, ապա ընդհամրացնելով 1 սոնար = 300 կգ:

⁶ «Զամբռ», էջ 154-155:

Վարելահողերից բացի, վանքն ուներ նաև խաղողի և պտղատու այգիներ: Համաձայն Շահ Արքաս Բ-ի նշված հրովարտակի, Եջմիածնին էին պատկանում Մարտիրոսի այգին, Գևորգի, Շահգեղանի, Գրիգորի և «Ղարիբների գերեզմանոցի» մոտ գտնվող պարտեզները⁷: Այնուհետև 1649 թ. Փիլիպպոս Աղքակեցին Երևանի թեյ Խոսրով խանից (1652-1656) վերցնում է հատուկ հրովարտակ, որով որպես վակֆ արքունական հարկից ազատվում էին վաճքին պատկանող Անապատի, Չայ-Կայթարանի և Սարգսի որդի Թունիի այգիները (Երևանում), Անապատի այգուն կից այգին (Զորագյուղում)⁸, Դավիթ Վարդապետի այգին (Նորքում), Աղիբեկի և Շաղվերդու այգիները (Օշականում) և Շիրաբադում⁹ ու Աշտարակում եղած մեկական այգիները:

Վանքը իր 21 այգիներից տարեկան միջին հաշվով ստանում էր մոտ 210 խալվար¹⁰ խաղող և պատրաստում շուրջ 240 կարաս գինի: Պտղատու այգիներից վանքը տարեկան ունենում էր մոտ 800 թումանի¹¹ գանձան մրգեր:

Եջմիածնի վանքը ջրաղացներ ուներ Երևանում (1 քար, Սարգսի), Ղոխս գյուղում (2 քար, Մարտիրոսի), ինչպես նաև Զորագյուղում՝ 3 քար, Վաղարշապատում՝ 2 քար, և Նորագեղում՝ 1 քար:

Եջմիածնի վանքը հարստահարվելով Երևանի խաների կողմից, հաճախ ընկել է ծանր պարտքերի տակ: Կարողիկոսներն ստիպված գրավ են դրել վանքապատկան գանձագին հողերը: Սակայն թե ո՞ր մուլքերն են գրավ դրվել, այդ մասին արխիվային փաստաթղթեր մեզ չեն հասել: Վանքապատկան գյուղերի գրավ դրվելն սկսվել է Հակոբ Զուլայեցու գահակալության վերջին տարիներին: Եթե 1680 թ. մինչև 1720-ական թվականները (ավելի քան 40 տարի) վանքի մուլքային գյուղերի մասին տեղեկություններ չեն եղել կամ չեն պահպանվել, ապա հավանաբար այդ գյուղերը պարտքերի դիմաց սեփականացվել են պարտատերերի կողմից:

Եջմիածնի վանական տնտեսությունը դեռևս կենսունակ էր Ալեքսանդր Ա Զուլայեցի Կաթողիկոսի աթոռակալության տարիներին:

⁷ Հրովարտակներ, II, Վակերագրեր 11, 26:

⁸ Զորագյուղ Երևանի թաղանասերից է:

⁹ Շիրաբադը նախկին Եջմիածնի շրջանի Փարաքը գյուղն է:

¹⁰ Խալվար - ծանրության չափ, որ հավասար է 30 փրհ կամ 490 կգ, իսկ տարածության խալվար

հավասար է մեկ խալվար սերմացու ցանելու հողատարածք (արտ):

¹¹ Թուման - Պարսկական դրամական միավոր մինչև 1930 թ.

1 թումանը = 2 ռուբ. 85 կուպ.:

(1706-1714): իր շինարարական և օգտավետ գործունեության մասին Մովսես Զուղայեցուն 1713 թ. հունիսի 4-ին հղած նամակում նա գրում է. «Տասն տեղ քարխանայք ունիմ, երեք հարյուր ավելի ուստա և մշակ կու բանի», այնուիետև նա, որպես իր գործունեության լավագույն արդյունք, առանձնացնում է նաև Երևանի այգին, Օշականի մուլքը և մեծ առունեցին¹²: Նախ Օշականի մուլքի մասին: Հայտնի է, որ Փիլիպպոս Ալբակեցին և Հակոբ Զուղայեցին մաս-մաս գնել էին այդ գյուղի 5 1/2 դանգ մուլքը, իսկ 1681 թ. աթոռակալ Մինաս վարդապետի օրոք Օշականի մնացած կես դանգ մուլքը Ստեփանոս վարդապետից 10 թումանով գնում է և Էջմիածնի վանքին վակֆ անում Նախիջևանի գավառի Բիստ գյուղի Խոջա Գասպարը: Փաստորեն 1681 թ. Օշական գյուղի 6 դանգ մուլքը Էջմիածնի վանքի սեփականությունն էր:

Օշականն ու Ֆրանկանոցը վանքին վճարում էին կրկնակի մուլք: Օշականի համայնքը կարիքից ստիպված Աստվածատուր Համադանցի Կաթողիկոսից 1722 թ. 150 թուման պարտք է վերցնում՝ համաձայնվելով, որ վանքին կվճարի Երկրորդ կամ կրկնակի մուլք, որը կազմում էր բերքի 1/5 կամ 2/10 մասը: Իսկ ֆրանկանոցը վանքին Երկրորդ մուլք էր վճարում 1731 թվականից: Սակայն երբ հնարավորություն էր ընձեռվում մարել պարտքը, Երկրորդ մուլքը այլևս չէր վճարվում:

1711 թ. Էջմիածնապատկան Օշական գյուղի հողագործները, տուժելով կարկտահարությունից և ուրիշ աղետներից, ստիպված պարտք են վերցնում Երկու պարտատերերից՝ Միրզա Մամադ բեկից 180 թուման՝ գրավ դնելով 20 այգի և 5 ջրաղաց, իսկ մյուս պարտատեր Խոջա Մոսեսից՝ 150 թուման՝ այս անգամ գրավ դնելով 8 այգի և 12 ջրաղաց: Սակայն գրավի ժամկետն անցնելուց հետո նրանք չեն կարողանում պարտքերը մարել և պայմանագրի համաձայն գրավ դրած այգիներն ու ջրաղացները պետք է մնային պարտատերերին: Այս Ալեքսանդր Զուղայեցին, վճարելով օշականցիների պարտքերը, ստանում է այգիների ու ջրաղացների մուլքերը՝ հօգուտ վանքի¹³:

Ինչ վերաբերում է «մեծ առվին», դեռևս 1698 թ. Նահապետ Եղեսացի Կաթողիկոսը (1691-1705) ոմն Պուրծ Ալի բեկի ժառանգներից և նրա այրի Փարի Խանումից 50 թումանով գնում է Հրազդան գետից սկիզբ առնող ջրանցքը, կառուցում նրա շարունակությունը և ջուրը հասցնում Հրիփսիմեի վանքի շրջակայքը: Հավանաբար Ալեքսանդր Զուղայեցին ևս շարունակել և ավարտին է հասցրել ջրանցքի կառու-

¹² Սաղաթիա Օրմանեան, Ազգապատում, Բ հատոր, մասն Գ, Պեյլուր, 1960, սյունակ 2799:

¹³ «Զամբո», էջ 174:

ցումը, ապա կառուցել ջրանցքի բաժանարարները և ներքին ոռոգման մյուս ցանցը: Մեր կարծիքով հենց դա էլ «մեծ առուն» էր, որը գործեց մինչև Աստվածատուր Դամադանցու աթոռակալության (1715-1725) առաջին տարիները: Թուրքական տիրապետության տարիներին այն արդեն խաթարված էր: Ըստ եղած տվյալների, այդ ջրանցքը ուղղել է շուրջ 300 խալվար ցանքատարածություն: Բացի այդ, Զուղայեցին 1709 թ. դիմել է Երևանի Ալլահկուլի խանին և ստացել հատուկ հրամանագիր Քասաղի ջրերի նկատմամբ վաճքի սեփականատիրական իրավունքի մասին: Սակայն կարողիկոսական դիվանում չի պահպանվել Սիմեոն Երևանցու վկայակոչած այդ հրամանագիրը: Բայց Քասաղի ջրերի օգտագործման իրավունքի մասին կան թուրքական տիրապետության ժամանակաշրջանից պահպանված փաստաթղթերը: 1725 թ. Ռազար փաշան կրկին վաճքին է ամրագրել Քասաղի ջրերից էջմիածնին հասնող բաժինը՝ հավանաբար նրանից վերցնելով իին արտոնագրերը:

Ալեքսանդր Զուղայեցուն հաջողվում է 1712 թ. ստանալ Երկու գութանի կարողության վարուցանքից բահրա չվճարելու իրավունք, որը բավականաշափ թերևացնում էր էջմիածնի հոգաբ¹⁴: 1709 թ. Մաստարա գյուղից ոմն Մելք Ալեքսանդր Զուղայեցուն վաճառել է այդ գյուղի 3/4 դանգ մուլքը՝ 11 թումանով¹⁵:

Վաղարշապատ գյուղի 1725 թ. թուրքական հարկացուցակից իմանում ենք, որ այդ թվականին էջմիածնի վաճքին էին պատկանում Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Քիրաջլու և Ֆրանկանց գյուղերի մուլքերը¹⁶: Վաճքին պատկանող մյուս գյուղերից մի քանիսը թուրքական կարճատև տիրապետության տարիներին ամայացել էին, մյուսները դուրս էին եկել վաճքապատկանությունից և դարձել պարտատերերի սեփականություն: Ղեղա 17-րդ դարի վերջերին կառավարած Սուլթանակուլի (1688-1691) և Ֆազլալի (1691-1700) խաների օրոք նորից դիվանի հողերի շարքն էին դասվել Եղվարդ, Նորագեղ, Ամիրի գյուղ և Յայջի գյուղերը, իսկ Բոխենիսի հողագործները, օգտվելով վաճքի քաղաքական ծանր կացությունից, տիրել էին գյուղի բոլոր հողերին:

¹⁴ Նույն տեղում, էջ 133:

¹⁵ Նույն տեղում, էջ 115:

¹⁶ Դ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները,

«Բանքեր Մատենադարանի», թ. 5, Երևան, 1960, էջ 453:

Թուրք Ռաջար փաշայի որոշմանը, վերը նշված հինգ գյուղերից հարկերի հավաքման իրավունքը վերստին տրվում է Եջմիածնի վանքին: Կաղարշապատ գյուղը բաժանված էր 4 թաղերի՝ Պողոսի, Գալուստի, Մուրքելի ու Յամզայի, և ուներ ընդամենը 390 տուն:

Եջմիածնի վանքը Վաղարշապատում ուներ 2 ձիթհանք, 6 ջրաղաց և մեկ դինգ, 29 արտ, 2 խոտհարք, 3 այգի: Բացի այդ, վանքն ուներ նաև 3 այգի Օշական գյուղում, 2 այգի՝ Շիրաբադ գյուղում, մեկ արտ՝ Կրիսրուլաղի մահալի Ղարաքիլիսա գյուղում, 2 ջրաղաց՝ Երևանում, 2 ջրաղաց և մեկ դինգ՝ Քալասա գյուղում: Այդ հարկացուցակում հստակ տեղեկություններ կան նաև Եջմիածնի վանքի ոռոգման համակարգի մասին: «Կարբիի նահիայի Օշական կոչվող գյուղի առվի ջուրը շաբաթվա մեջ մեկ օր և մեկ գիշեր պետք է հոսի հիշյալ լճի մեջ և Ուչքիլսա (Վաղարշապատ գյուղը-Ս. Վ.) գյուղի առվի ջուրն էլ հնուց անտի շաբաթվա մեջ մեկ օր և մեկ գիշեր հատկացված է վերոհիշյալ վանքի այգիներին, արտերին և խոտհարքերին: Զանգու գետից երեք ջրաղաց աշխատեցնող ջրի ներկայունս ավեր վիճակում գտնվող առուն նույնպես, նախկինում ընդունված ծևով օգտագործվի», - ասված է Ռաջար փաշայի արտոնագրում¹⁷:

Այդ նույն արտոնագրի համաձայն, Կաթողիկոսն ու կրոնավորներն ազատվում են հարկերից՝ ջիզյայից, իսփանցից, բեյթ-ուլ-մալից և այլ ընթացիկ (սովորութային) պարտավորություններից (Թեքալիֆ-ի ուրֆիյե): 1735 թ. հուլիսի 8-ին, Եղվարդում պարսիկների դեմ ճակատամարտում գլխովին ջախջախվելով, թուրքական զորքերը դիմում են փախտաւորի: Արևելյան Յայաստան ազատագրվում է և վերստին ընկնում պարսկական տիրապետության ներքո:

Այցելելով Եջմիածնին, Նադիր շահը նոր հրովարտակներով հաստատում է վանքի սեփականատիրական իրավունքները: Կանքի վերանորոգումը հանձնարարում է հմուտ վարպետների՝ հատկացնելով 1000 թուման: Կանքին է նվիրում 15 կգ կշռող ոսկե ջահը և տասնյակ ընտիր գորգեր:

Նադիր շահի՝ Յայաստանում եղած օրերին նրան ուղեկցում էր Ամենայն Յայոց Կաթողիկոս Աբրահամ Կրետացին (1734-1737): Այս խոհուն հոգևորականը իր կարևոր հարցադրումներով ու հնարամիտ պատասխաններով կարողացավ ծեռք բերել շահի համակրանքը և բազմաթիվ հարցեր լուծել հօգուտ Յայաստանի: Կրետացու օրոք վան-

¹⁷ Դ. Փափազյան, նշված աշխատությունը, էջ 453: Օշականի առվի ջրի 1/3 մասը 1722 թ. համայնքից գնել էր Աստվածատուր Յամադանցի Կաթողիկոսը:

քի սեփականությունն էին Վաղարշապատ, Մաստարա, Ֆրանկանց, Օշական, Քիրաջլու, Դիպաջլու և Զելեաի Ղշլադ գյուղերի մուլքերը¹⁸:

Նադիր շահի մահից հետո (1747) իրադրությունը փոխվում է: Նոր Կաթողիկոս Ղազար Զահկեցու (1737-1751) անխոհեմ վարմունքի և անհանդուրժող կեցվածքի պատճառով հալածվում ու ամբաստանվում են մի քանի հոգևորականներ: Վաճը խստագույնս տուժվում է և տուգանվում պարսից իշխանությունների կողմից: Գրավ են դրվում և վաճառվում տասնյակ եկամտաբեր հասույթներ ու այլ ստացվածքներ: Բանը հասնում է նրան, որ Կաթողիկոսն աքսորվում է Սևանա կղզի: Ծուրը մեկ տարի այստեղ մնալուց հետո, մի կերպ ազատվում է աքսորից և վերստին վերադառնում էջմիածին ու վերատիրում Սուրբ Աթոռը: Ղազար Զահկեցու անվան հետ են կապում վաճքի Վեհարանի և հյուրատան կառուցումը: Վերջինս կոչվում է Ղազարապատ:

Հաջորդ երեք Կաթողիկոսներից (Մինաս Ակնեցի, Ալեքսանդր Բյուզանդացի և Զակոր Շամախիցի) վերջինն (1759-1763) առանձնանում է նրանով, որ վերականգնում է հայուսական քաղաքական կապերը և հատուկ Կոնդակ հղում (1760) Ռուսաստանի կայսրուի Ելիզավետա Պետրովնային՝ խնդրելով օգնել ու աջակցել հյայերին ու վրացիներին՝ պարսկական լծից ազատագրվելու և Ռուսաստանին միանալու նպատակով: 1760 թ. գարնանը նա Վաղարշապատուն գրույցներ է ունեցել Շովեսի Եմինի հետ, նրան աջակցելու համար նամակներ գրել Վրաց Թեյմուրազ Բ և Զերակլ Բ թագավորներին: Զակոր Շամախիցին (1759-1763) կարգավորում է էջմիածնի վանքապատկան կալվածագրերը և հատուկ ուշադրություն դարձնում կալվածքներում կարգ ու կանոն հաստատելու և տնտեսական այլ հարցերի վրա: Էջմիածնի վանքը 1752 թ. գարնանը ցանել է 345 սոնար ցորեն ու գարի, իսկ աշնանը՝ 630 սոնար: Վաճը տարեկան ցանել է 4,5 խալվար քունչութ, որից ստացել է 1500 փութ բերք: Ցորենի և գարու բերքատվությունը կազմել է մեկին երեք կամ չորս, երեմն՝ հինգ:

Ըստ Ի. Շոպենի, պարսկական տիրապետության վերջին տարիներին էջմիածնի վաճքի ցանքատարածությունների հաճախառն միջին բերքը հացահատիկային մշակաբույսերից եղել է ցորեն՝ 6000 փութ, գարի՝ 1800 փութ¹⁹: Մինեն Երևանցու գահակալության տարիներին Վրաստանի թագավոր Զերակլ Բ-ն չորս արշավանք է կազմակերպել դեպի Երևանի խանություն: Զատկապես 1779 թ. Երկրորդ արշավանքի դեպի Երևանի խանություն:

¹⁸ Արքահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973, էջ 73:

¹⁹ И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПБ, 1852, стр. 680.

ժամանակ, երբ պատերազմական գործողությունները ծավալվում էին Արարատյան դաշտում, մի քանի ամսում անապատի վերածվեց այդ դաշտը: Վրացական բանակը, որի մի մասը վարձու էր, Երևանը գրավել չկարողացավ: Հայկական մի քանի գյուղերի բնակիչներ ստիպված գաղթեցին Բայազետի փաշայություն: Սակայն վրացական գործերը ճանապարհի կեսից նրանց ետ վերադարձրին դեպի իրենց ավերված բնակավայրերը: Տասնյակ հայկական գյուղերի միակ հույսն ու ապավենը էօմիածնի վանքն էր: Հայրենասեր Կաթողիկոսը կարգադրում է բացել վանքի շտեմարանները և ցորենն ու գարին, բրինձն ու մյուս մթերքները բաժանել սովատանջ բնակչությանը: Այս գյուղերի բնակիչներին բագավորը բնակեցնում է Գորիում, Հավլաբարում և Սղնախում:

Սիմեոն Երևանցու աթոռակալության սկզբում վանքին էր պատկանում միայն Վաղարշապատ գյուղի մուլքը: Մյուս գյուղերը զավթել էին Երևանի խաներն ու այլ իշխողներ, իսկ Ֆրանկանոց գյուղն անբողոքվին դատարկվել էր, բնակիչները ցիրուցան էին եղել: 1760 թ. Երևանի Յուսեյն Ալի խանը դիմում է Հակոբ Շամախիսի Կաթողիկոսին, որ ինքը կրնակեցնի այդ գյուղը պայմանով, որ իրեն տրվի նրա մուլքի կեսը: Կաթողիկոսի համաձայնությունից հետո խանն իրոք վերաբնակեցնում է Ֆրանկանոցը և մինչև 1768 թ. միայնակ տիրում այդ գյուղի մուլքին: Սակայն Սիմեոն Երևանցին մեծ դժվարությամբ կարողանում է տիրանալ Ֆրանկանոցի 3 դանգ մուլքին: Բացի այդ, Երևանցուն հաջողվում է նաև զորեղ փաստաթղթերի իհման վրա Յուսեյն Ալի խանից հետ ստանալ Աշտարակ, Եղվարդ, Սուլեման, Քիրազլու և Օշական գյուղերի մուլքերը, իսկ Սուլեյման-բեկ Կաջարից՝ Աղավնատան մուլքը²⁰: Սիմեոն Կաթողիկոսը մուսուլման բեկերից 1770-ական թվականների կեսերին գնում է Քասաղի աջ ափին գտնվող Ծաղկավանք²¹ գյուղի 6 դանգ մուլքը:

Սակայն, ինչպես վերը նշվեց, այս գյուղերի բնակիչների մի մասը ցրվում է և շատ քերին է հաջողվում վերադառնալ իրենց հայրենի շենքը: Սրանցից ոմանց Երևանի Յուսեյն Ալի խանը բռնի վերաբնակեցնում է իրեն պատկանող գյուղերում: Ապա Սիմեոն Երևանցին մեծ չարչարանքով կարողանում է մուլքադարական իրավունքով գնել նաև

²⁰ Բ. Մ. Արյունյան, Կրողության համար առաջարկ Երևան 17-18 ամականք 1940, էջ 9.

²¹ Ծաղկավանք - ավերակ գյուղ Երևանի նահանգի Էօմիածնի գավառում, քասաղ գետի աջ կողմում: Ղ. Ալիշանը այս գյուղի ավերակները տեղադրում է Արայի լեռան ստորոտներում անունը կապելով Սիմեոն Երևանցու հիշատակած Ծաղկավանք վանքի հետ:

Եղվարդ գյուղի մնացած 4,5 դանգ մոլքը, որը ցանկանում էր զավթել Հյուսեյն Ալին:

Դուկաս Կարնեցի Կաթողիկոսի օրոք (1780-1799) և պայքար է մղվել Եջմիածնի վանքի տնտեսությունը պահպանելու և բնակչության պաշտպանվածությունը ապահովելու համար: 1790 թ. փետրվարի 15-ին Կարնեցին Վրաստանի թագավոր Շերակ Բ-ին հատուկ նամակ է հղել և հայտնել, որ Վրաստանից հետ եկած Սուլդի գյուղի բնակիչներին Երևանի Մահմեդ խանը (1784-1805) բռնի տեղափոխել է այլ գյուղ: Կաթողիկոսը խնդրում է Շերակին, որ նա նամակ գրի խանին, որպեսզի վերջինս մուլճնեցիներին վերադարձնի իրենց գյուղը²²: Կաթողիկոսի համառ ջանքերի շնորհիկ Սուլճու հողագործները կրկին վերադարձնում են գյուղ և վերստին դառնում վանքապատկան: Դուկաս Կաթողիկոսը 1797 թ. բավկանաչափ եռանդ է գործադրել Օշականի Գետառ կոչված հանդամասը Դզլթամուր (Ոսկեվազ) գյուղի մուլճնեցի մահմեդականներից ազատելու համար:

Այսպիսով, 18-րդ դարի վերջին Եջմիածնի վանքին վակֆային իրավունքը պատկանում էին Վաղարշապատ, Օշական և Սաստարա գյուղերի մոլլերը: Բացի այդ, Եջմիածնին էին պատկանում Զանգիբարացի նահանգի Շաջիղարա (Այգեշատ), Կրիսուլաղի մահալի Գետարգել գյուղերի լրիվ և Եղվարդ գյուղի 4 1/2 դանգ մոլլերը: Իսկ Աշտարակը, Աղավնատունը, Ծաղկավանը և Քիրաջլուն Շերակ Բ-ի արշավանքների տարիներին տեղահանվել էին, մի քանիսը՝ ավերվել:

18-րդ դարի վերջերին վանքապատկան հողագործները Եջմիածնին հարկ էին վճարում և՝ բնամթերքով, և՝ դրամով: Դրամական հարկը կոչվում էր մալիաթ: Որպես մալիաթ յուրաքանչյուր ընտանիք վճարում էր 1 1/2 թուման, որը կազմում էր մոտ 6 ռուբլի արժաք դրամ: Իսկ բնամթերային տուրքը բաժանվում էր 2 մասի՝ բահրա և մոլլք: Բահրան պետությանը հասանելիք մասն էր, որը թիուլդարական իրավունքի համաձայն նույնպես տրվում էր վանքին: Մոլլքը փոքր-ինչ ավելացել էր և կազմում էր բերքի 1/6 մասը: Վաղարշապատ և Օշական գյուղերը, որպես վանքապատկան տիրույթներ, վճարում էին մոլլք և բահրա, իսկ մյուս գյուղերը վանքին տալիս էին միայն մոլլք: Սակայն Վաղարշապատի և Օշականի մոլլերի վրա իր վակֆային իրավունքները պահպանելու համար Եջմիածնը հարկադրված էր իր հերթին տարեկան 400 թուման մաղթա վճարել Երևանի խանին²³: Վանքապատկան

²² «Եջմիածն», 1998, 2, էջ 102-105:

²³ Սատենադարանի կաթողիկոսական դիվան, թորապանակ 1, վավերագիր 13:

գյուղերից բահրա և մուլք հավաքելու համար նշանակվում էր հատուկ վարդապետ, որը կոչվում էր մուլքանաժի: Բնամթերքով տրվող հարկերը վերցվում էին բոլոր գյուղատնտեսական նշակարույսերից՝ բռնձից, կտավատից, կորեկից, ցորենից, գարուց, քունջութից և այլն: Բերքահավաքի ժամանակ յուրաքանչյուր վանքապատկան ընտանիք տրամադրում էր մեկ հնձվոր, որը վարձատրվում էր վանքի կողմից: Վարձատրվում էին նաև բերքահավաքի մյուս մասնակիցները: Գյուղացիները պարտավոր էին սայլեր տրամադրել՝ բերքը տեղափոխելու համար: Սակայն այս պարտավորությունը որպես պարիակ ձրի էր: Վանքը կերակրում էր այն նշականերին, որոնք աշխատում էին նրա տնտեսությունում:

Եջմիածինը կալվածքներ ու մուլքեր ուներ նաև Արևատյան Հայատանում, Օսմանյան կայսրության հայաբնակ Վայրերում, Պարսկատանում, Վրաստանում և այլ տեղերում:

ՊԻՌՆ ՀԱԿՈԲՅԱՆ Արագածոտնի մասնակիության համար նշան
Բանահիրական գիտությունների դոկտոր Տիմոֆեյ Իվ Շվետչյան

2. ΗΟΙ ΣΟΥ ΕΙΣ ΕΛΛΑΣ ΉΓΕΙΡΟΥΝ

ԱՐԵՎԵԼԻ ԱՐԵՎՈՒՄ ԱՐԵՎՈՒՄ «ՄԵԿՆԻՉ»

Աստվածաշունչ մատյանները հայոց դպրության սկզբնավորման
ժամանակներից մուտք են գործել մեր կյանքի մեջ և խոր հետք թողել
հայ մարդու աշխարհայեցողության վրա: Գրքերից մի քանիսը, ինչպես
Ավետարան, Գիրք Առակաց, Սաղմոսք Դավթի, ծառայել են գրաճանա-
չության և մայրենի լեզվի ուսուցման ձեռնարկներ, ուրիշները՝ հոգեշահ
ընթերցանության նյութ և իմաստություններ քաղելու անսպառ աղբյուր:
Դայոց հին ու միջնադարյան մատենագրության, նաև նոր գրականու-
թյան էջերն առատ են Սուրբ Գրքից քաղված խորիմաստ
արտահայտություններով և բնութագրումներով, ըստ որում՝ շատերն
անհասցե, թաքնված մեջքերումների ձևով, որովհետև ինչը
ժամանակակից ընթերցող-ուսումնասիրողներին առեղջված ու
խորհրդավոր է թվում, հների համար ծանոթ տեղիներ էին, կես խոսքից
հասկանալի: Դին դպրոցը նորավարժներին պարտադիր կարգով
ուսուցանում էր այդ գրքերը: Դիշենք գեթ 1825 թ. Տիգիսում
տպագրված «Դեգ Սաղմոսք կամ Առաջին կանոն Սաղմոսի հեգենայիւծ
հատուածեալ» գիրքը, որով գրաճանաչություն էին ստվորում
Ներսիսյան դպրոցի աշակերտները, նույն քաղաքի այլ դպրոցների
աշակերտներ, հետագայում նաև գ. Սունդուկյանցը: Մեր սերունդը,
ընդհակառակը, հշխանությունների պարտադրանքով անհաղորդ մնաց
հոգին ու միտքն ազնվացնող այդ սուրբ մատյաններին և հին
բնագրերն ուսումնասիրելու ընթացքում երեմն կանգնում է
անհաղթահարելի դժվարությունների առջև՝ չկարողանալով
ինքնուրույն կամ քաղված մտքերը տարրերել միջյանցից: Քիչ չեն
դեպքերը նաև, երբ միևնույն գրական երկում սուրբգրային
աղբյուրներից վկայակոչումներ են անում և հեղինակները, և նրանց
հերոսները՝ անգամ չակնարկելով, թե ում են պատկանում դրանք, և

մեղմ ասած, յուրացնում կամ միանգամայն հակառակ իմաստ հաղորդում: Այդպիսի մի թաքնված վկայակոչման մասին է մեր ասելիքը:

Գ. Սունդուկյանցի «Խաթաբալա» կատակերգության մեջ արագորեն իրար հաջորդող դիպվածների շարքն առաջ է բերել անասելի շփոր ու թյուրիմացություններ: Չունենալով հստակ պատկերացում կատարվածի և խոսակցի դիտավորությունների մասին՝ նրա հերոսներն իրենց միջամտություններով ու խորհուրդներով ավելի են շիկացնում մքնութուրը: Միակ զգաստ անձը փորձված վաճառական Գարասիմ Յակուլիչ Զամբախով-Կարապետն է, որը հենց սկզբից հասկանալով, թե իրականում ինչ է կատարվել, աշխատում է օգուտ քաղել ստեղծված իրավիճակից և ավարտին հասցնել իր առջև ծառացած ծանրագույն խնդիրը՝ բնավ չմտածելով, որ աշխարհի ու մարդկանց մասին իր կարծրացած պատկերացումներն արդեն հնացել են: Ո՞րն է Զամբախովի աշխարհաճանաչության հիմքը. կատագերգության Երկրորդ գործողության մեջ (Տեսիլ է) Խսայու հետ սրտաբաց զրույց սկսելով առտնին փոխհարաբերությունների ընթացքում աշխարհում թագավորող կեղծիքի ու խարեւության շուրջ («Արա քիզ իմ հարցնում, էս մեր քախկումը վուր մեկ մեկու չըլին խափում, մեկ օր կա՞նա մարթ ապրիլ...») և ստանալով խոսակցի ցանկալի պատասխանը («Սուտ կի չէ, դուրք իս ասում, Գարասիմ Յակուլիչ»), իսկ վերջում էլ փոճելով բնութագրել ընդհանրապես մարդուն՝ Զամբախով-Կարապետը միտքը եզրափակում է մի անանուն իմաստունի դիպուկ խոսքերով, որոնք իր ու իր ննանների սրտից բխած լինեին կարծես.

Խսայի

Խուրը վուր փիքը իմ անում, ախսեք, է՛, դուրք վուր դրուստ մարթ խիստ քիչ կա միր քախկումը:

Կարապետ

Յա՛, Խսայի ջան, 'ես էլ էտ եմ ասում, է՛, վուր ամեն բանումը խափում ինք ու խափում ինք: Ուտելումը, խմելումը, հաքնելումը, մե խոսկով՝ նստում ինք թե վիր ինք կենում, պառկում ինք թե ման ինք գալի, լալիս ինք թե ծիծաղում, դիփ խափում ինք, խափում ինք ու խափում. մենք էլ դիփ խափած ինք ու խափած: Գլխեմեն ինչոր վուրը սուտ է էս աշխարքը. «'ես ասացի ի զարմանալի իմում, ասում է, թե ամենայն մարթ սուտ է, թե կ'ոսէ»:

bumph

Կարապետ Հայոց առաջնորդ-մայության վայրի մի միակ գործադիր է:

Կառապետ

Պրօթավ, զնա՞ց...¹

Եզրահանգումը՝ «'Ես ասացի ի զարմանալի իմում... թե ամենայն մարթ սուտ է, կ'ոսէ», ծիշտ որ ուշագրավ է և լուրջ խորհրդածությունների առիթ ծառայող, միայն թե անհասկանալի են մնում և «զարմացողը», և «ասողը». Սունդուկյանցի հերոսի եզրահանգումնե՞րն են դրանք, թե՞ ընդհանրապես ժողովրդի պատկերացումը մարդու մասին, գուցե որևէ իմաստունի՞, սրբի՞ կամ մարգարեի՞,- մնում է անհասկանայի:

Մեծ թատերագետի կյանքի և ստեղծագործության հետազոտողները, նաև նրա երկերի ակադեմիական հրատարակության ծանոթագրով շրջանցել են այս հարցը՝ չունենալով պատշաճ ասելիք կամ գոհացուցիչ պատասխան, մինչդեռ, ինչպես քննության հենց սկզբից էլ կարծում էինք, գործ ունենք թաքնված մեջբերման հետ՝ ընտրված միանգամայն տեղին ու մեծ վարպետությամբ և հնարավորություն տալով միաժամանակ թափանցելու այն օգտագործողի հոգեբանության մեջ։ Ողջ երկխոսությունը հերոսի դավանած ճշմարտության անարարկելիությունը հաստատելուն է ծառայում։

Սունդուկյանցը ստվորաբար, այլ առիթներով, երբ վկայակոչում էր այլոց խոսքերը, մատնանշում էր աղբյուրը, բայց այս դեպքում զարմանալիորեն լուս է անուղղակիորեն հասկացնելով, որ աղբյուրը հեղինակավոր ու հանրահայտ է ընթերցող լայն շրջաններին և թիֆլիսահայ իրականությանը: Քանի որ այդ խոսքերը լսվում են վաճառականական խավի ներկայացուցչի շուրերից, տեսնենք, թե ինչ սկզբնաղբյուրներ լսարող էին մատչելի լինել նրան:

Անցած դարերում, նաև թիֆլիսահայ միջավայրում, սիրված ու տարածված էր և հոգեշահ ընթերցանության նյութ էր ծառայում գրքերի

¹ *ÉaadÝ'áaglÜþÝð, "nIlnC ÉCIPRñ AáOáfíáð, F NÍñI., N. 1, °, 1951, § 70.*

մի ամբողջ շարք՝ «Պատմություն պղնձե քաղաքի», «Վարք Աղեքսանդրի», Խիկարի խրատներ, Ավետարան, Առակը Սողոմոնի, ժողովող, Ինաստություն Սողոմոնի, Սաղմոսք Դավթի և այլն: Սերնդից սերունդ փոխանցվող հնոց խոսքերն էլ չեն բացառվում, բայց բանահյուսական ժողովածուների քննությունն արդյունք չտվեց: Մնում էր ուշադրությամբ վերընթերցել հիշված գրքերը: Դաջորդաբար ծանոթանալով դրանց հետ և հասնելով Դավթի Սաղմոսներին, հարցի պատասխանը դեռ չգտած՝ ստիպված եղանք մեր որոնումները հետաձգել ավելի հարմար ժամանակների, որովհետև անհետաձգելի այլ գործեր հնարավորություն չէին տալիս մեր հետաքրքրասիրությունը բավարարելու մասին մտածելու:

1978թ. սեպտեմբերի 12-ին (թե՝ 13-ին) Ամենայն Հայոց Կաթողիկոս, Երջանկահիշատակ Վազգեն Արաջինն ինձ վստահեց զեկուցում պատրաստել Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու կրիվներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և հայ հոգևորականության խաղացած դերի մասին: Նյութերի ուսումնասիրության ընթացքում մի քանի անհրաժեշտ քաղվածքի համար հարկ զգացվեց վերընթերցելու Դավթի Սաղմոսները, և, ո՛ անակնկալ, ճժե Սաղմոսի հենց սկզբում իմ ուշադրությունը գրավեցին Զանբախովի Եղրահանգման ազդակ ու աղբյուր ծառայած խոսքերը.

«Հաւատացի, զոր և խօսեցայ, և ես խոնարի եղէ յոյժ: Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է: Զի՞նչ տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի, զոր և ետ ինձ...»:

Սունդուկյանցի հերոսը բառացի կրկնելով Սաղմոսարանի խոսքերը և իր կողմից ավելացնելով միայն երկու բառ՝ «ասում է» և «կ'ոսէ», ծառայեցրել է դրանք այլ նպատակի, որովհետև իր մտածողությամբ և գործելակերպով արմատապես տարբերվում էր Սաղմոսի հեղինակից. 115-րդ Սաղմոսի մեջ խորհրդառողջ հավատացյալ ու աստվածավախ մարդն է, «Խաթաբալա» կատակերգության մեջ՝ խարդախ ու հաշվենկատ առևտրականը, որը ոչ ոքի չի խնայում ո՛չ օտարին, ո՛չ բարեկամին և ո՛չ էլ հարազատ դատերը: Իր կյանքի ծանրագույն պահերին, կարիքի ու զրկանքների մեջ՝ Սաղմոսի հեղինակը երկի թե ինչ-որ ժամանակ աջակցություն է ակնկալել մարդկանցից, բայց և, գորեք միշտ, բախվելով ստի ու խարեւության հետ՝ իր կարծիքը կազմել մարդու մասին ընդհանրապես. նրա վրա հույս դնելը խարկանք է և ունայն ծգտում: «Խաթաբալայի» հերոսը նման երկմտանք չի ապրել.

նա յուրացրել է առևտրական միջավայրում ընդունված օրենքները և սուտ հոչակելով մարդուն՝ սուտն էլ դարձրել է իր գործելակերպը։ Սաղմոսի հեղինակը հույսը կտրելով մարդկանցից՝ գտնում է իր հաստատում ապավենո՞ ի դեմս ամենաբարեգուր Տիրոջը՝ մաքրագործան ու բարոյական կատարելագործման ճանապարհով զգտելով միանալ Բարձրյալին, «Խաթարալայի» հերոսին նման ցանկությունն ու մղումն անըմբռնելի են. եթե կյանքում ու աշխարհում տիրողը սուտն ու խարեւթյունն են, որ հաստատում է մարգարե թագավորը նույն ճանապարհով մշտորշելով ոչնչից.«Պրծավ, գնաց...»։

Սաղմոսները շատերն են մեկնաբանել. միջնադարում Ներսես Լամբրոնացին, ավելի նոր ժամանակներում՝ Միքայել Չամչյանցը՝ յուրովի ջանալով ամեն մի դրվագի ներքին ծալքերը թափանցելու։ Այս ճշե Սաղմոսի բուն խորհուրդը լավ է ընկալել ու մեկնել հատկապես Չամչյանցը, ուստի մեջբերենք նրա նկատողություններից մեկ-երկուսը։ Վերակրկնելով մասամբ Սաղմոսի հեղինակի բառերը, մասամբ էլ հավելելով անձնական դիտարկումներ՝ նա գրում է.

«...հայեցեալ ի մարդիկ և տեսեալ զգնաց նոցա, և քննեալ զճանաչմունս և զբանս նոցին, և բաղդատեալ զայնս ընդ աստուծայինսն, յայնի տեսի՝ թէ սուտ են, և զոր ինչ խօսին զայնոցիկ զանձառելեաց՝ գրեթ ստութեամբ խօսին. ուստի և ասացի, թէ ամենայն մարդ սուտ է... ես կարծի, թէ գտանի ոք, որ ոչ երբեք ստիցտ, բայց ոչ զոք գտի այնպիսի, վասն որո զարմացայ և ասացի, թէ ամենայն մարդ սուտ է, և Աստուած միայն ծշմարիտ... Այս ամենայնի կամի հետևեցուցանել, թէ որովհետև խաբերայ են մարդիկ, և Աստուած միայն ծշմարիտ, ոչ է պարտ դնել զյոյս մեր ի մարդ. զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա, այլ յԱստուած. մանաւանդ զի զոր ինչ առնեն և զոր ինչ տան մարդիկ, յառնելն և ի տալն անդ, ծածկապես իմն խաբեն, զի ընդ օգտիւ մերով զիտեն զօգուտ իրեանց և ոչ թէ զմերն։ Իսկ Աստուած, զոր մի անգամ առնէ և տայ, ազատաձեռն գործէ, և աննենգ տայ, զի վասն օգտիւ մերոյ առնէ և տայ, և ոչ վասն իր» (Ս. Չամչեանց, Մեկնութիւն Սաղմոսաց, հ. Ը., Վենետիկ, 1820, էջ 231, 233):

Սաղմոսի յուրօրինակ մեկնություն է նաև Չամբախով-Կարապետի և Խսայու երկխոսությունը՝ թյուր և այլազան, որի ինչ-ինչ մասեր վկայակոչեցինք Վերևում։ Նրանց ընկալմամբ՝ ստելը մարդու եռթյունն է։ Կյանքում, տանը թե դրսում, անձնական փոխարարերությունների

ժամանակ բոլորն էլ խարում են իրար՝ համոզված լինելով, որ եթե ինքը չես խարում, միևնույն է, ուրիշները կիսարեն քեզ: Նման պայմաններում ստեղծ դառնում է անխուսափելի և գոյությունը պահելու միակ ճանապարհը: Ուրեմն՝ առանց երկարացի և հանգիստ խղճով արա այն, ինչ բոլորն են անում, ինչպես բոլորն են վարվում: Դարերի հմաստությունը ևս այդ է հաստատում. «Ամենայն մարդ սուտ է...»:

Սաղմոսների գիրքը բանաստեղծությունների ժողովածու է, ուր ընդգրկված են փառաբանական երգեր, գովաբանական մաղթանքներ, ներբողներ ու աղոթքներ, քնարական մրմունջներ, որոնց հեղինակներն են իին աշխարհի նշանավոր բանաստեղծ-իմաստասերները՝ Դավիթը, Սողոմոնը, Ասափը, Կորիսի որդիները, նաև ուրիշներ ու Անանուններ: Անձնական ընկալումները չեն բացառվում նրանցում: Այս ճժե Սաղմոսի Անանուն հեղինակը միմյանց հակառակով հուսու երկու հանգըրվան՝ մարդուն և Աստծուն, ի նկատի առնելով այլազան մեղքերից ու երկրային գայթակղություններից իրեն զերծ պահելու մարդու անկարողությունը՝ օգնություն ու ակնկալություն է փնտրում միայն ու միայն Աստուծու մոտ: Վերջինս, սակայն, չպետք է ուղղակի ծևով հասկանալ. Աստվածաշունչ մատյաններում ոչ քիչ խոսք ու գրուց կա նաև առաջինի կյանքով ապրող և բարի գործերով փայլող մարդկանց մասին, որոնք իրենց անձն ու վաստակը տրամադրում են աստվածահաճո գործերին՝ կյանքից հեռանալով բարի համբավ թողած: Այս է, որ ըմբռնելի է Սունդուկյանցի հերոսներին: Յոգով աղքատները, հեզերը, սրտով մաքուրները, արդարության ծարավինները, արդարության համար հալածվողները, խաղաղարարները հենց այն ընտրյալներն են, որոնց Դավիթ Սաղմոսներից դարեր հետո երանի էր տալիս Յիսուս Քրիստոս:

ԹՈՒԶԱՆ ՆԱ ԳՐԻ ԳՈՐՅԱՆ

Բամասիրական գիտությունների դոկտոր

ԿՐՈՆԱ-ՀԱՎԱՏԱԼԻՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏՈՒՄ

Քրիստոնեական վարդապետության ազդեցությամբ են ծևավորվել հայ ժողովրդական բանահյուսության իմանական տեսակները՝ սկսած մեր ազգային ժողովրդական վեպից՝ «Սասնա ծռերից», ուր հավատքի և Եկեղեցու զրություններն ուղեկից են և պահապան վեպի բոլոր հերոսներին՝ սկսած հրաշածին Սանասարից և Բաղդասարից մինչև Փոքր Սիերը:

Քրիստոնեական բանաձևումներն ու գաղափարախոսությունն առկա է նաև ժողովրդական հեքիաթներում, ավանդական զրույցներում, անեծք-օրինանքներում և բանարվեստի գրեթե բոլոր տեսակներում:

Կրոնա-հավատալիքային բազմաթիվ մոտիվներ և տարրեր ենք գտնում նաև հայ ժողովրդական մանկական բանահյուսությունում, մասնավորապես երգային և գովերգային տեսակներում՝ հայօրորներում և մանկան գովերգերում: Դարերի խորքից է գալիս քրիստոնեական կրոնին և Եկեղեցուն վերապահված առաջնային դերը մանկան ծննդյան օրից սկսվող դաստիարակման և անձի ծևավորման խնդրում: Դեռևս օրորոցում մայրը փորձում է բարեպաշտ ոգի արթնացնել երեխայի մեջ, հաղորդակից դարձնել քրիստոնեական վեհ ու բարձր գաղափարներին, ներարկել մեծ սեր ու հավատ Աննակարող Աստծո հանդեպ:

Մանկանը նվիրված գովերգերի սիրված մոտիվներից է մկրտության արարողությունը, ժողովրդի լեզվով ասած՝ «կնունքը», ինչպես նաև կնքահոր, կնքավորի գովեն ու մեծարումը, նրա նկատմամբ երախտագիտության սերմանումը մանկան մեջ դեռևս վաղ հասակից: Ծննդյան և կնունքի ծիսակարգում քավորի, որպես հայ ընտանիքի ավանդական բարեկամի և բացարկի կարևոր անձի կերպավորումն ընթանում է մանկան առնչվող մոտիվներին ու խնդիրներին գուգահեռ և հաճախ

նաև համատեղ: Եկեղեցում կատարվող սուրբ կնունքի արարողությունը դաշնում է քավոր-սանիկի և նրա ընտանիքի բարեկամության հիմնասկիզբը: Քավորը դաշնում է այդ ընտանիքի անբաժան մասը: Նրան վերապահված էր մեծ իրավունք ներընտանեկան խնդիրները լուծելու, կարգավորելու, իսկ պատահած վեճերի ու անհամաձայնությունների դեպքում՝ հաշտարարի դեր կատարելու: Այսպիսով քավորը կատարում է մեր «հոգևոր հորից» ստանձնած իր «մարմնավոր հոր» պարտականությունները: «Առանց քավորի չի կատարվում ոչ մի ընտանեկան հանդես. մանավանդ հարսանիքի ու ծննդաբերության դեպքերում: Շատ հայաբնակ գավառներում քավորը տոհմական է լինում», - գրում է Խ. Սամվելյանը¹:

Զննքված երեխան իր շրջապատում «անսուրբ» է համարվել, մարդիկ չեն շփվել նրա հետ: Մկրտության արարողության ընթացքում քահանայի՝ կնքահորն ուղղված հարցին, թե՝

-Երախայս զի՞նչ խնդրէ:

-Դաւատք, յոյս, սեր եւ մկրտութիւն: Մկրտիլ եւ արդարանալ, սրբիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց և ծառայել Աստուծոյ,- պատասխանում է կնքահայրը:

Այսպիսով քավորին է վերապահված հոգևոր հայրերի հետ միասին, «սուրբ մեռոնով» կատարելու այդ սրբագրօնման ծեսը: Անգամ հարազատ մոր ներկայությունը և մասնակցությունը մանկան կնունքի արարողությանը անցանկալի էր և արգելված:

Մկրտության արարողության ավարտից հետո քավորը, երեխային գիրկն առնելով, մոմերով գալիս էր «ծննդկանի տուն, ուր և երեխային հանձնում էր մորը, իսկ վերջինս համբուրում էր քավորի ոտքը» (Զավախք)², կամ երեխայի խանձարուրը (Նոր Բայազեղ): Այս ամենը արտացոլված է մանկական երգաշարքում՝ օրորոցայիններում, գովքի ու գորովի երգերում, ուր, ինչպես արդեն նշվել է, որոշակիորեն դրսկորված է մոր խորը երախտագիտությունը «քավորոց» նկատմամբ, իբրև կնունք իրականացնողի և մանկան հովանավորի.

Եթ մեռնեմ, ջոյ քյավուրոչ,

Որ քե գըրկե բերե ի տուն,

Որ ըքրողեր կերեր ի շուն:

¹ Խ. Սամվելյան, Դիմ Շայաստանի կուլտուրան, մաս 1, Երևան, 1931, էջ 242:

² Ազգագրական հանդես, թիվ 1, Ծուշի, 1895, էջ 275:

մարդ և նորդ է
Կարտիկ և հայութիւն
ու ուժ առաջարկը
Խելքաբանութեաց
պատմի Դիմայիսունիւն
Շուշովքը ու Հանունը
առանձ արյանդնեաց
ինչուն պրետա զաքը ու
Շահապահ հօգութեաց
Խողոք և Սմուզութեաց
ու մաս և գուշը ու
Սարե սար կա զնալու,
Սուսուն ծաղիկ կա քաղելու,
Փունջ կապելու, տուն բերելու,
Թառ քյավուրոչ օղորկելու,
Կանաչ մեռոն համբուրելու,
Քե մեռնեմ, քյո քյավուրոչ,
Սումպարաք ձեր տիրոջ,
Տերն ի տվե մամեն բերե,
Են քյավուրոչ մունաթ ավիլիցե³:

Այժմ մայրն է ստանձնում իր մաքրված և չար ուժերի ներգործությունից ձերբազատված, սրբված մանկանը բարեպաշտությամբ սնուցելու պատասխանատվությունը և առաջնայինն է կրկին մոր մտահոգությունը երախտամոր չլինելու ու քավորին իրենց «սուրբ մեռնին» արժանացնողին հարգանքի և փոխհատուցման հարցը: Մայրը ներքին տագնապով և երկյուղածությամբ է ձեռնարկում մանկան խնամքը՝ առաջին քայլը «Ամենակարող Տիրոջ» գրասրտության հայցելն է, Տիրոջ Ազը մանկան վրա իբրև հովանի պահելու խնդրանքով, քանզի չար ուժերը և չար աչքը կարող է թե՛ վնասել, թե՛ փոխել և թե՛ փախցնել նրան:

Պայմանիծ ծայաւաղու Օրո՞ր, օրո՞ր տերը տա քնիկ,
զնալուտադիյս զզմ Սարիամ մար խաղաղութունիկ
դուռ և զբուդ մաքաւ Դուն պառկիս լ' անուշ քնանաս:
Շնառը զու շտեառն Սարիամ մարը մար կանինք,
յամ մանայմած մատի Իր մեկիկ որդին հարտընճի:
Երբամ եղեցի մտնիմ,

³ Ո. Չ. Գրիգորյան, Յայ ժողովրդական օրորոցայիններ և մանկական երգեր, Երևան, 1970, թիվ 198, հետայսուն՝ թիվ 4/:

Ուր բռնիմ սուրբը տուածի:
Սուրբ խաչն ալ աղբար անիմ,
Թեկը վրայնիս պահե⁴:

Բազմաթիվ նմանատիպ օրորոցայիններ կան, ուր արտահայտված է մոր խորը հավատը հանրեալ Ամենակարող Տեր Աստվածը, Յիսուս Քրիստոսին և Մարիամ Աստվածածնին, որոնց է դիմում իր երեխային ծննդկանին և նորածնին հալածող չար ուժերից փրկելու և պահպանելու համար: Ծննդկանին և նորածնին հալածող չար ուժերի մասին գանազան հավատալիքային գրույցներ կան պահպանված: Այսպէս Ղ. Ալիշանը Գրիգոր Տաթևացու հետևյալ հիշատակությունն է բերում. «Սուրբ Սիսիանոս գայր ի լեռն է ի վայր, և տեսաւ պեղծ մի չար, և ուներ աչք իրեղեն և ձեռքին երկաթի կտրոց և հանդիպեցաւ ի տեղի աւագոյ ասէ. Ար. Սիսիանոս ո՞ւր երթաւ. Նզոված պեղծ: Պատասխանի եղ նմա և ասէ. Երթամ զմանկունս կանանցն թառամեցուցանեմ, զաշսն խաւարեցուցանեմ, զղեղն ծծեմ և համր առնեմ, և առնեմ զտղոցն անժամանակ զյորովայնին»⁵:

Մայրն այն համոզմանն է, որ եթե անհոգ գտնվի մանկան նկատմամբ, չարքերը կիափշտակեն նրան, ալքերը կփոխեն կամ խեղյամահ կանեն նրան: Այս մտայնության հետևանքն են և ժողովրդի մեջ տարածված ասույթներն ու ասացվածքները, ուր և արտահայտված են հավատալիքային այդ տարրերը: Այսպէս, օրինակ, մեկի արտակարգ չարությունն ընդգծելու համար հաճախ ասում են՝ «ալքու փոխած կննանի»: Եվ ահա մայրը մանկան անվտանգության համար փորձում է զանազան միջոցներ ձեռք առնել՝ «չարը կանխելու» համար.

Ախ ինչ անեմ, ինալ անեմ,
Են չար աչքից հեռու պախեմ⁶:

Դայտնի են բազմաթիվ չարխափան և չարահալած ծիսական արարողություններ՝ հմայական պահպանակների կիրառությամբ: Կենցաղավարող հմայիլ պահպանակների չարխափան իրերի և խոր-իջրդանիշների որակից դատելով կարելի է մտածել, որ դրանց արմատները թաղված են խորը հնադարում: Երեխան ծնվել է՝ սև հավ

⁴ ՀՃՕԳ, թիվ 30:

⁵ Ղ. Ալիշան, Յին հավատը կամ հեթանոսական կրոնը Դայոց, Վենետիկ, 1895, էջ 222:

⁶ ՀՃՕԳ, թիվ 45:

պետք է մորթել, մատաղ անել և երեխայի սենյակի շեմին թաղել: Կարելի է նաև երեխայի օրորոցից խոզի չորացած դուն կախել: Ըստ մեկ այլ սովորույթի՝ ծննդկանին և երեխային գութանի շղթայի մեջ են առնում, որպեսզի չար ոգիներին արգելեն վնասել նրանց: Բրոնզե և երկարե՞ պահպանակները, իրու չարահալած հմայական ուժով օժտված իրեր, շատ հաճախ դրվում են մանկան բարձի տակ (մկրատ, դանակ, սանդերք): Երեխային չար աչքից հեռու պահելու համար յոթ հատ աչքահոլունք են վերցնում ու յոթ հոգու աղորել տախս և մանկան թիկունքին կապում:

Նախյուասում մա մա Յոյ Յոյուն կապեմ շարերով Շարերով ու շարմաթով⁸:

Յավատում էին նաև, որ ամեն մի երեխա իր պահպան հիեշտակն ունի, որը թևերը պարզած կանգնում է մանկան սնարին (անկողնուն): Պահպանելով նրան չարքերից:

Մանկան կնունքի կազմակերպումը հանդիսանում է չարխափան հիմնական արարողություն, որից հետո կնքված և սրբագրութված երեխային կարելի է արդեն դնել օրորոց, միայն թե դարձյալ շրջահայցորեն պետք է խաչակնքել երեք անգամ՝ ասելով համապատասխան աղորք և հմայական խոսքեր ու բանաձևեր: Այսպես՝ Վանում խաչակնքելով ասում են.

Դնեմ ուրուրոց, քունդ տանի',

Չար ուզողիդ ջուրը տանի',

Քու դուշմանը քարին գա',

Տերդ քեզ քնիկ տա⁹:

Նոր Բայազեդում՝

Ալանե'ս, խափանե'ս,

Տեր Աստված

Աշկերը փակե'ս

Ալանե'ս, խափանե'ս¹⁰:

⁷ Յ. Թաքուկյան, Երկարի պաշտամունքային նշանակության արձագանքները հայ վաղ քրիստոնեության շրջանում, «Եջմիածին», 1991, էջ 79:

⁸ Ազգագրական հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 56:

⁹ Կանագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվ, Ո. Յ.

Գրիգորյանի ֆոնդ հինուայուն՝ ՀՃԲԱ:

¹⁰ ՀՃԲԱ:

Խայում՝ խաչաձև պատճեն է պահպանակ լեզուն ։ Առաջ
Խաչ խանեմ քյնացնեմ,
Խաչ խանեմ օրորոց ղմեմ,
Խաչ խանեմ արթնցնեմ¹¹։

Նախապատրաստելով մանկան անդորրն ու անվտանգ քունը, մայրը զուգընթացաբար մրմնջում է որոշակի բանաձևեր, ասույթներ, որոնք հավանաբար կրել են հմայական գորություն և սկզբնապես փոխարինել կամ ավելի ստույգ կատարել օրորոցային երգի գործառույթ: Երեխայի առողջության, կյանքի ու երջանկության ապահովության ցանկություններն ու մաղթանքներն¹² են արտացոլված մոր մտահոգություններն արտահայտող մանկատածության երգերում՝ օրորոցայիններում, մանկախաղաց երգերում, գովերգերում և այլն: Այստեղ իրենց անդրադարձն են գտել սոցիալ-տնտեսական և ներընտանեկան կյանքի այլազան խնդիրներ: Գրեթե չկա այնպիսի մի բնագավառ, երևոյթ կամ կենցաղային առարկա, որը դուրս մնացած լինի երգասաց մոր, տասի կամ հարազատի տեսադաշտից՝ լինի դապատճա-հասարակական, սոցիալ- տնտեսական, կրոնա- հավատալիքային, թե սուկ մանկանը, նրա արտաքինին, բնավորությանը, քայլքին, լոգանքին վերաբերող հարցեր:

Հնավանդ ըմբռումներին գուգահեռ մանկական երգաշխարհ են ներքափանցել կրոնա-Եկեղեցական պաշտամունքի հետ կապված որոշակի իրողություններ և գաղափարներ: Կրոնն ու Եկեղեցին իրենց սրբություններով խոր հետք են թողել մեր ժողովորի հասարակական կյանքի, նրա մտորումների վրա՝ սկսած վաղ մանկությունից: Այդ է պատճառը, որ հայ մայրն իր նվիրական ու անեղջ պոռթկումներում անմեղ մանկան նկարագիրն ամբողջացնում է դարեր շարունակ պաշտված սրբությունների ու մանկան բարեմասնությունների համադրյանը ու գուգահեռներով: Այսպես՝

Աչուկ է աչուկը
Կըլմանի ժամուն խաչուկը.
Կտիկն է կտիկը
Կըլմանի ժամուն կոթիկը.

11 3dEUG

¹² Ա. Բ. Յարությունյանն իր «Ամեծի և օրինաճի ժամը հայ բանահյուսության մեջ» երկու Եշուտ է, որ «Ճաղաբն» գրաքարում նշանակել է առօր թ. 131:

ու նախայի ուժը դա կոնակը
Կոնակն է՝ կոնակը
Կոլմանի ժամուն դրսակը,
Բերանն է՝ բերանը

Կոլմանի ժամուն խորանը¹³:

Կամ առ ժամունից թե ցրմանօքարք գրասաժո ուժ նախաղան
Կեռտանը սիրեմ, կեռտանը,
դոյջ մարդուրմայխ Կոլմանի ժամուն մեյտանը,
նանձ աղի նաւզու Թուշիկը, ուիս ուա ճշմիասու
զոր աղի դոմմելուոր Կոլմանի ժամուն խուշիկը,
և ցրմանուան նմեր Պերանը սիրեմ, պերանը,
նամարմայխ նոյնից Կոլմանի ժամուն խորանը.
նամարմայխ նոյնից Սիրիկը սիրեմ, քիրիկը,
ցրոյոց ուա խոյմու Կոլմանի ժամուն ցութուկը.
նոյնմարմայխ նոյնից Աչուկը սիրեմ, աչուկը,
անուրուսանի նոյնից Կոլմանի ժամուն խաչուկը.
անուրուսանի նոյնից Ականը սիրեմ, ականը,
նոր հունուրեն նոյն Կոլմանի ժամուն զանգակը.
հունուրեն նոյն ճակատը սիրեմ, ճակատը,
զունդափուր նոյն Կոլմանի ժամուն զագարը.
զունդափուր նոյն Մազերը սիրեմ, մազերը,
նոացան և օսոն և Կոլմանի ժամուն ավելը¹⁴:

Խորին ակնածանքի ու կորնական սովորութների նկատմամբ
ունեցած ներքին մտավախության պայմաններում անգամ մայրը հա-
մարձակորեն անմեղ ու անարատ մանկանը համենատում է և զուգա-
հեռներ անցկացնում քրիստոնեական խորիրդանիշների՝ եկեղեցու,
խաչի, ավետարանի ու խունկի հետ՝ «աչուկդ խաչուկ է», «բերանդ
խնկաման», «վանքի շամդան ես բեխես» և այլն: Գերիշխող է նաև
Աստծո, իբրև ամենակարող ուժի, գաղափարը երգերում: Ծննդյան
առաջին իսկ օրից Աստծո հովանավորությանն է հանձնվում մանկիկը՝
«Աստծու աջը վրեդ», «Աստված քեզի գրկե շախե», «Աստված քի տա
զվարի օրեր» և շատ ուրիշ մադրանքներ են ասում նրան:

Երգերում թիւ չեն նաև մարդկանց և Աստծու միջև միջնորդ կապ
հանդիսացող սրբերի հիշատակությունները, որոնց միջոցով թվում է,

13 ՀՃՕԳ, թիւ 181:

14 ՀՃՕԳ, թիւ 182:

թե գեղջկուհին հագուրդ է տալիս Աստծու և Երկնքի հետ կապված իր անսպառ հոլյսերին ու ձգտումներին: Սարիամ Աստվածածինը, Սուրբ Կարապետը, Սուրբ Սարգիսը մանկան պահապան և ապագան ապահովող ուժեր են:

Սայրական այս սրբասուրբ զգացումները մեր ժողովոյի պատմության խորհրդային շրջանում մռացնության էին մատնվել: Մի երկույթ, որն իր բացասական հետքը բողեք նաև բանավոր ավանդության բոլոր տեսակների, այդ թվում և մանկական բանահյուսության վրա: Նման մոտեցումը ազդեց ժողովոյի կենցաղի և սովորությների վրա, որի հետևանքով փոխվեց բանահյուսության թե՛ ընդգրկման սահմանները և թե՛ որակը: Երեխան իր ընտանիքում այլևս չէր առնչվում ավանդական սովորության կարգ ու կանոնին (կնունք, պատկ, ծիսական, կրոնական տոններ, աստվածապաշտություն և այլն) և չտեսնելով այս բոլորը՝ չկարողացավ ընդօրինակել այդ իր ամենօրյա մանկական խաղերում, փոխվեց մանկական բանարվեստի որակը: Մանկական բանահյուսության նորոյա գորառումներն այս առումով թերի են և հիմնականում գուրկ ավանդական թեմաներից և մոտիվներից:

Ներկայումս հոգևոր զարթոնքի և վերածննդի պայմաններում ազգային արժեքների և սովորույթների նկատմամբ եղած սկզբունքները վերանայվում են և նորոգվում: Մեր ժողովուրդը դարձ է կատարում դեպի Եկեղեցին, կրոնը և հավատն առ Աստված:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ugus eugenius

Պատմական գիտությունների դոկտոր

«ԿՈՎԿԱՄԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒԾ

(ՀԱՅԱՍՏԱՆ, ՎՐԱՍՏԱՆ, ԱՂՎԱՆՔ)»

ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Ավստրիայի գիտությունների ակադեմիայի Բյուզանդագիտության հանձնաժողովը, Վիեննայի համալսարանի Բյուզանդագիտության և նոր հունարենի ինստիտուտն ու Ավստրո-հայկական ուսումնասիրությունների ընկերությունը 1999 թ. դեկտեմբերի 9-12-ը կազմակերպել էին գիտաժողով՝ նվիրված Կովկասի ժողովուրդների Դարձի պատմությանը: Գիտաժողովի նպատակներից էր՝ լսել Կովկասի քրիստոնեացման և Դարձի մասին նաև ազգետների երբեմն հակամետ տեսակետները և լուծել տարածայնությունները 2001 թ. Փարիզում տեղի ունենալիք Ի բյուզանդագիտական կոնգրեսի շեմին, որոշել Կովկասյան մշակույթի պատմության հարցերի այն ոլորտները, որոնք կարելի են նարկել այդ համաշխարհային հավաքում:

Գիտաժողովի բացման արարողությանը իրենց ողջույններով հանդես եկան բյուզանդագետ Վ. Զայքտը, Ավստրիայի ակադեմիայի պրեգիդենտ Վ. Կելցիգը, Վիեննայի համալսարանի հասարակագիտության ֆակուլտետի դեկան Ֆ. Ռյոները, Վիեննայի Կաթոլիկ Եկեղեցու արքեպիսկոպոս Կարդինալ Խ. Շյոնբրոնը և Յայոց Առաքելական Եկեղեցու Արևմտյան Եկորապայի Յայրապետական պատվիրակ Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը (Մեսրոպ Արքազանն ընթերցեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի ողջույնի խոսքը՝ ուղղված կոնֆերանսի մասնակիցներին): Կոնֆերանսը ստացել էր լայն հասարակական և նույնիսկ քաղաքական ինչողություն: Նիստերին ակտիվորեն մասնակցում էին քաղաքական ինչողություն: Նիստերին ակտիվորեն մասնակցում էին քաղաքական ինչողություն: Նիստերին ակտիվորեն մասնակցում էին քաղաքական ինչողություն:

Մամեդովան, իսկ Վրաց դեսպանատունը Վիեննայի Ակադեմիայի սրահում բաց էր արել Վրաստանի հարակից տարածքների քաղկեդոնական Եկեղեցիների լուսանկարների մի հետաքրքիր ցուցահանդես, որը կազմվել էր վերջին տարիներին վրաց գիտնականների կազմակերպած գիտարշավների նյութերից: Հետաքրքիր է, որ գիտաժողովի նիստերում երբեմն հնչեցին նաև քաղաքական հարցադրումներ, որոնք վերաբերում էին այսօրվա Կովկասի հակամարտություններին: Պետք է ցավով արձանագրել, որ Ավստրիայում Հայաստանի դեսպանատունը այդ խնդիրների հետ կարծես չէր առնչվում:

Գիտաժողովը տևեց երկու օր: Տեղի ունեցավ վեց նիստ, որոնց ընթացքում լսվեց 17 գեկուցում: Մի շարք նիստեր վարում էին Վիեննայի բյուզանդագիտական դպրոցի ներկայացուցիչներ՝ Յ. Կոդերը, Օ. Կրեստենը, Է. Գամիլշեգը, մյուսները՝ կոնֆերանսի անմիջական մասնակիցներ Ռ. Թոմսոնը, Ն. Թիերին, Ժ.-Պ. Մահեն: Հանդիսավոր նիստում գեկուցումն հանձնարարված էր ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեն («Կովկասի Դարձը. մեկ պատմագրություն կրկնակի հիմքով»), որն անդրադարձավ տարածաշրջանի քրիստոնեացման երկու հիմնական ալիքների (առաջելական շրջանի քարոզություն և պետական կողմն հոչակելու դարաշրջան) արտացոլմանը Այսրկովկասի երեք Եկեղեցիների պատմական ավանդույթներում:

Բյուզանդական քաղաքակրթության և Եկեղեցու մասնագետ Զ. Դագոնը իր գեկուցումն անվանել էր «Քրիստոնեություն, կայսրություն և ազգություններ», որի ընթացքում, շրջանառության մեջ դնելով մի քանի տարի առաջ լույս տեսած Քրիստոնեության պատմության Դ հատորի գաղափարները, փորձեց Բյուզանդական կայսրության մշակույթի ինքնատիպությունը վերագրել բազմաթիվ ժողովուրդների ազգային, լեզվական առանձնահատկություններին և քաղաքական նպատակների տարբերություններին, որոնք արտահայտվել են նաև ազգային-Եկեղեցական առանձին կազմակերպությունների ստեղծման երևույթի մեջ: Տույն նիստի հաջորդ երկու գեկուցողներն էին Պ. Ս. Մուրադյանը («Կովկասի երեք ժողովուրդների մատենագրությունների սկիզբն իրեն քրիստոնեացման հետևանք») և Մեսրոպ արքապս. Գրիգորյանը («Հայոց կանոնական իրավունքի զարգացումը Դ դարում»): Առաջին գեկուցողը, անդրադառնալով Այսրկովկասուն քրիստոնեությունից առաջ տարածված գրային սիստեմներին, զարգացրեց այն միտքը, որ Կովկասի քրիստոնյա ժողովուրդների այրու-

բեները և մատենագրությունները քրիստոնեական մշակույթի հետևանք են և առաջացել են միևնույն ժամանակ։ «Կանոնագիրք Յայոց»-ի ծևավորման պատմությանն անդրադառնալով, Մեսրոպ Սրբազնը ցուց տվեց, որ Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի և Ներսէս Սեծի մեջ չհասած կանոնախմբերը եղել են Շահապիվանի ժողովականների տրամադրության տակ և օգտագործվել երանց կազմած կանոններում, իսկ Տիեզերական Եկեղեցու կանոնախմբերը մինչև գրերի գյուտը շրջանառության մեջ են եղել հունարեն բնագրով։

Յաջորդ նիստը նվիրված էր Քրիստոնյա Կովկասի գեղարվեստական մշակույթին։ Ըստ Յալլեի համալսարանի դասախոսներ Յ. Յոլցի և Ա. Դրոստ-Աբգարյանի («Յայաստանի քրիստոնեացումը Յայոց Եկեղեցու Շարակնոցի հայելում») Յայոց Դարձի պատմության բազմաթիվ դրվագներ արտացոլված են Յայոց Շարակնոցի Գրիգոր Լուսավորչին, նրա որդիներին ու թոռներին, Ներսէս Մեծին, Ա. Սահակին, Յոհվիսիմյանց կույսերին, Ս. Սանդուխտին, Շողակարին և Ա. Թարգմանչչներին նվիրված կանոններում։ Այս նիստում իր գեկուցումն ընթերցեց նաև հայկական ճարտարապետության միջնադարյան հուշարձանների ճանաչված գիտակ Միշել Թիերին, որն իր աշխատանքը նվիրել էր առանձին հուշարձանի պատկերագրությանը («Ս. Գրիգորի պատմությունը՝ նկարված Անհում Տիգրան Յոնենցի կառուցած (1215) Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում»)։ Յեղինակը ուշագրավ մեկնարանություններով ունկնդիրների ուշադրությանը ներկայացրեց Եկեղեցու 17 պատկերները, որոնք ուղեկցվում են վրացերեն արձանագրություններով։ Քննարկման ժամանակ Պ. Մուրադյանը Ս. Թիերիի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ գեկուցման մեջ հաշվի չի առնվել, որ 1215 թ. թվագրվող Եկեղեցու շինարարական արձանագրությունը գրված է Յայոց Առաքելական Եկեղեցու հետևողի կողմից (նզումի բանաձևում հիշատակվում են միայն երեք Ս.Տիեզերական (նզումի բանաձևում հիշատակվում են միայն երեք Ս.Տիեզերական և ժողովների հայրերը), այդ իսկ պատճառով Եկեղեցու անցումը ժողովների հայրերը, այդ իսկ պատճառով Եկեղեցու անցումը ժողովների հայրերը, ամուսնու գեկուցման հիմնական մոտիվը՝ Գրիգոր շարունակելով ամուսնու գեկուցման հիմնական մոտիվը՝ Գրիգոր Լուսավորչի պատկերագրությունը Վրաց Եկեղեցում, իր գեկուցումը նվիրեց «Ս. Նինոյի Կենաց սյան հրաշքի» պատկերագրական ավանդույթին։

Դաջորդ երեք նիստերից յուրաքանչյուրը նվիրված էր Այսրկովկասյան երեք ժողովուրդներից (հայեր, վրացիներ և աղվաններ) մեկի մշակույթին: Առաջին նիստում քնարկվեցին Դայոց Դարձի պատմության խնդիրները: Այստեղ գեկուցումներ ընթերցեցին Վ. Զայրտը («Դայաստանի քրիստոնեացման կամ Տրդատի մկրտության պատմական հիմքը և ժամանակագրությունը»), Մ. Վան Եսբրուկը («Դօհիփսիմեի և նրա ընկերութիւնների վարքը») և Ռ. Թոմսոնը («Ասորի քրիստոնեությունը և Դայաստանի դարձը»): Վ. Զայրտը իր գեկուցման մեջ ընդգծեց, որ Կովկասի և Դայաստանի դարձի ու Տրդատի մկրտության թվականի ճշտումը ներկա գիտաժողովի հիմնական խնդիրներից է: Վ. Զայրտը և Ժ.Պ. Սահեն քննարկման ժամանակ հիմնականում պաշտպանեցին այն տեսակետը, որ քրիստոնեությունը Դայաստանում պետական կրոն կարող էր հռչակվել միայն Միլանի եղիկտից (312 թ.) հետո: Խորագույն սկզբնադրյուրների մեջ նախընտրություն տալով Պայկուլիի արձանագրությանը, Վ. Զայրտը և մյուս բանախոսները սկզբունքային նշանակություն էին տալիս Գրիգոր Լուսավորչի Եպիսկոպոսական ձեռնադրությանը Ղևոնդիոս մետրոպոլիտի կողմից, որը իրոք Կեսարիայի Եպիսկոպոս հայտնի է 314 թվականից:

Ս. Վան Եսբրուկն իր գեկուցումը նվիրել էր Կովկասի քրիստոնեացման գործում Դօհիփսիմյանց կույսերի դերին և առաջ էր քաշում այն վարկածը, որ այդ պատմության մեջ հասած տարբերակները վերջնականապես ծևավորվել են Ե-Ե դարերի եկեղեցական վեճերի հակաքաղկեդոնական պայքարի մրնուրտում, որն իր կնիքը է դրել ինչպես հայ, այնպես էլ վրաց մատենագրության մեջ Նինոյի մասին պատմող Երկերի վրա: Անգլիացի հայագետ Ռ. Թոմսոնը, հիմնվելով հայագիտության նվաճումների վրա, իր գեկուցման մեջ հավաստեց ասորի քրիստոնյաների ազդեցությունը հայ մշակույթի վրա՝ դրա լավագույն ապացույց համարելով Աստվածաշնչի մի շարք բնագրերի, Ափրատի կամ Եփրեմի առկայությունը հայ մատենագրության մեջ: Ընդգծելով, որ վաղ քրիստոնեական Դայաստանում հունարենի հետ հավասարապես օգտագործվում էր արամեերենը, հեղինակը զարգացրեց այն միտքը, որ պետք է շարունակել ասորական մշակութային շերտի ուսումնասիրությունը հայ մատենագրության մեջ:

Վիեննական գիտաժողովի նիստերից մեկը նվիրվել էր Կովկասյան Աղվանքի քրիստոնեացմանը և մշակութային փշրանքների վերհանմանը: Կարեն Յուգբաշյանը («Աղվանների Դարձը և ազգային գիտակ-

ցության ծևավորումը»), իիմնվելով Ալեքսան Յակոբյանի մեկ տասնամյակ առաջ լուս տեսած աշխատության վրա, «Աղվանից պատմութեան» իիմնական սկզբնադրյուրի մեջ առանձնացրեց չորս երկ (կարծում եմ գերբնադատության արդյունք է այն պարագան, որ Կ. Յուզբաշյանը իիմնական աղբյուրների թվում անտեսեց Մովսես Կաղանկատվացի հեղինակին): Կ. Յուզբաշյանն անդրադարձավ ժամանակի ընթացքում Աղվանքում ծևավորված սահմաններին և երկրամասին հարևանների կողմից տրված անուններին: Նա նշեց, որ չնայած աղվաներեն մատենագրությունը կարևոր դեր է կատարել երկրի քրիստոնեացման գործում, ժամանակի ընթացքում իր տեղը գիշել է հայկականին, քանի որ 428 թ. սկսած, Արցախի և Ուտիքի միացումից հետո, երկարմասում գերակշռել է հայկական տարրը: Միաժամանակ Աղվանքն ու Յայատանը, ի տարբերություն Վրաստանի, պահպանել են սեփական Եկեղեցական կազմակերպությունների ինքնակայությունը: Մինչև ժթ դարն իր ինքնակայությունը պահպանած Աղվանից Եկեղեցին, որը, լինելով հայոց մշակույթի կողով, փորձել է իր հոտի մեջ սերմանել այն գաղափարը, որ իբր իր իշխանությունը տարածվում է աղվան ժողովրդի սերունդների վրա:

Մի քանի տարի առաջ Սիմայի Ս. Կատարինն Եկեղեցում հայտնաբերված աղվաներեն կրկնագիրը մեծ ոգևորություն է առաջացրել ընդհանրապես բոլոր կովկասագետների շրջանում: Դրա դրսևորումներից մեկն էլ պետք է համարել Բեռնար Ուտիեի գեկուցումը, ուր հերինակը, ամփոփելով հայագետների և Վրացագետների (Շանհձե, Արուլաձե, Մելիքսեթ Բեկ, Անասյան և այլն) հետազոտությունները, հայկական ճատենագրության մեջ աղվանից գրականության հետքեր գտնելու աշխատանքը, ունկնդիրների ուշադրությանը ներկայացրեց մի ապոկրիֆ գրվածք (Յաղագս պատմութեան սուրբ և աստուածային իւղոյ, զոր գտեալ սորոց հարցն յարևելս յաղուանից գիրս և թարգմանեցին ի հայ գիրս...), որը, ըստ ծեռագրում պահպանված վերնագրի, թարգմանված է աղվաներենից: Իհարկե դեռ վաղ է պնդել, թե այդ երկը կարող է աղվաներենից թարգմանություն լինել, այնուամենայնիվ հայ մատենագրության ծալքերում նման վկայությունների լիակատար հավաքումը և հրապարակումը կարելի է համարել հայագիտության կարևորագույն խնդիրներից մեկը:

Նիստերից մեկը նվիրված էր Վրաստանի քրիստոնեացման պատմությանը: Թթիլիսի Կեկելիձեի անվան ծեռագրերի ինստիտուտի

տնօրեն, հայագետ Զազա Ալեքսիձեն, իր գեկուցումը նվիրել էր «Վրաց Դարձի» խմբագրությունների համեմատական ուսումնասիրությանը: Բնութագրելով այդ երկը իբրև Վրաստանի և Կովկասի քրիստոնեացման պատմության հնագույն սկզբնաղբյուրներից մեկը, հեղինակը անդրադարձավ նրա մինչ այժմ հայտնի երկու ծեռագրերին (Շատրեդի և Չելիշի) և ներկայացրեց 1990 թ. Ս. Կատարինեի վանքում հայտնաբերված երկու ծեռագրեր, որոնք պարունակում են նույն երկի և երկու տարբեր խմբագրություն, որոնց համեմատական ուսումնասիրության հիման վրա առաջարկում էր վերականգնել նախնական բնագիրը: Վրաց գիտնական Թեդր Դունդուան իր գեկուցումն անվանել էր «Քրիստոնեությունը և Միթրահզմը. Վրաց պատմությունը», որի ընթացքում հեղինակը, հիմնվելով Վրաստանում հայտնաբերված անտիկ և միջնադարյան հնագիտական հսկայական նյութի վրա, ցույց էր տալիս վրաց քրիստոնեական մշակույթ թափանցած միթրայականության տարրերը:

Վախթանգ Զորածեն («Գրական աղբյուրները և հնագիտական ապացույցները Անտիոքի մի շարք վանքերի մասին»), անդրադարձնալով բյուզանդական կայսր Սիկիփոր Փոկասի կողմից 969 թ. Անտիոքի ազատագրմանը, այդ թվականով թվագրեց տարածաշրջանում վրացիների վերաբնակեցումը և մշակութային օջախների ստեղծումը, որոնք գործում էին Անտիոքի մելկիս պատրիարքության շրջանակներում, սակայն «պաշտպանում էին ինքնագլուխ Վրաց Եկեղեցու շահերը»: Վրաց ազգային Եկեղեցու և մշակույթի հուշարձաններից հեղինակն անդրադարձավ Անտիոքի շրջակայքում հայտնաբերված Ս. Բարլաամի վանքին և Ս. Կենաց Փայտի Եկեղեցուն: Ցավոք, Վ. Զորածեն շրջանցեց այս մշակութային երևույթի մյուս երեսը: Նա իր գեկուցման մեջ չանդրադարձավ այն հանգամանքին, որ այդ հուշարձանները հայտնաբերվել են այն տարածքում, ուր 11-14-րդ դարերում քրիստոնյա այլ մշակույթների կողմին ծաղկում էր նաև Կիլիկիայի հայկական պետությունը (նման անտեսում նկատելի է նաև Փարիզում մեկ տասնամյակ առաջ իրապարակված Կիլիկիայի արձանագրությունները գրքում): Վ. Զորածեն ոչ միայն անտեսել էր այդ տարածաշրջանի ամենակարևոր հեղինակներից մեկի՝ Սիկոն Սևարեցու (ԺԱ դար) տեղեկությունները, այլ նաև Ժ. Մերյանի այս հարցերի շուրջ բերություն իրապարակած հետազոտությունը ("Expedition archéologique dans l'Antiochène occidental, 1964 [Mélanges de

**ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՁՅԱՆ
Ճարտարապետության դոկտոր**

**ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԱԶԴԱՏ
ԴԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՐՁԱՎ
90 ՏԱՐԵԿԱՆ**

Վարազդատ Յարությունյանը հայկական ճարտարապետության ուսումնասիրության ականավոր երախտավորներից է: Կյանքի 90-ամյա վաստակաշատ ուղի անցած գիտնականը ծնվել է 1909 թ. Կանա Այգեստանների Խաչփողանի շրջակայքում: Մեծ եղեռնի գաղթի ժամփաներով անցնելով, ընտանիքի հետ 1915 թ. հանգրվանել է Թիֆլիսում: Մի քանի տարվա որբանոցային կյանքից հետո, 1919-1927 թթ. սովորել և ավարտել է տեղի հայկական միջնակարգ դպրոցը: Զրկանքներով լի մանկությունն ու պատանեկությունը՝ հետագայում ձեռք բերած հարուստ փորձի գրավականն էր: Ամնկուն կամքը, անխոնջ պայքարն ու լավատեսությունը ներդաշնակորեն միահյուսված են գիտնականի ողջ կյանքում: Աշխատասիրությամբ առլեցուն և հմտությամբ ու խորաթափանցությամբ հասունացած, արգասարեր հունձքից կքած «Կենաց ծառ»-ն է, որ իր կյանքի վաստակով ճյուղավորվում է դեպի մանկավարժություն, բազմաթիվ մասնագիտական ու հասարակական գործունեություն, բեղմնավոր գիտական որոնումներ, հայրենի քարակերտ կոթողների վերականգնում:

Պրոֆեսոր Յարությունյան՝ ճարտարապետության ֆակուլտետում մանկավարժական գործունեության 60-ամյակը լրացավ անցյալ՝ 1998 թ.: Այդ տարելիցից սահմաններից դուրս են մնում Լոռվա դպրոցներում անցած ուսուցչական պաշտոնավարության տարիները, որ սկսվում է 1927 թ., հասնում մինչև 1931 թ. նրա ընդունվելը Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը: 1937թ գերազանցությամբ ավարտելով ինստիտուտը, մնում է մանկավարժական աշխատանքի ճարտարապետության ամբիոնում: Նա իիմնականում դասավանդել է Յայկական, Յին աշխարհի և այլ ժամանակաշրջանների ճարտարապետություն և քաղաքաշիրություն, հետագայում նաև՝ ճարտարապետական հուշարձան-քաշինություն,

ների վերականգման մեթոդիկա դասընթացները: 1945 թ. նշանակվելով ամբիոնի վարիչ, նա անընդմեջ, մինչև 1990 թ., պաշտոնավարել և ստեղծել է ազգային ավանդույթներով հարուստ ճարտարապետության ամբիոն: Տարիների դասախոսական այս աշխատանքից են ծնվել Վ. Հարությունյանի «Հին աշխարհի ճարտարապետություն» (Երևան, 1978) և «Հայկական ճարտարապետության պատմություն» (Երևան, 1992) դասագրքերը: ճարտարապետական հուշարձանների վերականգման մեթոդիկայի դասագիրքը նույնաեւ հասցվել է ավարտին և սպասում է իր հրատարակությանը:

Բովանդակալից են Հարությունյանի մասնագիտական դասընթացները: Նրանք տասնամյակներ շարունակ օժանդակել են հայաշունչ ոգով դաստիարակելու ճարտարապետների բազմաթիվ սերունդների, ինչպես նաև Վ. Հարությունյանի ղեկավարությանք հայրենիքի և Սփյուռքի ճարտարապետության բարձրագույն կուրսերն անցած և թեկնածուական ու դրկտորական աստիճաններ հայցած շուրջ երեք տասնյակ հայկական մասնագետներին: ճարտարապետների համար գրադարան դարձած Վ. Հարությունյանի աշխատասենյակի դարակներում եղած բազմահարյուր նամակները հայ ճարտարապետների գործունեության հանրագիտարան են, նրանց ծալքերում նախորդ տասնամյակների խոսուն անցյալն է:

Վ. Հարությունյանի գիտական վաստակը բազմազան է: ճարտարապետական կրթությունից հետո, 1939 թ. սկսվող Պատմության և հնագիտության ինստիտուտի ասպիրանտական տարիները և Ղվինի հնագիտական պեղումներին նաև ակցությունը դառնում են նրա գիտական մկրտության շրջանը: Պատերազմից անմիջապես հետո, 1946 թ., «Ղվինի 5-7-րդ դարերի պատմաճարտարապետական հուշարձանները» թեմայով նա հայում է թեկնածուի գիտական աստիճան և ստանում դոցենտի կոչում: 1964 թ. պաշտպանելով «Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական մշակույթը» վերնագիրը կրող ատենախոսությունը, արժանանում է գիտությունների դրկտորի աստիճանի: Նույն տարում ստանում է նաև պրոֆեսորի կոչում: Գիտնականի գրադարանն այսօր ծանրաբեռնված է տպագրված և չտպագրված բազմաթիվ ուսումնասիրություններով: Չնայած առաջացած տարիքին, վերջին տարիներին նա իր գործունեության ամենաակտիվ շրջաններից մեկն է բոլորում: «Հայկական ճարտարապետության պատմություն» ծանրակշիռ աշխատության հրատարակությունից հետո, 1994 թ. նրա աշխատությունների ցանկը հարստացավ և 8 գրքերով՝ «Մակարավանք» (Հայկական ճարտարապետության վավերագրերի 22-րդ պրակ, հեղինակակից՝ Ֆ. Գանդոլֆո, Միլանո,

1994), «Նախնյաց ոտնահետքերով» (Ս. Էջմիածին, 1995), «Բոսֆորի և Մարմարայի ափերով» (Երևան, 1996), «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները» (Ս. Էջմիածին, 1996), «Երևանի եկեղեցիները» (Երևան, 1997), «Անոռաց հանդիպումներ» (Երևան, 1998), «Կյանքիս քառուղիներում» (Երևան, 1999) գրքերը և արդեն պատրաստ է հրատարակության «Աշխարհի ճամփաներով» հատորը, որ բովանդակում է մասնագետի տարբեր տարիների այցելությունները ճարտարապետության հաճամարդկային քաղաքակրթության կոթողներին: Վ. Չարությունյանը հեղինակ է երկու տասնյակ հրատարակված գրքերի¹, շուրջ երեք հարյուր գիտական հոդվածների և նույնքան հրապարակախոսական հոդվածների և գիտական գեկուցումների²:

Վ. Չարությունյանի աշխատություններին բնորոշ է ճարտարապետության անգամ բարդագույն հասկացությունները պարզ և մատչելի կերպով ներկայացնելու զարմանալի ուժակությունը: Նրա պատմական աշխատություններին բնորոշ է տեսական հագեցվածությունը: Մեթոդաբանական առումով նա ճարտարապետության զարգացումը

1 Կարենուագույն գրքերն են. «Ղվիմի 5-7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1950), «Դայկական ճարտարապետության հուշարձանները» (հեղինակակցությամբ Ս. Ա. (Երևան, 1951), Սովորությունները, «Սովետական Դայաստանի ճարտարապետությունը» Սաֆարյանի, Մոսկվա, 1951, ոռութեան), «Սովետական Դայաստանի ճարտարապետությունը» Սաֆարյանի, Մոսկվա, 1958, ոռութեան), «Միջնադարյան Դայաստանի քարավանատներն ու կամուրջները» (Երևան, 1960), «Ամի քաղաք» (Երևան, 1964, ոռութեան), նույնը նաև հայերեն, «Երևան» (հեղինակակցությամբ Վ. Լ. Դովիանիսիայանի, Երևան, 1955, ոռութեան), «Էջմիածին» (Մոսկվա, 1960), «Ամի քաղաք» (Երևան, 1964, ոռութեան), նույնը նաև հայերեն, «Երևան» (հեղինակակցությամբ Ս. Ս. Դաշտիանի, Ա. Ա. Մելիքյանի, Մոսկվա, 1968, ոռութեան), «Դայ ճարտարագությամբ՝ Ս. Ս. Դաշտիանի, Ա. Ա. Մելիքյանի, Մոսկվա, 1968, ոռութեան), «Սովետական Դայաստանի ճարտարապետությունը» (հեղինակակցությամբ՝ Ս. Ս. Դաշտիանի և Սովորությունները, 1972), «Դայկական ճարտարապետության հուշարձաններ» (Բեյրութ, Ա. Ա. Մելիքյանի, Մոսկվա, 1975), «Դայկական ճարտարապետության հուշարձաններ» (Երևան, 1978), «Դայունի կորողների նոր ճակատագիրը» (Երևան, 1982), «Թորոս Թորամանյան» (Երևան, 1984), «Դայկական ճարտարապետության քարակերտ տարեգորությունը» (Երևան, 1985, Երևան, 1986), «Դայկական ճարտարապետական ժառանգություն» (Երևան, 1986), «Եկայք ոռութեան», «Դայ ժողովորի ճարտարապետական ժառանգություն» (Երևան, 1988), «Եկայք շինուազություն» («Երերունի» հրատարակչություն, 1989) և այլն:

2 Հմատ. Վարագայտա Ջարությունյան, Բիբլիոգրաֆիա (1924-1981), Երևան, 1982: Ընդհանուր տվյալները դրվում են բերվել Վ. Չարությունյանի հրատարակության պատրաստված ընդիանությունունը:



Երջանկահիշարքակ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը բազմավասրակ զիրոնականի կործը զարդարում է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով

Նշված և այլ պարզեատրումները 1996 թ. Վ. Կ. Յարությունյանի կյանքում պսակվեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Ակադեմիկոսի կոչման շնորհմամբ: «Ղեռևա անելիքներ շատ կան» - ասում է ու շարունակում գրել հայկական ճարտարապետության երախտավորը: Բազմաթիվ կուտակված թղթերի խրձերի մեջ - Վ. Յարությունյանի աշխատասեղանի մի անկյունում նկատելի է ապագա աշխատությունների ցուցակը՝ «Կյանքիս քառուղիներում»՝ 2-րդ հատոր, «Աշխարհի ճանփաներով»՝ 2-րդ հատոր, «Որպեսզի հարատևեն - պատճական հուշարձանների պահպանության վերաբերյալ աշխատությունների ու հոդվածների ժողովածու», «Դիմ և միջնադարյան Դայաստանի քաղաքաշինություն», «Խոսք արվեստակից ժամանակակիցներին մասին»:

Մաղթենք կորով և ծրագրերի իրականացում անվանի գիտնականին:

ՄԱՅՐ ԱԹ-ՈՈ-ՈՒՄ

ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ

«Քան զամենայն հանդէս պանծալիս արարողութեանց և ծխից Հայապահեայց Եկեղեցոյ շքեղաշոք և վայելչազարդ լիալ ևն անդրաբին ի սկզբանէ գերանիչակ հանդէսը ձեռնադրութեան եայսկրաբոսաց...» («Մաշկոց ձեռնադրութեան եայսկրապտի»):

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհան տնօրինությամբ դեկտեմբերի 19-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում տեղի ունեցած եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում. «ի բահանայութեան յևափակոպոսութիւն» կոչվեցին Երուաղեմի և Կ. Պողոս Հայոց Նվիրապետական աթոռներից Երուաղեմի Ս. Հակոբյանց վանքի լուսարարապետ Տ. Նորիհան ծ. Վրդ. Մանուկյանը և Կ. Պողոս Հայոց պատրիարքության Կրոնական ժողովի առնեապետ Տ. Արամ ծ. Վրդ. Աթեշյանը:

Հայոց Եկեղեցու հեավանդ կանոնների համացայն, ևախքան ձեռնադրությունն ու օծումը՝ կատարվում է «վերդումն և կուխտ եպիսկոպոսական աստիճանին»: Ահավասիկ դեկտեմբերի 18-ին, երեկոյան ժամերգության ընթացքում, «ի ծունկու ... առաջի սեղանոյ Խօման տեղույն» ընծայացուները հանդիսապես ընթերցում են իրենց երդումնազրերը. «...Ծշմարտութեամբ և ուղղութեամբ խղճի մտաց և սրտի երդում վերդումն սուրբ Սատ առաջիկայ պայմանաց»:

Նվիրյալները հանդիսավոր կերպով, «առաջի աստուածային սեղանոյս և աստուածներն սուրբ եշտակաց», խոստանում և ուխտում են «անխոտոր և անսայրաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ և պատուիրանաց Հայաստաննեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ...»: Հավատացյալների և Սայ-

բավակի ողջ միաբանության ներկայությամբ նվիրյալները խոստանում և ովատում են մինչև իրենց կյանքի վախճանը հավատարիմ լինել Ս. Եօմիածնին, «եւ կալ մնալ իլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանայ Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյ»:

Նրդումնագրերի ընթերցումից հետո ընծայացները Ս. Խաչն ու Ս. Ավետարանը համբուրելով՝ «յարուցեալ ստորագրեն ի ներքոյ երդումնագրոցն զանուն իրեանց»:

«Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ յառաջ մարդկա եւ ողջամիկ ղիպատրութեամբ բացայցիկ մեզ զոր ինչ խնդրեղ»
«Մաշտոց...»:

Դեկտեմբերի 19-ին, ժամը 10.30-ին, Մայր Տաճարի քաղցրականգերն ապդարարում են Ս. Պատարագի սկիզբը: Օրվա պատարագիչն էր Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Հանդիսավոր թափորչ, «Անդրիուրդ Խորին» զգեստավորման երգի Կոմիտասյան հոգեթով եղանակի ներք, Հայոց Հայրապետին առաջնորդում է Մայր Տաճար՝ կատարելու իր անդրանիկ եպիսկոպոսական ցեղնադրությունը:

«Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողությամբ Վեհափառ Հայրապետը և հանդիսավոր թափորչ մասնակիցները մուտք են զործում Մայր Տաճար: Խօման Ս. Սեղանի առօտ կատարվում է Ս. Պատարագի մուտքի արարողությունը / Ձեռաց վացում, հրապարակային խոստվանություն /: Այսուհետև պատարագիչ Վեհափառ Հայրապետը «պաշտօնէիրս իւրով ... ելան ի սեղան սրբոյն Ստեփանոսի ի դնել զապա խորիրդոյ Պատարագին»:

Սպա «Հովի քաջ քանաւոր հօտի» շարականի երգեցողության ընթացքում Վեհափառ Հայրապետը Ս. Սեղանին և ժողովրդին խնկարկելոց հետո բազմութ է Հայրապետական գահին, որպեսպի ունկնդիր լինի Սուրբ և Սուրբեական Աթոռի միաբանության և «համօրէն ոխտի» ներկայացնելիք խնդիրներին. «Խնդիր ունիմք ի քարցրազահ Տերութենեդ»:

Ընկայալ կարգի համաշայն, Հայոց Սկեղեցու նվիրապետական աստիճանների ներկայացուցիչները՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև ժողովրդի ունեոր (իշխանը) և չքալոր (աղքատը) խավերը ներկայացնող զոյզ աշխարհականներ, սպաշտելով զՍուրբ Աստուածն», մոտենում են Վեհափառ Հայրապետին և եպիսկոպոս ցեղնադրվելիք ընծայացների մասին իրենց վկայությունները տալիս:

Այս ամենից հետո խարտավիլակ՝ Արքենթինայի թեմի առաջնորդ Տ. Գիտակ արքեպոս. Մուրադյանի առաջնորդությամբ ընծայացուները ծնկաչոր մոտենում են Նորին Սրբությանը: Լսելով խարտավիլակին ուղած հարցերի



պատասխաները և Խիրավների վկայագրերը, Վեհափառ Հայրապետը կատարում է հրապարակային հակատարձնություն. «Հաւատա»ս ԿԵՐՈՐԴՈՒԹԻԱՆ ՄԻ ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ՝ ԱՄԵՆԱՊՈՔ՝ ԱՆԺԱՄԱՆԱԿ, և ոչ են երեք աստուածք, այլ մի Աստուած անփոփոխելի»: Այսուհետև «Օղորմութիւն Զո Տեր յախտեան օրինեցից» սաղմուասացությամբ ընծայացուներին տրվում են եպիսկոպոսական զգեստի մաս եղող եմիփորոններ:

Խնկարկության շարականի ընթացքում Վեհափառ Հայրապետը, Խնկարկություն կատարելով, Ս. Մուկուտանի խորանից, ուղղվում է Ապագ Ս. Խորան: Ս. Պատարագի ընթացքում որպես առինքերականեր Նորին Սրբության Ս. Պատարագի միունքաւունում ԱՍՍ Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպոս. Պարսամկութիւն էին ԱՍՍ Արեւելյան թեմի միջներեղական հարաբերությունների պատասխանառու Տ. Վիգեն եպս. Այրապյան:

Ս. Պատարագի արարողությունը շարունակվում է մինչև «Չի ողորմած և մարդասեր ես...» -ը ներառյալ: Ապա Վեհափառ Հայրապետը քազմում է

գահին և նվիրյալները մոտենում ու ծերադրում են նրա առջև: Հայոց Հայրապետը «դնելով զաջն ի վերայ գլխոցն» ընթերցում է «Տէր Աստուած մեր ...» աղոթքը:

Այս ամենից հետո նվիրյալները «չեռուն ի վեր առեալ», ի նշան աշխարհից իրաժարման, դառնում են դեպի հավատայցալ ժողովուրդը. դպրաց խոսմբ երեք անգամ երգում է «Աստուածային եւ երկնաւոր շնորհ ...»-ը՝ Նորիհան և Արամ վարդապետներին քահանայությունից կոչելով եպիսկոպոսության: Այնուհետև համապատասխան աղոթքասացություններից, սուրբգրային ընթերցումներից և երգերից հետո, հանդիսավորապես Ավագ Ս. Խորան է քերվում Սրբալոյս Սյուռնոնվ լի Սյուռնաթափ Աղավնին: Վեհափառ Հայրապետը Հայոց Կենարար Սյուռնոնվ օրինում, օծում և սրբում է նվիրյալների ճակատները և աջ ձեռքի բութ մատները:

«Օծումն զոր հեղեր...» աղոթքի ընթերցումից հետո Հայոց Հայրապետը նորընծած եպիսկոպոսներին, որպես եպիսկոպոսական իշխանության խորհըրդակիցներ, տալիս է գավազան և մատանի, նաև, ի նշան Աստծոն Կենաց Խորի անշանցիր քարոզչության՝ Ս. Ավետարան:

Եպիսկոպոսական չեռնադրությունը և օծումն ավարտվում է Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով: Ասպա Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կարողիկոս իր հայրապետական օրինության խոսքն է հողում նորընծած եպիսկոպոսներին և հավատավոր հայրդիներին:

Ս. Պատարագի արարողությունից հետո, ի պատիվ նոր չեռնադրյալ և օծյալ եպիսկոպոսների, Սայր Աթոռի սեղանատանը Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի մասնակցությամբ տեղի է ունենում հյուրաժիրություն: Այդ ընթացքում Վեհափառ Հայրապետը, որպես եպիսկոպոսական աստիճանի խորհրդանիշ, նորած եպիսկոպոսներին հանձնում է հայրապետական ընծաներ՝ պահակեներ:

«Աղաշեմ զմեծ Ձ Կողորմութիւնի Տէ՛ր, պարգևիօր Ձ Կօրացն՝ զսոց ի Ամանութիւն խոնարհութեան Տեսան մերոյ եւ Փրկչին Յիսուսի Զրիստոսի». ամէն:

ԱՐՁՈՒՐ ԴՊԵՐ ԿԱՐՎՈԵՏՅԱՆ
ԳԱՆՈՂՅԱՆ ՀՈԳԵԿՐ ԾԱԽԱՐԱՆԻ
Ե ԼԱՐԱՆԻ ՍԱԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝

**ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ
ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(19 դեկտեմբերի 1999 թ.)

«Յանոն Հօր և Որդու և Հոգույն Սրբոյ»:

Միրելի քարեպաշտ ժողովուրդ: Ամենքին հոգին այս պահին լեցված է ուրախությամբ և քերկրանքով, առավելաքար՝ Հայրապետիս, որ շնորհը գտավ Տիրոջի այսօր գրեթե մեկ և կես ամիս գահակալությունից հետո մեր Սայր Սկզբանցու համար չեռնադրելու արժանավոր երկու Վարդապետների հաստինան եպիսկոպոսության: Տ. Նորիհան եպիսկոպոս, միարան Երուսաղեմի Սրբոց Հակոբյան Սթոռի: Նորիհան եպիսկոպոսը ծնվել է Հալեպ քաղաքում 1948 թ., նախնական կրթություն ստանալուց հետո ընդունվել է Երուսաղեմի ընծայարան, որն ավարտել է 1971 թ.: Երուսաղեմի ընծայարան մոտք գործելուց առաջ, Սրբազն Հայրը երկու տարի իր ուսումնառությունն անցկացրել է Սեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի հոգեոր դպրանոցում: 1971 թ., չեռամբ Երուսաղեմի հայոց Պատրիարք Եղիշէ արքեպիսկոպոսի, չեռնադրվում է կուսակրոն արեղա և մեկ տարի պաշտոնավարում Երուսաղեմում որպես ընծայարանի փոխտեսուց: Այսուհետև Սրբազն Հայրը հովական պաշտոնի է կոչվում Ծվեյցարիա, Հղանդիա և Սիացյալ Նահանգներ, որ պաշտոնավարում է մինչև 1998 թ.: 1998 թ. Երուսաղեմի միարանությունը ընտրում է Սրբազնին որպես Երուսաղեմի Պատրիարքական Սթոռի Լուսարարապետ, և Սրբազն Հայրը 1999 թվականից ի վեր ստանձնում է այդ պաշտոնը և իր ծառայությունը քերում նվիրական Սուրբ Սթոռին: Պատրիարք Սրբազն Հոր և Երուսաղեմի կրոնական ժողովի միջնորդությամբ մենք այսօր Սրբազն Հորը եպիսկոպոս չեռնադրեցինք՝ նկատի ունենալով թե՛ իր հոգեոր գործունեությունը և թե՛ այն պաշտոնը, այն հանգամանքը, որ ոնի այսօր Երուսաղեմի Սուրբ Սթոռում:

Երկրորդ անջ Տ. Արամ եպիսկոպոս, միարան Պոլստ հայոց Պատրիարքական Սթոռի: Սրբազն Հայրը ծնվել է 1954 թ., կրթությունը ստացել նոյն պես Երուսաղեմի Սրբոց Հակոբյան վանքում, որն ավարտում է 1976 թ. և, պես Երուսաղեմու Պոլստ, չեռնադրվում կուսակրոն արեղա՝ Ծնորիք Պատրիարք Գալուստյանի ձեռամբ, և հովական պաշտոնի կոչվում Կ. Պոլսի կանազան եկեղեցիներում: Խակ մեկ տարի առաջ Սրբազն Հայրը նոյնպես Կ. Պոլս պահանջական ժողովի կողմից ընտրվում է որպես ատենապետ այդ ժողովի: Կրոնական ժողովի կողմից ընտրվում է որպես ատենապետ այդ ժողովի: Տ. Անգ Անթայը տալով միջնորդությանը Պոլստ հայոց Պատրիարքի՝ Գերշ. Տ. Անգ Անթայը տալով միջնորդությանը Պոլստ հայոց Պատրիարքի՝ Գերշ. Տ.

բույ արքեպս. Սութաֆյանի, այսօր բերկրանոք սրտի մենք եպիսկոպոսական աստիճան շնորհեցինք Տ. Արամ վարդապետին: Նվիրական այս պահի հայցը և աղոթքն առ Աստված արտահայտում ենք սաղմուերգովի հետևյալ խորքերով, որ մեր սրտից բարձրացնում ենք առ Թարձրյալ Տերը մեր. «Զահանայք քո զգեցին վարդարութիւն և սուրբ քո յնծալով յնծասցեն» (Սաղմ. ԸԼ.Ս 9):

Միրելի Սրբազն Հայրեր, գիտենք, որ առաջին մարդու մեղանչումով մարդկային ողջ սերունդը վրկվեց, մերկացավ արդարությունից և այդ պահից մարդը մշտապես զգում է վերստանալ երկնավոր մեր Հորից արդարության պատմութանը: Իր զգումն ողջ նաևապարհին գոհություն Աստուծո, որ մարդը միայնակ չմնաց Արարիչն Աստված մշտապես ընդառաջ դուրս ելավ մարդուն՝ օգնելու նրան իր անկյալ վիճակից վեր բարձրանալու, վերստին Աստուծո հանությանը արժանանալու: Աստված ընդառաջ ելավ մարդուն օրենքներով, մարգարեներով, Միածնաւց իր Որդու Սուրբ Ավետարանով, և գիտենք նաև պատմությունից քրիստոնեական, որ այն անհատները, ովքեր հավատացին Տիրոջ նախախնամական տնօրինություններին, իրենց հավատքը արդարություն նկատվեց: Այդպիսին եղավ մեր նահապետ հայր Արքահամբ:

Այսօր ձեռնադրության սրբազն խորհրդով, սիրելի Սրբազններ, ձեզ երկնավոր մեր Հոր կողմից տրվում է վերստին արդարության այդ շնորհը, այդ պարգևը, սակայն պարզեն այդ նոխություն, փառք և պատիվ չէ, այդ շնորհն առավելաբար պատասխանատվություն է, ծառայության կոչում է, պատասխանատվություն առաջին հերթին իր իսկ Հայր Աստուծո նկատմամբ: Դուք, որ այսօր վարդապետական աստիճանից բարձրացաք եպիսկոպոսական աստիճանի, ստացաք եպիսկոպոսական իշխանություն, պարտիք արդարություն կատարել առաջին իսկ հերթին Աստուծո նկատմամբ, որի միջոցով կարգվեցիք իշխան, վերակացու աստվածահաստատ մեր Սուրբ Ծկեղեցում՝ պահպանելու համար նրա ուղղափառ դավանությունը, եկեղեցական ծիսաւորադական ողջ կարգը, հատկապես որ դուք, սիրելի Սրբազն, Երուսաղեմի Աթոռում պիտի ծառայեք որպես Լուսարարապետ, որպեսպի խորհուրդները և ծիսապաշտություն մեր Ծկեղեցու մնան անխաթար, մնան ամբողջական, հոգեւարար իրենց հնչումով մեր ժողովրդի փրկությանը նպաստելու և նրանց դեպի Աստված առաջնորդելու: Արդարություն պետք է կատարել հայրենիքի առաջ: Հայրենիք՝, որը մեզ համար միայն երկիր ու հող չէ, որը մեր պատմությունն է, որը մեր ինքնությունն է, մեր կենսագրությունը, մեր ինելությունը և մեր հավերժության գրավականը, հայրենիք, որ այսօր էլ մաքառում է անկախ իր պետականության կերտման համար, բազում փորձությունների միջով անցնելով, բազում դժվարություններ հաղթահարելով, արյուն ու քրտինք հեղեկով նվիրական այս սուրբ հողին:

ՂՎԱԳԵՐՆ ՂԵԶԻՐԻ ԶՈՒՄ
Ի ՄԿԱՄԻԴԱՅՐՉ ՇՏԱՆՑԻԵՐՆ ԿՓՈՎՃԻ



Արդարություն պարտիք կատարել և մեր ժողովրդի առջև, ժողովուրդ, որ տասնյակ տարիներ հեռացած է եղել իր հավատքից, ժողովուրդ, որ այսօր մոռացել է իր սրբազն հայրերի կողմից հաստատած եկեղեցական ու ազգային ավանդություններն ու սովորությունները, ովքեր կարու են հոգևոր առաջնորդության, ովքեր կարու են լսելու մեր հովիվների շորթերից լույս պատգամներն ու պատվիրանները, որպեսզի իրենց կյանքը չեավորեն այդ պատվիրանների համաշայն: Պարտավոր ենք արդարություն կատարել մեր ծառայության մեջ, մեր ժողովրդի նկատմամբ, որպեսզի Ջրիստոսվ զգեստավորվեն, որպեսզի վերստին իրենց կյանքից ներս գործն դառնա Ջրիստոսի Ավետարանի վեհ պատգամները բարոյական, որոնցով կարող ենք մեր կյանքից հեռացնել ամեն տեսակի տառապանք ու թշվառություն: Արդ, սիրելի Սրբազն Հայրեր, պարտականության նման կատարումով է, որ իրավես պիտի յնծություն լինի երկնքում, յնձալով պիտի յնձան սրբերը, իսկ երկրի վրա մեր ժողովրդի կավակունք՝ Ջրիստոսի Ավետարանի հետևորդներն ու հավատայլները:

Մենք մեր աղոթքով առ Աստված հայոց ենք երկնակոր Տիրոջից չեզ համար հավատքի հաստատունություն, ոգու արիություն, ծառայափրության բարձր պատասխանատվություն, ներշնչանքներ չեր առարինության, կյանքի ողջ ընթացքին: Մենք մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված նաև՝ հայցելով, որպեսզի Տիրոջ բարի հայացքը մշտապես լինի մեր ժողովրդի հետ, հովանի դառնա Հայոց աշխարհի վրա, պահպանի անփորչ ու ապահով, անվրդով ու խաղաղ երկիրը Հայոց և մեր ժողովրդին, ինչպես մայր երկրում, այնպես էլ ի Սփյուռս աշխարհի: Թող Տիրոջ հաղթական բազուկը ոգի ու կամք ներշնչի մեկ, որպեսզի մենք մեր կյանքի ողջ ընթացքին կարողանանք խոհեմության դրսևորմամբ հաղթահարել ամեն տեսակի փորձություն, ամեն տեսակի խոչընդոտ, որ կարող են հառնել մեր ճանապարհին, և Տիրոջ ապավիճած, Աստուծո օրինությունը վաստակած քայլենք դեպի պայծառ գալիքը մեր ժողովրդի՝ կերտելով կողը հայրենիք, կերտելով բարօր կյանք մեր հավատայյալ ժողովրդին:

Տիրոջ սերը, շնորհ և խաղաղությունն եմ հայում չեզ, որպեսզի այդ շնորհների ներքո մատուցեք չեր ծառայությունը մեր հայրենիքին, մեր ժողովրդին վասն փառացն Աստուծո և վասն փառացն սրբազն մեր հարց:

Թող Աստուծո օրինությունը միշտ տարածյալ մնա մեկ վրա՝ առաջնորդելով դեպի բարին և դեպի խաղաղություն, այժմ և հավիտյանս. Ամեն:

S. ՆՈՒՐՃԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1948 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Հայկապյան ազգային վարժարանում:

1964-1966 թթ. հաճախել է Անթիլիասի (Լիբանան) Կիլիկյան Աթոռի Դպրելվանք, որից հետո՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարան:

1968 թ., ավարտելով վարժարանը՝ չեղանակրվել է սարկավագ:

1971 թ., չեղամբ երջանկահիշատակ Պատրիարք Տ. Նդիշե արքեպոս. Տեր-տերյանի, չեղանակրվել է կոսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Նորիան արքեպոս: Ձեռնադրվելուց հետո նշանակվել է Ժառանգավորաց վարժարանի փոխտեսուց:

1972 թ. մեկնել է Ծնն՝ իրեն Ծվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ: Սեկ տարի անց ստանձնել է Խարայելի հայոց հովվության պաշտոնը:

1979-1982 թթ. եղել է Հողանդիայի հայոց հոգևոր հովիվ:

1982 թ. ԱՍՍ Արեւելան թեմի առաջնորդ Տ. Թորգոն արքեպոս. Մանուկյանի հրավերով մեկնել է Նյու Յորք: Այստեղ հոգևոր սպասավորությանը զուգընթաց ուսանել է տեղի եպիսկոպոսական Ընդհանուր աստվածաբանական ճեմարանում:

1985 թ. նշանակվել է Սփրինգֆիլտ քաղաքի (Սասաշունեթս) հայոց հոգևոր հովիվ:

1993 թվականից հոգևոր հովվի պաշտոն է կատարել Տեխնայի Հյուսթոն քաղաքում:

1998 թ. նոյեմբերի 10-ին Սրբոց Հակոբյանց միաբանության կողմից ընտրվել է Երուսաղեմի Ս. Աթոռի լուսարարապետ և 1999 թ. հունվարի 5-ից անցել պաշտոնի կատարմանը:

1999 թ. դեկտեմբերի 19-ին, չեղամբ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, չեղանակրվել է եպիսկոպոս:

S. ԱՐԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇՅԱՆ

Ծնվել է 1954 թ. Դիարբեքիրի (Տիգրանակերտ) Սիլվան գյուղաքաղաքում:
Նախնական կրթությունն ստացել է Դիարբեքիրում:

1966-1967 թթ. հաճախել է Պոլսի Ս. Խաչ դպրեվանք:

1967 թ. վերջին մեկնել է Երուսաղեմ և ուսումը շարունակել Ս. Հակոբյանց
Վարժարանում:

1973 թ. ավարտելով Վարժարանը՝ չեռնադրվել է սարկավագ:

1976 թ. ավարտելով Երուսաղեմի ընծայարանը, չեռամբ Կ. Պոլսի հայոց
Պատրիարք Տ. Շնորհը արքեպոս Գալուստյանի, չեռնադրվել է կուսակրոն
քահանա:

Եղել է Կ. Պոլսի Հալը ճզողու և Ղալաթիայի թաղերի հայոց հոգևոր
հովիվ: Ներկայումս Եշիլ գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցու հոգևոր սպասավորն
է:

Լինելով Պատրիարքության Կրոնական ժողովի անդամ՝ 1999 թ. ընտրվել
է Կրոնական ժողովի ատենապետ:

1999 թ. ստացել է ծայրագոյն Վարդապետության աստիճան:

1999 թ. դեկտեմբերի 19-ին, չեռամբ Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց
Կարողիկոսի, չեռնադրվել է եպիսկոպոս

Պատրիարքության համար լուսաւ առաջին առաջարկը նշումունքում՝
վերանայելու առև ընտրություն ուղարկելու և չափու ժամանակակից
սմայնական դիմուլուսուրացու գնաճանակու վեանութեա պահպան անձ և պարագան
վեանութեան առաջարկը նշում և համար գումարու վեանութեա վեանութեան
գոյանակ գում ու ժամանակու պարագանը նշում և համար պահպան

Պատրիարքության համար լուսաւ առաջին առաջարկը նշումունքում՝
վերանայելու առև ընտրություն ուղարկելու և չափու ժամանակակից
սմայնական դիմուլուսուրացու գնաճանակու վեանութեա պահպան առձ պահպան
և զանազան ժամանակամատ պահպանայի վեանութեա պահպան մասնակից առաջարկը

ՄԱՄԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳՎԱԶԱՆԻ ՏՎՀՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ- Ս. ԷՇՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին Գեղրդան Հոգևոր Ծեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսէս արքեպոս. Պոպապայանի, տեղի ունեցած վարդապետական թեկերի բանավոր պաշտպանություն:

Պաշտպանությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը և բազմաթիվ հյուրեր:

Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ Տ. Մակար արքեղա Հովհաննիսյանը, Տ. Արտակ արքեղա Տիգրանյանը, Տ. Գորգեն արքեղա Աղապայյանը և Տ. Զարեհ արքեղա Կարաղյանը նախապես իրենց թեկերը ներկայացրել էին երջանկահիշատակ Պարեգին Ս Կաթողիկոսին Նորին Սրբության հանձնարարությամբ կապմէլ եր հանձնաժողով՝ գլաւավորությամբ Տ. Չահէ արքեպոս. Անեմյանի (հանձնաժողովի կապմում էին նաև Ռէկրաֆինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նարան եպոս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Միքայէլ ծ. Վրդ. Աշաբահյանը, Մատենադարանի՝ չեղագրագետ Արտաշէս Մաթևոսյանը), որը նախապես ընթեռվ թեկերը՝ վելուցագիր եր ներկայացրել Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսէս արքեպոս. Պոպապայանին:

Հանդիսությանը բացման խորով հանդէս եկավ Գեղրդան Հոգևոր Ծեմարանի տեսուչ Տ. Հայկապոն ծ. Վրդ. Նաշարյանը Ասպահ հանձնաժողովի նախագահ Տ. Չահէ արքեպոս. Անեմյանը ներկաների ուշադրությանը հանձնեց հանձնաժողովի ընդհանուր կարծիքը Տ. Մակար արքեղա Հովհաննիսյանի «Թիստոս Պորանի մեջ» թեփի վերաբերյալ: Այնոհետև իր թեփի բանավոր պաշտպանությամբ հանդէս եկավ Տ. Մակար արքեղա Հովհաննիսյանը:

Մակար Հայր Սուրբի պաշտպանությունի հետո հանձնաժողովի անդամ Տ. Մաթան եպոս. Հովհաննիսյանը ներկայացրեց հանձնաժողովի կարծիքը Տ. Արտակ արքեղա Տիգրանյանի «Պարեգին Կաթողիկոս Հովսեփյանց կյանքը և

հոգևոր-գիտական գործունեությունը՝ թեսի վերաբերյալ։ Սապա թեսի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Հայր Արտակը։

Այնուհետև S. Հակոբ եսու Պղնձենյանը ներկայացրեց S. Գորգեն արեղա Աղապապյանի թեսի վերաբերյալ հանցնաժողովի կարծիքը։ Տ. Գորգեն արեղա Աղապապյանը մկնեց իր թեսի բանավոր պաշտպանությունը, որի թեման էր «Ախալցիսա»-ն։

Սապա հանցնաժողովի նախագահ S. Շահե արքեպոս. Անեմյանը ներկայացրեց S. Զարեհ արեղա Կարաղյանի թեսը՝ «Թորգոմ Պատրիարք Գոշակյանի կյանքը և հոգևոր-գիտական ժառանգությունը»։

Թեսերի բանավոր պաշտպանությունից հետո S. Շահե արքեպոս. Անեմյանը հրապարակեց հանցնաժողովի դրական կարծիքը՝ արեղաներին վարդապետական աստիճան շնորհելու մասին։

Հանդիսության վերջում Կաթողիկոսական Տեղապահն իր շնորհավորանքի և օրինության խոսքն ուղղեց թեսերը հաջողությամբ պաշտպանած երիտասարդ արեղաներին՝ մեծապես զետարտելով նրանց կատարած աշխատանքները։ Երկու օր հետո, հոկտեմբերի 10-ին, երեկոյան, Հայր Աթոռում կատարվեց «Կանոն մասնավոր իշխանության» վարդապետական տվյալներու կարգի արարողությունը։ Վարդապետական աստիճանի շնորհումը կատարեց Կաթողիկոսական Տեղապահ Անեմյանիվ S. Ներսես արքեպոս. Պողապալյանը։

ՃՐՄՆՑ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ
ՃԵՄԱՐՄԱՆ ՃԼՍԱՐՄԲ ՍԱՆ

հոգեր-գիտական գործունեությունը՝ թեսի վերաբերյալ։ Սպա թեսի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Հայր Արտակը։

Այնուհետև S. Հակոբ եսու. Գլուխինյանը ներկայացրեց S. Պորգեն արեղա Աղապապյանի թեսի վերաբերյալ հանցնաժողովի կարծիքը։ Տ. Պորգեն արեղա Աղապապյանը մկնեց իր թեսի բանավոր պաշտպանությունը, որի թեման էր «Ախալցիսա»-ն։

Սպա հանցնաժողովի նախագահ S. Շահե արքեպս. Անեմյանը ներկայացրեց S. Զարեհ արեղա Կարաղյանի թեսը՝ «Թորգոմ Պատրիարք Գոշակյանի կյանքը և հոգեր-գիտական ժառանգությունը»։

Թեսերի բանավոր պաշտպանությունից հետո S. Շահե արքեպս. Անեմյանը հրապարակեց հանցնաժողովի դրական կարծիքը՝ արեղաներին վարդապետական աստիճան շնորհելու մասին։

Հանդիսության վերջում Կաթողիկոսական Տեղապահն իր շնորհավորանքի և օրինության խոսքն ուղղեց թեսերը հաջողությամբ պաշտպանած երիտասարդ արեղաներին՝ մեծապես զետարտելով նրանց կատարած աշխատանքները։ Երկու օր հետո, հոկտեմբերի 10-ին, երեկոյան, Սայր Աթոռում կատարվեց «Կանոն մասնավոր իշխանության» վարդապետական տվյալներու կարգի արարողությունը։ Վարդապետական աստիճանի շնորհումը կատարեց Կաթողիկոսական Տեղապահ Անեմյանիվ S. Ներսես արքեպս. Պողապալյանը։

ՃՐՄՆՑ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ
ՃԵՄԱՐՄԱՆ ՃԼՍԱՐՄԲ ՍԱՆ



սարկավագ:

1989 թ. հունիսի 11-ին, «Գյուտ նշխարաց» տոնին, Տ. Ներսես արքական Պողապալյանի չեղամբ, չեղադրիել է կուսակրոն քահանա:

1988-99 թ. եղել է Թաղդադի հայոց հոգևոր հովիճի: Այդ ընթացքում Հռումում հետեւել է աստվածաբանության դասընթացների (1992-94 թթ.), հիմնել է իրարահայ թեմի թանգարանը, դեկանական «Ծկեդեցափառաց կազմ» միությունը:

1998-1999 թթ. Արարատյան Հայրապետական թեմում ծառայել է որպես առաջնորդական փոխանորդի օգնական՝ ուսումնակրթական զՃով:

1999 թ. հոկտեմբերի 8-ին պաշտպանել է «Քրիստոս Ուրանի մեջ» վարդապետական թեմը:

Այժմ վարում է ՋՈՐԾ-ի տնօրենի պաշտոնը, ինչպես նաև դասավանդում Գեղրդյան Հոգևոր Շնմարանում և Սևանի Վազգենյան Դպրանոցում:


S. ՄԱՎԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՃԱՆՆԵՍՅԱՆ

Ծնվել է 1966 թ. Թաղդադի հոգևոր դուռ:

Նախնական կրթությունը ստացել է տեղի «Միացեալ վարժարան»-ում:

1981- 88 թթ. սովորել է Սայք Արքու Ս. Էջմիածնի Հոգևոր Շնմարանում:

1988 թ. մայիսի 12-ին, չեղամբ Տ. Հովհաննես արքական Սամարյանի, չեղադրիել է



S. ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԵՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Ծնվել է 1971 թ. ապրիլի 12-ին Արտաշատի շրջանի Դիմիտրով գյուղում:

1978-88 թթ. սովորել է տեղի ռուսական միջնակարգ դպրոցում:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 28-ին, ձեռամբ Տ. Անանիա եպս. Արարացյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1994 թ. մայիսի 26-ին պաշտամնել է ավարտանակ՝ «Խաչվերացի տոնի ավանդություն» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

1994-95 թթ. աշխատել է «Ալեք և Սարի Սանուկյան Շանչառուն» թանգարանում որպես պատասխանատու տնօրինելու:

1995 թ. հուլիսի 23-ին, Պայծառակերպության տոնին, ձեռամբ Շարեգին Ս. Վեհափառ Հայրապետի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1995-99 թթ. աշխատել է Վեհարանում որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարտուղար և գալաքանակիր:

1999 թ. հոկտեմբերի 8-ին պաշտամնել է վարդապետական թեկ՝ «Վարդապետի կաթողիկոս Հովհաննես կյանքը և հոգևոր-գիտական գործունեությունը» թեմայով:



**Տ. ԳՈՒՐԳԵՆ
ՎԱՐԴԱՊԵՏ
ԱՂԱՊՊՈՅԱՆ**

Ծնվել է 1963 թ. օգոստոսի 5-ին Ախալցխայի շրջանի Փոքր Պամաճ գյուղում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1982-84 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1984-88 թթ. սովորել է

Սովորվայի Կրուպսկայայի անվան մանկավարժական ինստիտուտում:


1988-94 թթ. սովորել է Ս. Եջմիածնի Հոգևոր ճեմարանում:

Պաշտպանել է ակարտաճոտ՝ «Ախալցխայի շրջանի պատմա-մշակութային մասունքները» թեմայով:

1995 թ. հուլիսի 23-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1995-99 թթ. եղել է Զավախիքի հոգևոր տեսուչ:

1999 թ. հոկտեմբերի 8-ին պաշտպանել է վարդապետական թեկ՝ «Ախալցխա» վերտառությամբ:



Տ. ԶԱՐԵՆՎԱՐԴՎԵՏ ԿԱԲԱՂՅԱՆ

Ծնվել է 1972 թ. փետրվարի 17-ին Եղմիածին քաղաքում:

1979-89 թթ. սովորել է տեղի հմբ. 9 միջնակարգ դպրոցում:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Հոգևոր Ծեմարանը: Պաշտպանել է ավարտանական՝ «Հեղակետ Մեսրոպ արքեպահ» Սմբատյանցի կյանքը ու գործունեությունը» վերնագրով, և արժանացել «Լավ»

գնահատականի:

1995 թ. հոկտեմբերի 22-ին չեռնադրվել է սարկավագ՝ չեռամբ Տ. Անահիանում. Արաբաջանի:

1996-99 թթ. աշխատել է Սայր Աթոռ Ս. Եղմիածին քղթությունում:

1996 թ. հունիսի 12-ին Սայր Աթոռում, չեռամբ Տ. Շահե արքեպահ. Անեմյանի, չեռնադրվել է կոսակրոն քահանա:

1999 թ. հոկտեմբերի 8-ին պաշտպանել է «Ժողով Պատրիարք Գուշակյան» վարդապետական թեկը:

Հայութեալ համայնք
Օպերադոր

ՎԵՐԱԲԵՑՎԵՑ ԴԱԵՂԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 9-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսէս արքեպոս. Պուղապայանը, ուղեկցությամբ Տ. Արսէն արքեպոս. Թերքերյանի, Տ. Վիգեն եպոս. Այքապյանի և Տ. Հայկապուն ծ. Վրդ. Նախարյանի, մեկնեց հայոց մեծ քանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայր՝ Դսեղ, կատարելու Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաօծումը:

Եկեղեցու մոտ Տեղապահ Սրբազնին դիմավորեցին Գուգարաց թէմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպոհ եպոս. Ծովոյանը և Եկեղեցական խորհրդի անդամները:

Աղոթքի և շարականների երգեցողությամբ վերաօծվեց հնամենի եկեղեցու Ս. Սեղանը և Ավազանը: Վերաբացլած եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ, հընթաց որի հավոր պատշաճի քարոզեց Տեղապահ Սրբազնը:

Սրբազն արարողությանը ներկա էին Լոռու մարզպետ Հենրիկ Ջոշինյանը, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ռուլանդ Շառոյանը, քանաստեղծության Սիլվա Կապուտիկյանը, քավմաթիվ հյուրեր, դեղոցիներ: Արարողությանը ներկա էին նաև Եկեղեցու վերանորոգման բարերարներ՝ ամերիկահայ տէր և տիկին Միմոնյանները, որոնց իր մասնավոր երախտիքի խոսքը հեղին Տեղապահ և Առաջնորդ Սրբազնները:

Դսեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում է թաղված Հովհաննես Թումանյանի հայրը՝ գյուղի ժամանակի քահանա Տեր Թաղենոս: Հավարտ Ս. Պատարագի հոգեհանգստի արարողություն կատարվեց նրա շիրիմին:

Սպա ներկաները այցելեցին մեծ քանաստեղծի տուն-թանգարան:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒԻ

0ԾՎԵՅ

ՍՊԻՏԱՎԻ Ա. ՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱՌՈՂԻԿՈՍ.

«ԱՂՋՁՔՈՎ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՇԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ»

Նեկտեսբերի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Սպիտակի Ս. Հարություն նորակառույց եկեղեցու օծումը: Օծման արարողությանը ներկա գտնվելու նպատակով Սպիտակ էր ժամանել նաև Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Եկեղեցու մոտ Վեհափառ Հայրապետություն ու հանրապետության նախագահին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպոհի եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Զոշինյանը, մարզպային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Նորակառույց եկեղեցու գանգերի ղողանջի ներքո, «Հրաշափառի» երգեցողությամբ ու հոգեւոր հայրերի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց եկեղեցի: Վեհափառ Հայրապետը Սրբալուս Մյուռոնով օծեց եկեղեցը Ս. Սեղանը: Ապա, չեռամբ Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանի, Տ. Սեպոհի եպս. Չուլջյանի և Տ. Նավասարդ եպս. Կնոյանի, օծվեցին Ս. Հարություն եկեղեցու բոլոր այուները, մկրտության ավապանը:

«Ս. Հարությունը կառուցվեց որպես վկայություն ապրելու և հարատեսելու մեր կամքի, որպես վկայություն արարող մեր ոգու, ստեղծագործ և շինարար մեր քավկի: Այս եկեղեցին միաժամանակ գեղեցկագոյն հուշարձանն է բոլոր այն սպիտակույնների, որ դարձան զոհը ահավոր երկրաշարժի», - շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով, ասաց Վեհափառ Հայրապետը, պատգամելով նրանց ականջալուր լինել հոգու շայնին և մշտական աղոթքներով կենդանի պահել սր. եկեղեցին: Նորակառույց եկեղեցուն Վեհափառ Հայրապետը հանձնեց նաև իր նվերը՝ սկիհ, որտեղից կբաշխվի Զրիստոսի կենարար մարմինն ու արյունը և որով հավատավոր ժողովուրդը կհաղորդակցվի երկնային Տիրոջ հետ:

«Աստծօ օրինությունը սրբալուս մյուռոնով իշակ սպիտակույնների վրա», խոսքերով հավատավոր սպիտակույններին շնորհավորեց նաև Տ. Սեպոհի եպս. Չուլջյանը:

Երկրաշարժից հետո վեր հառնած Ս. Հարությունը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և վերն է աղետյալ սպիտակյիներին, որի կառուցումը սխալե երկու տարի առաջ՝ երջանկահիշատակ Գարեգին Ս Կաթողիկոսի օրինությամբ:

Օճան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ երջանկահիշատակ Գարեգին Ս Վեհափառի, Սպիտակի նախկին քաղաքապետ նորոց հանգույցը Սուրեն Ավետիսյանի և Սպիտակի երկրաշարժի բոլոր պոհերի, կատարեց հոգեհանգատյան մասնավոր պաշտոն:

Ապա Ս. Հարություն Եկեղեցու մատուցվեց առաջին Ս. Պատարագը: Պատարագին եր Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը:

Սպիտակից Վեհափառ Հայրապետը մեկնեց Երևան, որ կառուցվում են հավատքի նոր տաճարներ: Նորին Սրբությունն այցելեց նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի և ապա՝ Ս. Սարգիս Եկեղեցու շինհրապարակներ, իերթական անգամ ծանրանալու շինհրապարական աշխատանքների ընթացքին:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՎԵՆԻԳԱ ՀԱՅՈՒԹԵՏԸ ՍՊԻՏԱԿԻ Ա. ԿԱՐՈ-ՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԺՄԱՐ

«ԱՊԱՔԵԼՅ ԱՂԱՄԱՅ».



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՆԱՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Դեկտեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանն այցելեցին Եղեգնաձոր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ քայլեց ուսուցիչների վերապատրաստման Վայոց Ձորի կենտրոնը:

Վեհափառ Հայրապետն ու ՀՀ վարչապետը մի պահ կանգ առան քաղաքի Ս. Աստվածածին հնամենի եկեղեցում, որ հնչեց աղորք առ Աստված: Ապա Նորին Սրբությունը և Արամ Սարգսյանն ուղղվեցին եկեղեցու հարևանությամբ գտնվող նորաբաց կենտրոն:

Ուսուցիչների վերապատրաստման Վայոց Ձորի կենտրոնը Հայաստանյայց Սուաքելական Եկեղեցու Սյունյաց թեմի և ՀՀ կրթության և գիտության նախարարության համատեղ ծրագրի արդյունք է: Ըստ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված եռամյա ծրագրի, Հայաստանի մարզերում իր տեսակի մեջ առաջինը դարձած այս կենտրոնում 12 առարկաների գծով վերապատրաստման կորսեր կանցնեն մարզի բոլոր դպրոցների ուսուցիչները: Ծրագրի ծախսերը հոգում է Հայ Եկեղեցին, որի համար գումարներ է տրամադրելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանին նվիրված «Կլոր Սեղանը»: Ուսուցիչների վերապատրաստման գործին աջակցելուց վատ, Սյունյաց թեմի հովանավորությամբ նորաստեղծ կենտրոնում գործելու է նաև բարեգործական ճաշարակ, իրականացնելու են սոցիալական այլ ծրագրեր: Նշենք, որ շենքի վերանորոգման աշխատանքները նոյնպես իրականացվել են Սյունյաց թեմի հովանավորությամբ՝ քարերարներ Փոստաշյանի, Թարբարա Լորենսի, Թյուֆենքյանի և Շիրվանյանի նվիրատվություններով:

«Ուսուցանում է որդուն, նախանցն է շարժում թշնամու և հպարտանում նրա կրթությամբ իր բարեկամների առջև», - անդրադառնալով իմաստուն այս պատգամին, Նորին Սրբությունը փաստեց, որ կրթության և ուսման զգուտուն է հայ ժողովրդի լինելիության, հարատեսության և հավերժության գաղտնիքը: Վեհափառ Հայրապետն իր օրինությունն ու մաղթանքը հեց ներկաներին՝ կերպարակելով, որ անհրաժեշտ է կրթել ու դաստիարակել, կերտել հայորդյաց ալելացնելով, որ անհրաժեշտ է կրթել ու դաստիարակել, կերտել հայորդյաց

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՌԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՋՅԱԼՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 3-ին, ժամը 18.00-ին, Գևորգյան Հոգեւոր ճեմարանի հանդիսությունների սրահը բազմամարդ էր: Թարձր նախագահությամբ Գերաշնորհ Տ. Տաթի արքեպոս. Սարգսյանի տեղի ունեցավ հայոց առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալներին նվիրված հանդիսություն:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով, ապա խմբավար Ռ. Չարբաքյանի ղեկավարությամբ ճեմարանի երգչախոսումբ կատարեց Հոգեւոր ճեմարանի քայլերգը: Թայման խոսքով հանդես եկավ Ծ լսարանի սան Արմեն Պետրոսյանը: «Ս. Թադեոս առաքյալի առաքելության ոգին» վերտառությամբ քանախոսություն կարդաց Ծ լսարանի սան Արթուր Կարապետյանը: Զեկույց ման մեջ քանախոսը ներկայացրեց նաև Առաքելական-ի իր ըմբռնումը՝ նշելով: «Սիսաված և մեղանշած չենք լինի, եթե ասենք, որ մեր Մայր Եկեղեցու կողմից իր անվան համար որդեգրած միակ բաղադրիչը՝ Առաքելական ստորոգելին, իր մեջ ամփոփում է և՝ մեկ լինելու իմաստը, և՝ ընդհանրականություն, և՝ սրբություն, և՝ անխաղականություն, և՝ ուղղափառություն, և՝ հավիտենականություն»: Դ լսարանի սաներ Դավիթ Մարգարյանը և Արտակ Խաչիկյանն արտասանեցին «Թադեոս և Բարդուղիմեոս» և «Առատուլանանք ներանցնական» բանաստեղծությունները: Նըեկույթի երկրորդ քանախոսը Ծ լսարանի սան Գևորգ Սակարյանն էր, որի բանախոսությունը վերնագրված էր «Ս. Բարդուղիմեոս առաքյալ. ավանդությունների համեմատություն»: Նա խոսեց Բարդուղիմեոս առաքյալի կյանքի, քարոզության ու նահատակության վերաբերյալ եղած զանազան ավանդությունների, դրանց նմանությունների և տարբերությունների մասին: Ապա Ը լսարանի սան Չոհրապ Կարապետյանը դաշնամուրով կատարեց Ս. Բարքաջանյանի «Եքսապրուտ»-ը, որից հետո Ը լսարանի սաներ Մանուկ Մալիխայանը և Հարուրյուն Համբարձումյանը կարդացին Նարեկացու «Մատյան ողբերգության» Ձմ գլուխը: Ապա երգչախոսմբ կատարեց Կոմիտասի «Առավոտ լուսաբեր»-ը:

Հավարտ հանդիսության գեղարվեստական մասի Գերաշնորհ Տ. Տաթի արքեպոս. Սարգսյանն օրինության խոսք հղեց ներկաներին. «Առաջին խկա առիթով, պիտի ուզեի, որ, տեսուչ Հայր Սուրբ, տեսչության անդամներ, դասախոսներ, սիրելի սաներ և հյուրեր, իմ խնդակացությունը հայտնել ձեր դասախոսներ, մեր Հոգեւոր ճեմարանում՝ մեր Հոգեւոր ճեմարանում, մենք անգամ մը բոլորին, որ այսօր ճեմարանում մեր Հոգեւոր ճեմարանում, մենք անգամ մը բոլորին, որ այսօր ճեմարանում մեր Հոգեւոր ճեմարանում, մենք անգամ մը բոլորին:

Հայաստանում, Սփյուռքում, ո՞ւր, ե՞րբ և որո՞նց կողմեն այսօր մեր առարյալները կիշտառակվին, ես չեմ գիտեր, բայց կենթադրեմ, որ քիչ է թիվը այն մարդոց, որոնք այսպես կհավաքվին և արժանի հարգանքը կմատուցանեն մեր Եկեղեցվոր առաջին մեծ սուրբերուն, որոնց մեր ժողովուրդը «Լուսավորիչ» անուն է տվել՝ կիրենք պատվելու համար:

Ապրիլը, Հոգեւոր Ծեմարանի սաներ և հատկապես այս հայտագրին մասնակցող ուսանողներ, որ գնացիք, գրքերը կարդացիք, ուսումնասիրեցիք, երգ սովորեցիք, Նարեկացի բացիք, ավանդույթի մասին մտածեցիք և եկար չեր բանաստեղծություններով, ամունքներով և երգերով այս ոգեկոչական հանդեսը մեզի շնորհեցիք:

Թե՛ իբրև գնահատանքի և թե՛ մանավանդ իբրև թելադրանքի մեկերկու խոսք կուպեմ ծաել նաև հայտագրի բոլոր մասնակիցներուն: Պիտի երբեք չմոռնալ, որ Հոգեւոր Ծեմարանը այն տեղը չէ, որ մենք պարզ ուսումնասիրություններ ենք անում մարդոց մասին կամ գիտական այս կամ այն ճյուղին մասին, մենք ծանոթություններ ամբարող մարդիկ չենք, որ երթանք թեկ պաշտպանենք: Հոգեւոր Ծեմարանն այն տեղն է, որ հայկական ավանդությունը պիտի քարոզվի, այդ թվում և հայոց պատմությունը պիտի տարածվի: Այս պատճառով ես գնահատանքի խոսք ունիմ բոլոր այն ճիգերուն համար մեր բանախոսներին, որոնք պատմիչներ կարդացել են, գիտնականների ամբողջ տեսություններ վերլուծել են, որպեսզի կարենան հայկական ավանդությունը ամրագրել պատմական իրական տվյալներով: Այս է Հոգեւոր Ծեմարանի ամենակարևոր առաքելություններն մեկը, և անոր համար ես կուպեի միշտ, որ այստեղ դասախությունն եղած պահուն ամեն մարդու համար հստակ դառնար, թե ո՞վ էր մեր առաջալը, ուրկե՞ եկամ, բայց մանավանդ ի՞նչ արեց Հայաստանում. ի վերջո մեր առաջալները այստեղ նահատակվեցին և իրենց կյանքը մեզ ավանդ են թողել, և այդ ավանդը մենք պիտի անպայման պահենք սուրբ՝ հաճախ պատմելով իրենց այստեղ անցուցած կյանքը, այստեղ կատարած քարոզությունը, և մանավանդ մեր առաջին նահատակների խոստովանանքն իրենց է:

Ծվ այս սիրով կուպեմ ծաել՝ ինչ լավ կը լա, եթե այսօր մեկերկու ուսանողի երեակայության մեջ և կամ հոգու մեջ անոնց արտասանած մեկերկու խոսքը, մեկերկու աղոթքը այստեղ հնչեն, որպեսզի մենք ոգևորվեինք իրենց անշնական օրինակով և այսօր երեկոյան անկողին երթալու մեկ պահուն մենք հոգեկան մի մեծ թոփշքով կապվենք իրենց հետ և հաղորդակից լինենք այդպիսով Սուրբ Հոգու առաջնորդության, որով իրենք եկան և Աստծու խոսքը մեր ժողովրդին բերին: Այսուհետև Սրբազն Հայրը ևս, անդրադառնալով առաքելության գաղափարին՝ ասաց. «Սիրելի ուսանողներ, առաջալը այն մարդն է, որ պատգամ ունի աշխարհին տալու, որ աշխարհին խոսք է բերել,

բայց իր բերածը իրենը չէ, իր պատգամը իրենը չէ, ուրիշն է իրեն այդ պարտականությունը տվել և ինքը այդ ավանդը իրեն տվողի անունը և իր ամբողջ կյանքի գերագույն պարտականությունն է դարձնում, այդ ավանդը ապահով տեղ հասցնել: Դրա համար հին ատեն առաջալները պատիվ ունեին և առաջալներն իրավունք ունեին և առաջալները դեսպանների կարգավիճակ ունեին:

Աղոթքս է, որ մենք այսօր ևս U. Թաղեռսի և U. Շարդուիմեռսի պես առաքելությունը իրագործենք, եթե կուպեր, նվիրագործենք: Մեր ժողովուրդը U. Թաղեռսի և U. Շարդուիմեռսի լույսը նկատել է իր կյանքի հիմնական եռթյունը, հիմնական սկզբունքը և աշխարհը բացահայտելու իր աշխարհայրը և կեցվածքը: Այսօր, այս տոնակատարությունը մեզի պիտի հիշեցնե, որ մենք այդպես մարդիկ ենք, մենք այդպես ժողովուրդ ենք, լուսավորիչ ունեցել ենք, բայց այսօր կրնանք բոլոր նոյն հավատքով ըստ, որ ահա այս է լույսը, այս է ամենամեծ ճշմարտությունը, որ կրացարեք մեզի աշխարհի մյուս բոլոր իրականությունները և հարաբերությունները:

Ծվ կկարծեմ, որ այդ կամքը, այդ հավատքը, այդ համումունքը այսօր ամբողջ աշխարհի մեջ տիկարացել է, բայց հայության քով չպետք է տկարան: Ծվ անոր համար մեզմե յորաքանչյուրին նիգը, յորաքանչյուրին աշխատանքը, վեց տարիներու ուսմունքը պետք է մեզի համար առիթ հանդիսանա, որ այդ մեկ կամքը կերտենք մեր մեջ, այդ համումունքը ունենանք և այլևս չըքաղինք աշխարհի մեջ փնտրելու ուրիշ բաներ, որ մեր կյանքը արժենորեն, մեզ համար լոյս բացեն ուրիշ աշխարհի իրականություններուն: Ըս կհավատամ, որ անոր համար է մեր պրկիած կյանքը, և ամեն օր կտեսնեմ, թե ինչպես ուսանողներուն մեջ կամաց-կամաց հետպիենե կավելանա այն իմաստությունը, այն փորձառությունը, որոնցով իրենք ալ կզգան, թե իսկական Ավետարանի լոյսն է, որ մեր ճամփան պիտի լուսավորե ապագային և իրապես Ջրիառու և Աստված ննը է աշխարհի լոյսը, որ այս երկու առաջալների միջոցով նաև փոխադրվելով Հայաստան աշխարհ, և որոնց սրանչելի տոնակատարությունը դուք կատարեցիք այսօր:

Այդ լոյսը չեզ ավանդ, երեխե՞ր, լավ պահեք, այդ լոյսը չեր փառքն է, փառակորվեցեք դրանով, այդ լոյսը չեր կյանքը քաղցրացնող ամենամեծ ուժը պիտի ըլլա ապագային, լավ պահեցեք, վարչքերդ ի կատար»:

Հ ԿՈՍԱՆՅԱՆ

Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՋՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Նեկտեմբերի 4-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնում էր Հայաստանում քրիստոնեության առաջին ուսուցիչների՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Որպես քարոզության խորհրդի ոգեկոչում, արդեն հինգերորդ տարին է, ինչ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի հատուկ պատգամով սր. առաքյալների տոնը հոչակված է նաև քրիստոնեական դաստիարակության օր:

Այդ օրը Սայր Աթոռ Ս. Էջմիածնում, ի հիշատակ հայոց առաջին լուսավորիչների, մատուցելով Ս. Պատարագ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տոնակատարությունը շարունակվելու Եջմիածնի մշակույթի տանը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչ վկայական հանձնվեց Սայր Աթոռ Ս. Էջմիածնի Զրիստոնեական Դաստիարակության և Քարոզության Կենտրոնի երկամյա դասընթացներն ավարտած 228 ուսուցիչ:

Արագածոտնի թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, որ չորս տարի շարունակ ղեկավարում էր ԶԴԶԿ-ի աշխատանքները, կարևորելով քրիստոնեական դաստիարակությունը, նշեց, որ կենտրոնի կարևորագույն նպատակներից մեկը կրոնի ուսուցիչների պատրաստումն է: Ինչպես տեղեկացրեց Հոգեշնորի Հայրը, վերջին հինգ տարիների ընթացքում կրոն դասավանդող ուսուցիչների երկամյա դասընթացներ են կազմակերպվել Արարատյան Հայրապետական, Արմավիրի, Արագածոտնի, Գուգարաց և Սյունյաց թեմերի 11 քաղաքներում: Երկու տարի առաջ կրոն դասավանդող ուսուցիչ որակավորում է ատացել ևս 335 ունկնդիր: Այսօր կրոնի ուսուցիչները դասավանդում են Հայաստանի շուրջ 50 կիրակնօրյա և հարյուրից ավելի հանրակրթական դպրոցներում:

Գոհոնակությամբ նշելով, որ կրոն առարկան պետականորեն արդեն ընդգրկված է Արցախի և Զաշարայի շրջանի հանրակրթական դպրոցների ծրագրում, Հայր Վազգենը բացառիկ իրադարձություն համարեց Արցախի թեմի Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում վերջին երկու տարիներին կազմակերպված կրոնի շուրջ 180 ուսուցիչների պատրաստման ուսումնական

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ա. ԾՆՆԴԵԱՆ 2000-ԱՄԵԱԿԻ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ԱՂՕԹԱԺՈՂՈՎ

Հինգշաբթի, 30 Դեկտեմբերի 10.00-ի երեկոյեան, Գահիրեի Յահեր քաղաքասի Թոլեծ Տղ Լա Սալի ընդարձակ կաթողիկէ եկեղեցին մէջ յատուկ հրաւերով, տեղի ունեցած Յիսուսի Թրիստոսի Ա. Ծննդեան 2000-ամեակի յորելինական հանդիսութիւններուն առաջին չեռնարկը, ներկայութեամբ Նորին Ամենապատութիւն Ծնուտա Գ. Խպտոց Պատրիարքի եւ Խպտի Կաթողիկէ Ստեֆանոս Ա. Պատրիարքի: Ներկա էին Անկլիքան եւ Աւետարանական Ծկեղեցոյ պետերը: Յոյն Ուղղափառ Պատրիարքի փոխանորդ Արքեպիսկոպոսը, Հայ Առաքելական Ուղղափառ, Սուրի Ուղղափառ, Յոյն Կաթողիկէ եւ այլ Ծկեղեցիններու հոգեւոր պետերը, բազմաթի վարդապետներ եւ մայրապետներ:

Նըրեկոյեան ժամը 6-ին Ն. Ամեն. Պատրիարքները ժամանեցին: Կաթողիկէ համայնքի Արիներն ու Արենուշները թմրկահարութեամբ եւ փողերու նուագով դիմաւորեցին հիւրերը: Ուշագրաւ էր բազմահազար ժողովուրդի կարգ-կանոնը պահելու համար ոստիկաններու առատութիւնը:

Դպրաց դասերու երգեցողութեամբ եւ թափօրով, տանեակներով հոգեւորականներու խումքը յառաջացաւ դէպի Սուրբ Ծկեղեցի, ուր ժողովուրդը ծափողջոյններով ընդունեց թափօրապետ Պատրիարքներն ու բարձրաստիճան հոգեւորականները:

Ն. Ամեն. Ծնուտա Գ. Պատրիարքը գոհարանական աղօթքով բացուած յայտարարեց յորելինական հաւաքը: Ապա Ն. Ամեն. Ստեֆանոս Ա. Պատրիարքը հանդես եկաւ բացման խօսքով եւ բացատրութիւններով: Դպրաց դասերը մէջնումէց շարականներ երգեցին եւ ընթերցուածներ կարդացուեցան մարգարեական Գիրքերէ եւ Նոր Կոտակարաննեն: Ի միջի այլոց Գերշ. Տ. Զաւէն Արքեպիսկոպոս Արաքերէն լեզուով կարդաց Կողոպացոց ողղուած նամակի Ագլուխի առաջին համարէն մինչեւ 20-րդ համարը :

Ս. Աւետարանի ընթերցումնեն ետք, Ամեն. Տ. Ծնուտա Գ. Պատրիարքը հրամիրուեցաւ քարոզ խօսելու: Յետոյ հոգեւորականներուն եւ ժողովուրդին մումէր բաժնուեցան: Յորելինական այս առաջին չեռնարկին եւ Եկումենական մթնոլորտին մէջ, հաւատացեալները ունեին հոգեւոր ուրախութեան ապրումներ:

Տերունական աղօթքով վակուեցաւ հաւաքը, ժամը 8-ին, երբ Պատրիարքներ առաքելական օրինութիւն բաշխեցին հաւատացեալներուն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ.

Պայմանագիր ՀՈՒՐԵՐ

**Վ ԴԱՄԱՇԽԱՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՅՈՒՄԸ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ**

Դեկտեմբերի 6-7-ը Սոսկվայում գումարվեց Համաշխարհային Ռուսական Ժողովրդական Համագումարի հերթական՝ թվով 5-րդ ժողովը, որին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության կառավարության բարձրաստիճան պաշտոնյաններ, տարբեր կուսակցությունների առաջնորդներ և ներկայացուցիչներ, հասարակական և մշակութային կազմակերպությունների նախագահներ, Ռուս Ռուսական Եկեղեցու բարձրաստիճան հոգկոռականներ, քոյլ Եկեղեցիների և այլ կրոնների ներկայացուցիչներ: Ժողովին մասնակցելու նպատակով Սոսկվա էին ժամանել նաև պատվիրակություններ Ռուսաստանի 20 շրջաններից, ինչպես նաև ներկայացուցիչներ Թելոռուսիայից, Ղազախստանից, Ռուսաբնայից, Լիտվայից, Հայաստանից և Ֆրանսիայի: Ժողովականների առջև խոսքով հանդես եկավ Նորին Սրբություն Ալեքսի Թ-ն, հոյս հայուննելով, որ «Սուրբ Ծննդյան 2000-ամյակի նախօրեին տեղի ունեցող այս երկխոսությունը» գերագույն նպատակ կունենա Հայրենիքի բարօրությունը և կընթանա փոխըմբռման և խաղաղության մթնոլորտում: Ժողովի վերջում ընդունվել է «Ռուսաստանը բրիստոնեության 2000-ամյակի շեմին» վերնագրված ընդհանուր հայտարարագիրը:

**ԱԼԹԱՅԻ ԹԵՄԸ ՏԵՐՁՈՒՄ Է ՊԵՏԱԿՈՒՄԱՅԻ
 ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
 ԴԱՅԱՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ԱՌԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ-
 ՌՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՏ**

Ոուս Ուղղափառ Եկեղեցու Ալթայի թեմը հանդես է եկել մի հայտարարությամբ, որով հերքում է Պետքումայի պատգամավորության որոշ թեկնածուների այն հայտարարությունները, թե ուղղափառ հոգևորականությունը պաշտպանում է իրենց: Թեմի մամլո ծառայության հայտարարության մեջ ասվում է, որ Սուրբ Սինոդի համապատասխան որոշման համաձայն Եկեղեցին չի խառնվում քաղաքական պայքարի մեջ՝ պահպանելով իր չեկոքությունը: Սինէդէռ Ալթայի շրջանի պատգամավորության որոշ թեկնածուներ օգտագործում են Եկեղեցու հեղինակությունն իրենց անշնական շահերի նպատակով, որը միանգամայն անթույլատրելի է:

**ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳԻ ՌՈԳԵՎՈՐԱԿԱԽՆԵՐՆ
 ԱՌՈՋՈՒՄ ԵՆ ԶԻԱՆ-ՌՎ ԴԻՎԱՆՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
 ՀԱՄԱՐ**

Դեկտեմբերի 1-ին, Եկատերինբուրգի թեմի հոգևորական Վիտայի Պոպով տեղի ԶԻԱՆ-ի դեմ պայքարի կենտրոնում հիվանդների առողջության համար Պատարագ մատուցեց: Հավարտ Պատարագի, դիմելով ներկաներին, Հայր Վիտային ասել է. «Ճիշտ չէ ԶԻԱՆ-ը նկատել իբրև Աստծո պատիճ: Քրիստոնեական Աստված՝ Ողորմած Աստված է: Տերև այսպիսի հիվանդություններ է թույլ տալիս ոչ միայն մեր մեղքերի պատճառով, այլև՝ մեր փորձության և դարձի համար»: «Աստված մահաբեր հիվանդությունները թույլ է տալիս, որպեսզի մարդ մահվան և օրակուր մոտենա հավիտենության դեմ շտկի իր կյանքը, դարձի գա, ապաշխարի և առաքինի կյանք վարի», ավելացրել է նա:

**ԱԵՔՍԻՅԻ Բ ՊԱՏՐԻԱՐքԻ
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՏԵՏ**

Ոեկտեմբերի 21-ին պատրիարքական նստավայրում Նորին Սրբություն Ալեքսի Թ-ն, հանդիպում է ունեցել Ռուսաստանում հավատարմագրված արարական երկրների դեսպանների հետ: Հանդիպմանը մասնակցել են Արարական պետությունների Լիգայի դեսպանը, Պաղեստինի, Իրաքի, Եգիպտոսի, Լիբանանի, Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Ալժիրի, Թունիսի, Միացյալ Արարական Եմիրությունների, Թախրեյնի, Հորդանանի, Ջութեյրի, Մալթականիայի և Սոմալիի դեսպանները: Հանդիպմանը քննարկվել է Երուսաղեմի կարգավիճակը և հույս հայտնվել, որ այն դառնալու է խաղաղության քաղաք: Միևնույն ժամանակ արարական երկրների դեսպանների կողմից բարձր է գնահատվել Ռուս Ռուսական Եկեղեցու դիրքորոշումը Սերբակոր Արևելքի խաղաղ բանակցային գործընթացում: Անդրադառնալով Թեզնիայում տիրող հակամարտությանը՝ դեսպանները մեկ անգամ ևս շեշտել են, որ դա հակամարտություն չէ իսլամի և քրիստոնեության միջև, որովհետև համաշխարհին այս երկու կրոններն ունեն այն ընդհանուր սկզբունքները, որոնք համագործակցության հիմք են ծառայում:

**ԿՈՒԲԱՅԻ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԴԵՍՊԱՆԸ
ՍՈՒՐԲ ԱԶ-ՈՒ-ՈՒՄ**

Կուրայի նոր նշանակված դեսպան Խսիդր Գոմես Սանթոսը դեկտեմբերի 2-ին հանդիպում է ունեցել Հովհաննես-Պողոս Պ Պապի հետ, որի ընթացքում Նորին Սրբությանն է հանշնել իր հավատարմագրերը: Պապը հանդիպման ժամանակ անդրադարձել է նաև Կուրայում խնդի պատության օրենքի ոչ լիարժեք կիրառմանը, որն իր հերթին նպաստում է «քարոյական և կյութական չքավորությանը»՝ միևնույն ժամանակ կարենորելով Եկեղեցի-պետություն համագործակցության կարևորությունը: Իր պատասխան խոսքում դեսպանը շեշտել է, որ մինչև օրս ուժի մեջ է Միացյալ Նահանգների կողմից խրախուս վող միջազգային եմբարգոն, որը «ազրեսիա» է ընդդեմ Կուրայի: «Ես վստահեցում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, որ Կուրան միշտ բաց է եղել աշխարհի համար», - ավելացրել է նա:

ՀՈՌՄԻ ՊԱՊԼ

ՏԱՆԻՄՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ԴՈՄԻՆԻԿՅԱՆ ՏԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 11-ին Նորին Սրբությունը հանդիպում է ունեցել Դոմինիկյան Հանրապետության եպիսկոպոսներ հետ՝ առաջնորդությամբ Սանտո Շոմինգոյի կարդինալ Նիկոլաս դե Ջիվու Լոպես Ռոդրիգեսի: Անդրադառնալով Դոմինիկյան Հանրապետությանը հովող այնպիսի հարցերին, ինչպիսիք են չքավորությունը, գործազրկությունը, ապահարզանների ու արհեստական վիճումների բարձր տոկոսը, Պապը եպիսկոպոսներին կոչ է արել ակտիվացնել Եկեղեցու հասարակական աշխատանքները: Դոմինիկյան Հանրապետությունն ունի շորջ ութ միլիոն բնակչություն, որից 95 %-ը կաթոլիկ են:

ՊԱՊԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՋ ԴԵՌԵՎՍ ՏԱՐՅԱԿԱՆԻ ՏԱԿ Է

Պատունական Վատիկանը տակավին վստահ չէ, որ հնարավոր կինի կազմակերպել Հռվիաննես-Պողոս թ Պապի այցելությունը Իրաք, որտեղ Աքրահամ և այլ ամսագործությունները կատարվեն: Այս քանի ամսի տևած քանակությունները Վատիկանի և Իրաքի միջև առաջմ ոչ մի դրական արդյունք չեն տվել: Լրագրողներին տված իր հարցագրույցում Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Սոդանոն ասել է, որ, համաշայն նախնական պայմանագրության, այցելությունը պետք է տեղի ունենար 1999 թ. դեկտեմբերին: Հիշեցնենք, որ Սիացյալ Նահանգներն առաջին բողոքեցին այս այցելության դեմ, սակայն միջադեպը շտկվեց, եթե Վաշինգտոնի պաշտոնական բացարձիկեց, որ Նորին Սրբության այցելությունը կուտ հոգևոր ուխտագնացություն է, և որ ուղևորության ընթացքին ոչ մի քաղաքական հայտարարություններ չեն արվելու: Սակայն որքան էլ դա տարօրինակ թվա, բարդությունները հարուցվել են ոչ թե Սիացյալ Նահանգների, այլ հենց Իրաքի կառավարության կողմից: Այսուամենայնիվ Վատիկանը դեռևս հույս ունի, որ հնարավոր կինի կյանքի կոչել Հռոմի Պահանայապետի այս ուխտագնացությունը:

ՀՈՌՄԻ ՊԱՊԸ
ՄԱՆԱՊԱՏԻԺՆ ԻՐԵՎԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀԱՏԱԿԱՆ
ՊԱՏԻԺՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ԿՈՉ Է ԱՐԵԼ

Դեկտեմբերի 12-ին իր կիրակօրյա ավանդական ելույթում Պապը կոչ է արել երկրի բոլոր իշխանություններին միանալ՝ արգելելու համար մահապատճեն իքը դատական վեճու: «Սարդկությունն այսօր ի վիճակի չէ, - ասել է նա, - այլ միջոցներով պայքարելու հանցագործների դեմ»: Նոյն օրերին Սուրբ Եղիդիոս համայնքը Հռոմում մի շարք միջոցառումներ էր կազմակերպել՝ հասարակության ուշադրությունն այս կարևորագույն խնդրին գրավելու նպատակով:

**ՊԱՊԻ ՅԱՎԱԿՅՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՆԵՍՈՒԵԼԱՅԻ
ԺՈՂՈՎՐԴԻՆ**

Սորին Սրբությունը յավակցական հեռագիր է հղել Վենեսուելայի ժողովրդին՝ աղետաբեր ջրհեղեղի կապակցությամբ: Նա հավաստիացրել է նրանց, որ աղոթելու է զոհերի և տուժածների համար: Միևնույն ժամանակ Հռոմի Պահանայապետը կոչ է արել բոլոր մարդասիրական կազմակերպություններին և «քարի կամք ունեցող մարդկանց»՝ աջակցել և անել հնարակոր ամենը՝ այս ընական աղետից տուժածների տները վերականգնելու համար:

**ՊԱՊԻ ԿՈՉԸ ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐԻ
ԿԱՊԱԿՅՈՒԹ-ՅԱՍՄԱՐ**

Սորին Սրբություն Հովհաննես-Պողոս Ա Պապն իր խոսքն ուղղելով Կաթոլիկ Եկեղեցու հավատայցաներին՝ կոչ է արել Տիրոց Ծնունդը տոնել «պարզ և արթուն» կերպով: Մեն Ավելներ տալը իին և գովելի սովորություն է, սակայն այն երեք չափությունը է գերիշխի Հիսուս Քրիստոսի Ծննդյան հրաշափառ խորհրդի վրա: Փողոցների և այլ վայրերի գույնպգույն լույսերն ու պարդարանքները Սուրբ Ծննդյան միայն արտաքին դրսերումներն են և անհրաժեշտ է փորձել հասու լինել Հաշուության անմեկնելի խորհրդին:

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԻՆ

Չեխիայի Հանրապետությունը Նոր տարվա և Սուրբ Ծննդյան կապակցությամբ Վատիկանին էր նվիրել 85 ոտնաշափ երկարություն ունեցող մի եղևնի, որը տեղադրվել էր Սուրբ Պետրոս տաճարի առջև: Թայման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին հատուկ այս առիթով Վատիկան ժամանած Չեխիայի Հանրապետության նախագահ Վաղարշ Հավելը և չեխ կարդինալներ Միքայել Վլադիմիր և Եղիշել Սպուտին:

ԴՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՆԱԽՎՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռեկտեմբերի 23-ին Վատիկանի պաշտոնյաները հայտարարեցին Հոբելյանական տարվա վերջնական նախապատրաստությունների մասին: Ստացվել են շուրջ 62.000 խնդրագրեր Սուրբ Պետրոս տաճարում տեղի ունեցող Դոնքացերի արարողությանը մասնակցելու համար, սակայն միայն 8.200 հոգի հետարակություն կունենան մոտք գործել տաճար: 44.000 նատատեղիներ են պատրաստվել անմիջապես Սուրբ Պետրոս տաճարի դիմաց: Թայիր այդ, քաղաքի հատուկ վայրերում տեղադրվել են մեծ չափերի հեռուստաելեկաններ, որոնք հնարարվություն կընչեն ցանկացողներին մասնակից լինել արարողությանը: Ընդհանուր հաշվարկով Դոնքացերի արարողությունը հեռարձակվելու է շուրջ 58 երկրներում: Իրականում, սակայն, միայն 300 հոգի են անմիջապես Պապին մոտիկ գտնվելու այդ բացառիկ արարողությանը, որոնց թվում են երգչախմբի անդամները, կարդինալական դասը, Խովանիայի նախագահը, քաղաքապետը, երկրի ակնառու քաղաքական գործիչները և Վատիկանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական անշնակապմը: Դոնքացերի արարողությանը կմասնակցի նաև Կ. Պոլսոն Հայոց Պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Սութաֆյանը:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐԴ

ՄԱԼԱԿԱՎԱՐԱ ՄԵՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ

17-րդ դարի կեսին, խիստ դժգոհ պորտուգալացիների կողմից իրենց Եկեղեցու լատինականացման իրողությամբ, Հնդկաստանի Թովմասական քրիստոնյաները (Thomas Christian, 15-րդ դարում, երբ պորտուգալացիները մտնում են Հնդկաստան, այստեղ արդեն գոյություն ուներ քրիստոնեական համայնք, որը համաշայն համայնքի անդամների, իիմնևել էր Թովմաս Սուարյալի կողմից) բաժանվում են Կաթոլիկ Եկեղեցուց: Բաժանվածների առաջնորդը թերևս փորձել է վերականգնել հաղորդությունը Արևելի Ասորական Եկեղեցու հետ, սակայն դա նրան չի հաջողվել: Համայնքը դեկավարելու նպատակով 1665 թ. Սիրիայի Պատրիարքը համաշայնում է եպիսկոպոս ուղարկել՝ պայմանով, որ առաջնորդն ու իր հետեւրդներն ընդունեն Սիրիական քրիստոնարքանությունն ու Արևմտա-Սիրիական ծիսակարգը: Այս խումբը Սիրիական Պատրիարքության հովանու ներքո ի վերջո սկսում է գործել իրեն ինքնավար Եկեղեցի:

Այնուամենայնիվ, 1912 թ. համայնքում պառակտում է տեղի ունենում, երբ Եկեղեցու զգալի մի մասն իրեն ավտոկեֆալ է հոչակում և հայտարարում Հնդկաստանում Արևելի հնագույն Կաթողիկոսության վերահաստատման մասին: Սա չի ընդունվում Սիրիայի Պատրիարքին հավատարիմ մեացածների կողմից: Երկու կողմերը հաշտվեցին 1958 թ., երբ Հնդկաստանի Գերագոյն Պատարանը հայտարարեց, որ միայն ավտոկեֆալ Կաթողիկոսն ու իր հետ հաղորդության մեջ եղող եպիսկոպոսներն իրավական իիմք ունեն: Սակայն 1975 թ. Սիրիայի Պատրիարքը հաղորդությունից վրկում և գահընկեց է անում Կաթողիկոսին՝ փոխարենը նշանակելով հակառակորդ մեկին. մի արարք, որը համայնքի նոր պառակտման պատճառն է դառնում: 1995 թ. սկզբին Հնդկաստանի Գերագոյն Պատարանը պատասխան է պահանջում վիճակարույց որոշման համար:

Այս երկու համայնքների անդամների նշգրիտ թիվը որոշելը չափավանց դժվար է և երկու կողմերն եւ մեծապես վիճարկում են այն: Զեկոր դիտորդ գործարքը է և երկու կողմերն եւ մեծապես վիճարկում են այն: Զեկոր դիտորդ գործարքը է և երկու կողմերն եւ մեծապես վիճարկում են այն: Զեկոր դիտորդ գործարքը է և երկու կողմերն եւ մեծապես վիճարկում են այն:

յան ուղղափառ քրիստոնյաների մոտավորապես կեսը հիշյալ ավտոկեֆալ Եկեղեցու մասն են կազմում, մինչեղո մնացյալը մաս են կազմում Սիրիական Ուղղափառ Պատրիարքության հոգևոր իշխանության ներքո գտնվող ինքնավար Եկեղեցու:

Կեռալայում գոյություն ունեն երկու այլ Եկեղեցիներ ևս, որոնք առաջացել են մալանկարա ուղղափառ համայնքից ներս: Սասամբ անգլիկան քարոզիչների ծավալած գործունեության պատճառով 19-րդ դարում այս Եկեղեցու ներսում առաջ է գալիս քարենորդչական շարժում: Նրանք, ովքեր հարում են այս շարժմանը, ի վերջո հիմնում են Սալաբար Սար Թովմաս Սիրիական Եկեղեցին, որն ընդհանուր առմամբ պահպանում է արևելյան ծիսակարգի կիրառությունն ու քարոյականության ուսմունքը: Սիրիական Ուղղափառ Եկեղեցուց իր եպիսկոպոսական հաջորդականությունն առնող այս Եկեղեցին հակված է, սակայն, ընդունել քողոքական աստվածաբանությունը: 1974 թ. այն հաղորդության մեջ է անգլիկան նահանգների հետ: Այն այժմ ունի շուրջ 700.000 անդամ:

18-րդ դարի վերջին Երուսաղեմի սիրիական առաջնորդը մի վանականի եպիսկոպոս է ձեռնադրում, որը, սակայն, չի ճանաչվում Սալանկարա Սիտրոպոլիտության կողմից: Այս եպիսկոպոսը հետագայում փախչում է հյուսիս և Թհովհիյոր (Thozhiyoor) գյուղում հիմնում հավատայցաների իր սեփական խումբը: Թհովհիյորի Սալաբար Անկախ Սիրիական Եկեղեցի անունը կրող Եկեղեցին ունի 10.000-ից քիչ անդամներ: Պահպանելով իր արևելյան ժառանգությունը, այն կապեր է հաստատել Սար Թովմասի Եկեղեցու ու առավել ևս՝ անգլիկան համայնքի հետ:

Սալանկարա Սիրիական Ուղղափառ Եկեղեցին Զոթայամում ունի ուղղափառ աստվածաբանական ճեմարան, որը հիմնվել է 19-րդ դարի սկզբին և այժմ ունի շուրջ 75 ուսանող: Վերջին շրջանում նոր մասնաշենքեր են կառուցվել, ներառյալ «Սոֆիա Կենտրոն»՝, աշխարհականների ուսումնառության համար: Այս Եկեղեցին ունի նաև մի քանի քոլեջներ, դպրոցներ, հիմնադասներ և որբանոցներ:

Այն ունի նաև համեստ վանական ավանդություն: Գոյություն ունեն տղամարդկանց 4 համայնքներ, որոնք առաջնորդվում են վանական օրենքներով, և առանց որոշակի վանական սահմանադրության գործող 11 այլ համայնքներ՝ կուսակրոն հոգևորականների և աշխարհականների համար: Կան նաև 10 կուսանոցներ, որտեղ պաշտամունքի և ծառայության նվիրյալ կյանք են ապրում քավմաթիվ կուսեր:

ԵՐԻԹԵՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅԻ

Կարմիր Ծովի հարավ-արևմտյան ափին գտնվող Երիթերիան հիմնված է քրիստոնեական հնագույն Արտուր թագավորության տեղում: Իբրև հետևանք մահմեդական արշավանքների, 7-րդ դարում այն սկսում է անկում ապրել, և նրա տարածքում հիմնվում է Եթովպական նոր թագավորությունը: Սինչև 16-րդ դարը՝ Օսմանյան լծի տակ ընկնելը, տարածաշրջանը դրոշակի անկախություն էր պահպանում: 1890-1941 թթ. Երիթերիան Խուալիայի գաղութն էր, ապա այն նվաճվում է անգլիացիների կողմից: 1952 թ. Երիթերիան դաշնության մեջ է մտնում Եթովպակայի հետ, իսկ 1962-ին դառնում է Եթովպակայի նահանգ: Խնքնավարության երկարատև պայքարն ավարտվում է 1993 թ. մայիսի 24-ին՝ երկրի անկախության հռչակումով:

Եթովպական Ուղղափառ Եկեղեցուց բաժանվելու և ավտոկեֆալության կարգավիճակ չեռք բերելու նպատակով, 1993 թ. հուլիսին երկրի եպիսկոպոսը (կառավարության օժանդակությամբ) դիմում է Ոպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա III Պապին: 1993 թ. սեպտեմբերի 28-ին դպտի սուրբ սինոդը դրական պատասխան է տալիս և թույլատրում Երիթերիական Եկեղեցու ապագա 10 եպիսկոպոսների ուսումնառությունը դպտի վանքերում: 1994 թ. հունիսի 19-ին Կահիրենում Շենուդա Պապը նրանցից 5-ին չեռնադրում է եպիսկոպոս:

Երիթերիական Ուղղափառ Եկեղեցին անկախություն է չեռք բերել Եթովպական Ուղղափառ Եկեղեցու համաշայնությամբ: 1993 թ. սեպտեմբերի սկզբներին Պառլոս Պատրիարքը ու Փիլիպոս Արքափիսկոպոսը (Երիթերիայի առաջնորդը) վավերացնում են իրենց Եկեղեցիների բաժանումը՝ ընդգծելով, սակայն, սերտ համագործակցության իրենց ցանկությունը: 1994 թ. փետրվարին Ադիս Աբեբայում ստորագրվում է մի համաշայնագիր, որը վերահաստատում էր Եթովպական և Երիթերիական Ուղղափառ Եկեղեցիների ավտոկեֆալությունը և ճանաչում էր Աֆրիկայում գտնվող Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների մեջ՝ Դպտի Եկեղեցու առաջնության պատիվը:

Երիթերիական Ուղղափառ Եկեղեցին ունի 1. 500 եկեղեցի, 22 վանք և 15.000 հոգևորական:

*Ronald G. Roberson -ի «THE EASTERN CHRISTIAN CURCHES»
գրքից հայերեն փոխադրեց ԲԱԲԿԵՆ ՄՐԿ. ՆԱՆՅԱՆԼ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Տոկոսամրերի 3-ին, կիրակի.- Դ. կիրակի զենի Ս. Խոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մաքուցեց Մայր Վրոնի Մկրտարանի ծխակաբար քահանա Տ. Խաչապուր ավագ քին. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը՝ «Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ի նոյն հաւաքս» (Բ Կորնթ. ԺԳ 5) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էին Տ. Արսեն արքեպոս. Բերբերյանը, Տ. Դավիթ արքեպոս. Սահակյանը, Տ. Գրիգորիս արքեպոս. Բունիաթյանը, Տ. Հակոբ եպոս. Գըլընճյանը և այլ միաբան Հայրեր:

Տոկոսամրերի 8-ին, ուրբաթ.- Պահօ:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում Մեծ Քրիստոնիայի և Հյուսիսային Խոլանդիայի Միացյալ Թագավորության արքակարգ և լիազոր դեսպան Զոն Միփչիները, որն ավարտում է իր դիվանագիրական առաքելությունը Հայաստանում, այցելեց Մայր Վրոն Ս. Էջմիածին՝ իրաժեշտ դալու Կաթողիկոսական Տեղապահ Ամենապարիվ Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանին:

Տեղապահ Արքազանը բարձր գնահաքեց պարոն Միփչիների դիվանագիրական գործունեությունը Հայաստանում՝ գոհունակությամբ մաքնանշելով երկու երկրների միջև զարգացող կապերը: Միաժամանակ Արքազան Հայրը փասփեց, որ Հայ Առաքելական և Անգլիկան Եկեղեցիների միջև գոյություն ունեն սերդ կապեր: Հրաժեշտ դեսպանին, Արքազան Հայրը Վերջինիս նորանոր հաջողություններ մաղթեց իր հերազարդ դիվանագիրական գործունեության մեջ:

Նոյն օրը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանի նախագահությամբ, գեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Պաշփանությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողները և բազմաթիվ հյուրեր (Տե՛ս էջ 90):

Տոկումքերի 9-ին, շաբաթ.- Մրցոց մարզմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովյայ, Եղիշեի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյառի Միլիխոնիային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կոսկեցւոյն:

Այսօր Կաթողիկոսական գեղապահ Ամենապարհիվ S. Ներսես արքեպս. Պողապալյանը, ուղեկցությամբ S. Արքեպս արքեպս. Բերբերյանի, S. Վիգեն եպս. Այրազյանի և S. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի, մեկնեց հայոց մեծ քանաքեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայր՝ Դսեղ, U. Գրիգոր Լուսավորիչ եկանեցու վերաօծումը կապարելու (Տե՛ս էջ 96):

Տոկումքերի 10-ին, կիրակի.- Ե. կիրակի զենի Ս. Խոչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ U. Սեղանի վրա, U. Պատրարք մակուցեց Մայր Աթոռի միաբան S. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պարարագիչ Հայր Սուրբը քարող խոսեց՝ «Երանի որոց ոչ իցէ գենեալ՝ և հաւաքասցեն» (Հովի. Ի 29) բնաբանով:

U. Պատրարքին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ S. Ներսես արքեպս. Պողապալյանը, S. Արքեպս արքեպս. Բերբերյանը, S. Դավիթ արքեպս. Սահակյանը, S. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, S. Հակոբ արքեպս. Գրլընճյանը և այլ միաբան Հայրեր ու հյուրեր:

Նոյն օրը, երեկոյան, Մայր Տաճարում, ձեռամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապարհիվ S. Ներսես արքեպս. Պողապալյանի, գեղի ունեցավ մասնավոր վարդապետական ասդիճանի փվզություն:

Վարդապետական թեզերի հաջող պաշփանությունից հետո վարդապետական ասդիճան շնորհվեց Մայր Աթոռ U. Էջմիածնի երիտասարդ միաբաններ S. Մակար արքեղա Հովհաննիայանին, S. Արքակ արքեղա Տիգրանյանին, S. Գուրգեն արքեղա Աղաքարյանին և S. Զարեհ արքեղա Կարաղյանին: Բոլոր Հայր Սուրբերը սպացան վարդապետական գավազան և յանին: Բոլոր Հայր Սուրբերը սպացան վարդապետական գավազան և հելքայուն Սուրբ Գիրքը քարոզելու և ուսուցանելու իշխանություն:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրասպիհան հոգևորականներ, միաբան Հայրեր, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ, հրավիրյալներ:

Տոկորենքերի 15-ին, ուրբաթ.- Պահը:

Այսօր Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապարհի Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանի բարձր նախազահությամբ, փեղի ունեցավ հանդիսություն՝ Նվիրված Ճեմարանի բազմավարակ դասախոս և շնորհալի բանասպեղծ Վաչագան Հովհաննիսյանի հիշարակին:

Իր խորին ցավակցությունը հայփնելով բանասպեղծի հարազարներին՝ Տեղապահ Արքազանը մտերմիկ հուշեր պարբեր նրա մասին:

Վաչագան Հովհաննիսյանի նախկին սաները՝ Հոգևոր Ճեմարանի 4-րդ լսարանի ուսանողները, որպես հիշարակի գուրք իրենց նախկին ուսուցչին, հանդես եկան գրական-գեղարվեստական հայդագրով, նրա բանասպեղծությունների արդասանությամբ կենդանացրին ուսուցչի հիշարակը:

Տոկորենքերի 17-ին, կիրակի.- Զ. կիրակի զենի Ս. Խոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Ստեղանի վրա, Ս. Պափարազ մասրուց Մայր Աթոռի միաբան Տ. Զարեհ վրդ. Կարաղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատրարազիչ Հայր Սուրբ քարոզ խոսեց՝ «Եւ յուսացեալ եղիցոր մեր ի նա և նա եղիցի մեզ ի փրկութիւն, զի Ասպուած ընդ մեզ է» (Ժամագիրք) բնարանով:

Ս. Պափարազին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանը, Տ. Շահե արքեպոս. Աճեմյանը, Տ. Արտեմ արքեպոս. Քերերյանը և այլ միաբան Հայրեր ու հյուրեր:

Տոկորենքերի 19-ին, երեքշաբթի.- Մորոցն Թ-Էռդիկոնի քահանային, Զենոնի զինատրին, Մակարայ, Եղործուեայ և Աստելայ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ժամանեցին Երուսաղեմի հայոց Պափարազ Տ. Թորգոմ արքեպոս. Մանուկյանը և Կ. Պոլս հայոց Պափրիարը Տ. Մեսրոպ արքեպոս. Մորաֆյանը:

Տոկուեմքերի 21-ին, հինգշաբթի.- Սրբոց Խորիթեանցն և սրբոց վկայիցն Արդեմեայ և Քրիստոսիորի, և երկուց կանանցն Կոլիխիկեայ և Ալիլիխիկեայ:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարդ առավորյան ժամերգության, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապարիվ Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանի նախագահությամբ և Երուաղեմի ու Թուրքիո հայոց Պատրիարքներ Ամենապարիվ Տ. Թորգոն արքեպոս. Մանուկյանի և Ամենապարիվ Տ. Մեսրոպ արքեպոս. Մութաֆյանի ընթերակայությամբ, գեղի ունեցավ հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Ամենայն Հայոց երջանկահիշաբակ Գարեգին Ա Կաթողիկոսի նոր գեղադրված գրապանաքարի առջև:

«Եթ թող այս շիրմաքարը դառնա ոխտագեղի հավաքավոր հայ ժողովրդի համար», - դիմելով թոլոր ներկաներին ասաց Տեղապահ Սրբազնը:

Սպիրակ մարմարյա գրապանաքարի վրա փորագրված են հանգույցյալ Վեհափառ Հայրապետի անունը, ծննդյան ու մահվան թվականները և Վեհափառ Հայրապետի սիրած խոսքերից՝ «Մարդ է որ գործ գերկիր»:

Արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, միարան Հայրեր և բազմաթիվ հավաքացյալներ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանի նախագահությամբ, Երուաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոն արքեպոս. Մանուկյանի և Կ. Պոլստ հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպոս. Մութաֆյանի արքենապետությամբ, իր աշխատանքն սկսեց Գերագոյն Հոգևոր Խորիրդի նիստը:

Նիստը կշարունակվի մինչև հոկտեմբերի 22-ը, որի ընթացքում կըննարկվեն Ազգային-Եկեղեցական ժողովին վերաբերող կազմակերպչական հարցեր:

Տոկուեմքերի 22-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանի նախագահությամբ, Երուաղեմի հայոց

Պարբիարք S. Թորգոն արքեպոս. Մանուկյանի և Կ. Պոլստ հայոց Պարբիարք S. Մեսրոպ արքեպոս. Մութաֆյանի արքնապեպությամբ, իր աշխափանքն ավարտեց նախորդ օրն սկսված Գերազույն Հոգևոր Խորհրդի ժողովը:

Երկօրյա նիստերի ընթացքում քննարկվեցին Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի ընդունության նպագակով հոկտեմբերի 26-30-ը կայանալիք Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպման մանրամասները, հաս- պարվեց ժողովի օրակարգը: Քննարկվեցին նաև այլ հարցեր:

Տոկումքերի 24-ին, կիրակի.- Է. կիրակի զենի Ս. Խոսի: Գիւղ Խոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Տեղանի վրա, Ս. Պարարագ մակու- ցեց S. Դավիթ արքեպոս. Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազնը քարոզ խոսեց՝ «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոց մեզ զօրութիւն Ասպուծոյ» (Ա Կորնթ. Ա 18) քննարանով:

Ս. Պարարագին ներկա էին Կաթողիկոսական Տեղապահ Ս. Ներսէս արքեպոս. Պողապալյանը և այլ Սրբազն Հայրեր:

Տոկումքերի 25-ին, երկուշարթի.- Սրբոցն Անապատայ քահանային, և Վարոսի, և Թէոդորիկեայ և որդուց նորս, և որք ընդ նևա կարտրեցան:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Կաթողիկոսական Տեղապահ Ս. Ներսէս արքեպոս. Պողապալյանի նախագահությամբ, Երոսաղեմի հայոց Պարբիարք S. Թորգոն արքեպոս. Մանուկյանի և Կ. Պոլստ հայոց Պարբի- արք S. Մեսրոպ արքեպոս. Մութաֆյանի արքնապեպությամբ, գումարվեց Եախսկոպոսաց ժողովի խորհրդակցական նիստ:

Ժողովի ընթացքում լսվեցին Առաջարկությունները բանաձևող և Հայ Առաքեական Եկեղեցու կանոնադրության մշակման հանձնախմբերի գեղե- կարգությունները: Քննարկվեցին նաև Գերազույն Հոգևոր Խորհրդի և Եախսկոպոսաց ժողովի հերթագա գործունեությանը վերաբերող հարցեր, որի առիթով առաջարկվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հասպարել Եախսկոպոսաց ժողովի մնայուն գրասենյակ:

Քննարկվեցին նաև Եկեղեցի-պետություն հարաբերությանը վերաբերող մի շարք հարցեր: Քննարկման նյութ դարձան նաև կրթական հարցերը, որի առիթով Սրբազն Հայրերի կողմից կարևորվեց Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում կրոնագիրություն և Հայ Եկեղեցու պարտություն առարկաների ուսուցման խնդիրը:

Տոկումնութերի 26-ին, երեքշաբթի.- Մրոց Տիպիրիքեանցն, որը ի Սամուսայր կարտարեցան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատրարազ մագուցեց S. Վիզեն եպս. Այրազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատրարազից Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Որ սիրե զեղբայր իր՝ ի լոյս բնակէ, և զայթազը դուրիին ի նմա չի՞ք» (Ա Հովի. Բ 10) բնաբանով: Ս. Պատրարազի ընթացքում Ազգային-Եկեղեցական ժողովի պարզամավորները Ս. Հաղորդություն սրացան՝ ճաշակելով Քրիստոսի Մարմինն ու Արյունը:

Հավարտ Ս. Պատրարազի Կաթողիկոսական Տեղապահի նախագահությամբ և Պապրիարք Սրբազն Հայրերի ընթերակայությամբ հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կարգավոր հանգույցալ Գարեգին Ա Կաթողիկոսի շիրիմի առաջ:

Հոգեհանգստից հետո բոլոր պարզամավորները հավաքվեցին Ս. Էջմիածնի Հոգևոր Շեմարանի նախկին շնորհում՝ սիրո ճաշի:

Ժամը 14.00-ին Վեհարանի ԱԵԺ-ի նախապարհասպան գրասենյակում սկսվեց պարզամավորների հաշվառումը, որի ընթացքում արձանագրվեցին 31 երկրներից ժամանած 451 պարզամավոր:

Երեկոյան ժամը 20.00-ին Ազգային-Եկեղեցական ժողովի պարզամավորները Փիլիարմոնիայի փոքր դահլիճում ներկա գրնվեցին Հարություն Թոփիկյանի ղեկավարած Երևանի կամերային երգչախմբի հոգևոր համերգին, որից հետո մասնակցեցին նաև «Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի զրոյցները Զիովանի Կույսայի հետ» գրքի շնորհանդեսին, հանդիպում ունեցան հեղինակի և թարգմանչի հետ:

Նոկրենքերի 27-ին, չորեքշաբթի.- Պահը:

Այսօր, առավովյան ժամը 10.00-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում աղոթասացությամբ գրեղի ունեցավ Ազգային-եկեղեցական ժողովի հանդիսավոր բացումը, որից հետո այն շարունակեց իր աշխափանքները: Երեկոյան հայրնի դարձավ ընդունությալ 132-րդ Հայրապետի՝ Գարեգին արքեպիսկոպոս: Ներսիսյանի անունը:

Նոկրենքերի 28-ին, ինգօշաբթի.- Սրբոցն Սևերիանոսի Սերաստացույն, Քաքելայ ծերոյն և ուլթուն և չորից աշակերդաց նորին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը՝ նախագահությամբ նորընդիր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Նիստի սկզբում Գարեգին Բ Կաթողիկոսը ընթերցեց ՀՀ նախագահին և համայն հայ ժողովրդին ուղղված իր ցավակցական ուղերձը:

Այս առնչությամբ Ազգային-եկեղեցական ժողովը, Գարեգին Բ Կաթողիկոսի նախագահությամբ, որոշում կայացրեց հոկտեմբերի 31-ին նախօրոք նախագետական Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և զահակալության արարողությունները հետաձգել:

Ազգային-եկեղեցական ժողովը լիազորեց Եպիսկոպոսներից և բոլոր թեմներից մնկական պարզամանավորներից բաղկացած Ներկայացուցչական ժողովին՝ քննարկել և ընդունել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոնադրության նախագիծը:

Ազգային-եկեղեցական ժողովը փափագ հայրնեց, որ այդ աշխափանքը կավարդվի մինչև 2000 թ. հոկտեմբեր ամիսը:

Կանոնակարգային հարցի քննարկումից հետո, Ազգային-եկեղեցական ժողովը հայփարարվեց փակված:

Նոկրենքերի 29-ին, ուրբաթ.- Պահը:

